

957

ԱՐԿԱՆԻ Յ. ՃՈՂՈՒՐԵԱՆ

# ՄՈՒՑՈՒՆԹ ԵՂԻՆՐԶ

Ե. Գ. Ի. Բ. Գ.

Թ. Ի. Փ. Լ. Ի. Ս.

Մ. Շարաձէի, Նիկ., 21.

Тшотр. М. Шарадзе, Ник., 21.

1895

ԱՆՔԵՐ

1028

2013

ՍԵՐՆԵՐ  
1028

ՔԱ  
ՀԻՅԿ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃՈՒՂՈՒՐԵԱՆ

# ՄՈՒՆՅՈՒԱՆՈՒ ԵՂԻՍԵՐԸ

451

Ե. Գ Ի Ր Ք



Թ Ի Ք Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձեի, Նիկ., 21.

Типогр. М. Шарадзе, Ник., 21.

1895

Дозволено цензурою, Тифлисъ, 8-го Апрѣля,  
1894 года.



957  
41



1028-2013

181021



У Н Т Л С О Р

Ա.

Աչաջուր գիւղից ձիով Խաչթառակ էի գնում  
օրուայ խիստ շոգ ժամանակ: Արևը գլուխս անպէս  
կեծացրել էր, որ ձիու վրայ ննջելիս քիչ էր մնում  
գլորուէի գետին. մանաւանդ՝ երբ ձին ճանճերի  
խայթոցներից նեղացած ոտները քարերին խփելով՝  
վայր ի վեր էր անում, սույը պտտում, գլուխը  
թափահարում՝ սանձը ձեռքից խլում, յանկարծ ա-  
ռաջ վազում կամ կանգ առնում, դանդաղում ու  
էլի վազում փռուացնում...

Ձիու վրայ շոգից թուլացած, դադրած ու շըշ-  
մած լինելով՝ երբ հասայ Աղստե գետի ափը, ձիուց  
իջայ, երեսովս ջուր ճօփ տուի, բայց տաքացած  
ջրից ո՛չ գով զգացի և ո՛չ կարողացայ խմել, թէև  
ճարաւից պապակում էի:

Ձիս կապեցի գետի ափին բուսած ուռեհուռ  
ճիւղից և նօսր ստուերի տակ երեսիս վրայ ընկայ  
գետին, ինքս էլ չիմացայ, թէ քնչպէս քունս  
տարաւ: Յանկարծ մի խուլ շրբփոց արթնացրեց  
ինձ. տեսայ, որ ձիս խրտնել է գետին մօտե-

ցող մի կիսամերկ մարդուց, որը մի սափոր ձեռին կռանում էր գետից ջուր լցնելու: Աչքս բարձրացրի, հանդէպս, խճուղու վրայ մի խումբ մարդիկ նկատեցի: Կիսամերկ մարդը նրանց ընկերներին էր երևում: Նա գետի տաքացած ջրից սափորը լցրեց և դնաց ընկերներին մօտ:

Ես այլևս չկարողացայ քնել. ուշադրութիւնս գրաւեցին ճանապարհի վրայ շարժուողները: Զիս անդադար փռուացնում էր: Ես հետաքրքրութեամբ դիտում էի մարդկանց խմբին, որոնցից մինն, ինչպէս թւում էր, առաւելութիւն ունէր միւսներից ընկերներից:

Այդ առաւելութիւն ունեցողը մի փոքր առանձնացած նրանցից՝ ձեռքով կամ ձեռքի փայտով նրանց բան էր ցոյց տալիս՝ կառավարում էր:

Իրանք խճուղու փահլաները կամ մշակներն էին, իսկ այն բան ցոյց տուողը կնդդտորից (կանդուկտոր) նշանակուած փահլաբաշին կամ ուզբաշին էր խմբի գլխին:

Խճուղին սրբող մշակները փահլաբաշու առաջնորդութեամբ հետզհետէ փոշի, թոզ բարձրացնելով, իրենց ձեռքի թիւերով, բահ ու աւելնեցրով մօտենում էին Աղստեին, որի երկարութեամբ ձգուած է ճանապարհը:

Խճուղու մշակներին, այն խեղճ մարդկանց ընթերցողներն անշուշտ, եթէ խճուղիով ճանապարհորդել են, տեսած և ծանօթ կլինին: Նրանք

բոլորն էլ գիւղացի աղքատիկ մարդիկ են: Գոնէ ով որ անցել է Աղստափից դէպի Երևան, Ալեքսանդրապոլ, Ղարս և ուրիշ շատ կողմեր, խճուղու փակելի վրայ նկատած կլինի քարակոյտի շէղջի առաջ նստոտած աշխարհից մոռացուած, խեղճ, քեասիբ մարդիկ, որոնք աղքատութեան երեսից, կեանքի դառնութիւնից մաշուած, չորացած, օսկր դարձած մարմնի վրայ հագած ունին մի-մի ամիսներով ջրի ու սապնի երես չտեսած, կեղտ ու ժանգոււմ շաղախուած, որդնալից, անծօտ ու պատռոտուած, կոշտ՝ կէչ դարձած շիւլայ շապիկ, նոյնալիսի կտաւի կամ կանեփի վարտիկ, որոնց հագար ու մի ծակուծուկից այլակերպուած միսները երևում է. գլխներին հուպ տուած թանի կամ մի քանի ալլ գոյն ստացած աղլուխ՝ թաշկինակ կամ ծածկած գառնամորթ մեծ-մեծ փափախներ, որոնց տակ ճիւղում, ճնշում է վիզները. ոտներին հագած ունին չոր, դանդուռութ ու տրղլափ դարձած, տրիսետենները քանդուած կաշուէ տրեխներ և գծծուած բրդէ պաճիճ ու գուլպաներ:

Նրանք, քեասիբները, սառնաշունչ ձմեռը համարեա մերկ, դողդողալով՝ ծնկներն իրար թակելով, վրվրթացնելով, ամբողջ մարմնով կապտացած, սառած-սքեառած, աշխատող ձեռքներին փչելով, ոտներնին ձիւնի մէջ բարձրութեամբ անելով, իսկ ամառուայ շոգին արևից արաբի կամ նէգրի գոյն ստացած, կիսամերկ մարմնով, քրտնքում ջուր-

կտրած, կոշտացած ձեռքերով թի, բա՛հ, լո՛ւմ, զազմա, քլու՛նգ ու աւիլներ ունին բռնած, և՛ կամ միմի մուրճ առած, շէնքներում ամուր քարէ սալ, որի վրայ դնելով մանր ու միջակ քարերը, երկու ոտի թաթերը դէմ տուած՝ տնքալով, վաչալով, կեանքները մաշելով՝ փշրում-խշրում են, կովում են այն քարերի հետ շարունակ, շէղջ ու խիճ դարձնում նրանց և փռում ուղիի վրայ:

Մաշուած դէմքները թող ու կեղտում մտած, շատ անգամ էլ քողցած, երբեմն միայն չոր ու ցամաք, այն էլ գարու կամ կորկի ճաթ հացով, հեռու ջրից՝ պապակելով՝ ծամում-ծամում, զկըռտալով, կիսախեղդ լինելով՝ հազիւ կարողանում են կուլ տալ ստամոքս ուղարկել չոր զուռութ թիքապատառնները՝ պատառոտելով իրենց կոկորդը, իսկ նրանց ետեւից՝ ըմպելիների փոխանակ, որ հարուստներին ու աղաներին — վաշխառուներին է վիճակուած, կուլ են տալիս՝ կազմ դարձած կպչող թուրք...

Խեղճ ու քեասիբ մշակները, այդ թշուառ ու անմեղ արարածները, ամբողջ օրը հանգիստ չունին, կիրակի էլ չունին. նրանք շարունակ քաշ են գալիս, քար ու փետ են ջարդում, հարուստի՝ վաշխառուի գրպանը լցնում և իրենց միայն՝ օրական պարէն — չոր ու զուռութ հաց վաստակում: Իրանց միակ ուժով տուն, ընտանիք կտուավարում, հարկ վճարում. եթէ իրան գիւղացու խօսքով ասենք, «մի կտոր հացի համար քար ու փետ են կրճում,

հող ու մոխիր լիզում»: Այդ խեղճերից շատերն էլ, որոնք մահառիթ թող շնչելով ճանապարհ են սրբում, կամ ուսով կամ ասլկաներով հող ու քար են կրում՝ խճուղու վրայ, նրա խորթ ու բորթ տեղերը լցնում, — մի խօսքով անվերջ կերպով տանջում, չարչարում:

Բայց ահա աղաները, մշակի մարդկւոյին սպաւկերն ունեցողները, քէֆները քեօք, փորները դուրս գցած, հագած, կապած — կօշիկները մինչև ծնկները քաշած, դրամով լի սակվոեաժը ուսը գցած, քաթանի գլխարկով, դեղին կոճակներով զարդարուած, իրանց տիկիներին հետ նստած, քամու պէս խաղացող ձիեր լծած կառքի կամ եռանգակի մէջ իրենց հով ու զովին տալով, զը՛նգ — զը՛նգ, զը՛նգ... անցկացան պատրաստի ճանապարհի վրայով դէպի այս և այն քաղաքը՝ զովաշունչ ամարանացներում քէֆ քաշելու, թուղթ խաղալու, մուզիկայի ներդաշնակ ձայնի տակ պարելու համար: Նրանք անցկացան առանց մշակների վերայ ուշք դարձնելու. կարծես այնտեղ մարդիկ չէին կանգնած, կարծես նրանք էլ այն քարերն ու խճերը լինէին, որոնց վրայով գլորում էին ամարանոց գնացող աղաների թեթև կառքերի անիւները:

Բ.

Խճուղու ավերին, տասից տասնևհինգ վերստից յետոյ, եւրոպական ճաշակով արքունական շինու-

Թիւններ կան, որոնք խճուղու «կազարմա» են կոչուում: Խճուղու ինժեներները իւրաքանչիւր «կազարմա» պահ են տալիս մի կանգուկտորի, որի հսկողութեան տակ է դնում խճուղու մօտաւորապէս 10—18 վերստ, քիչ աւելի կամ պակաս տարածութեան մաքրութեան պատասխանատուութիւնը: Կանգուկտորը գիւղացի կամ քաղաքացի հասարակ հասկացողութեան տէր մարդ է (մեծ մասամբ, մեր տեսածները, գիւղացիք են եղել), որն իմանում է փոքր ինչ գրել, այսինքն՝ այնքան գրել, որ կարողանայ ինժեներներին հաշիւ տալ, թէ՛ ամսական սրբան մշակ է վարձուել, իւրաքանչիւրը քանի օր է սրբել, կամ քանի սաժէնակոյտ խիճ է պատրաստել և այլն:

Բացի դրանից, կանգուկտորն է ստանում ինժեներներին մշակների վարձը և բաժանում նրանց, որի մէջ նա մահացու մեղքեր է գործում, շատ անգամ իւր օգնական փահլաբաշու հետ միասին:

Ինքը կանգուկտորն իսկապէս փահլաբաշի է. նա պէտք է ամբողջ օրը հսկէ մշակներին և բանացնէ — առանձին մասնագիտութիւն կամ առաւելութիւն չունի նա, բացի գիր գիտենալուց... Բայց արի տես աշխարհիս քոռութիւնը, որ երբեմն ծառաներն էլ, երբ փորները նիւթ է ընկնում, հանգամանքից օգուտ քաղելով, իրենց համար ծառայողներ են վարձում կամ վարձուածներին անխիղճ կերպով ծառայեցնում...:

Այն օրը, երբ ես հանգիպեցի մշակներին, ինձ

արդէն վաղուց ծանօթ վարք ու բարքի տէր կանգուկտորներին մէկը կամ սովորականն ասենք՝ «աղայ կնդդտոր»-ը բացակայ էր. նրա փոխարէն մշակների գլխին կանգնած էր նոյն մշակներից մինը, որն արտօնութիւն էր ստացել «կնդդտոր աղայից և տգիտաբար, համարեա, ինչպէս ասում են, «ընկոյզ էր կոտրում խեղճ մշակների գլխին», որովհետև դա ևս վարձուելով կնդդտորից, աղայի գիրք տուած իրեն՝ ուղղում էր արժանանալ այն աստիճանին:

Այդ օրը շարունակ ճանապարհորդներ էին անցնում դէպի Դիլիջան և ընդհակառակն՝ դէպի Աղստափայ:

Իւրաքանչիւր սպիտակ գլխարկով անցկացող անձանօթ, դեղին կոճակաւոր կամ սպիտակազու գլխարկաւոր... ճանապարհորդի փահլաբաշին գլխարկը վերցնում բարևում էր, ցոյց տալով մշակներին, որ ինքը նրանց ամենքին էլ ծանօթ է, և, բարկանում էր բանուորների վրայ, որ նրանք էլ գլուխ վայր բերեն, երկրպագեն ճանապարհով անցնող՝ դէպի իրենք անտարբեր անցնող... ցարներին...:

Փուջ կենդանին, ինքը պարապ, հանգիստ կանգնած իր քէֆին, խեղճ մշակների գլխին կրակ էր վառում ասելով.

— Դէ, կաղնիլ միք. տենըմ էք աղայ մարդիկ են անցկենըմ. նրանք մեծ աղին խաբար կտան, թէ մշակնին պարապ-սարապ նստած ին: Դէ հա՛. չէր որ փող էք ստանըմ... — սատանայական խօսքերով

ասում էր փահլաբաշին և նեղում դադրած մշակներին:

— Վայէ, Մակի ապի, դէ էս ա կէս օր ա դառել, ճաշթող արա, սոված սրտներս թլկտըմ ա, միքիչ հաց ծամենք է,— նեղացած և յոգնած տրտուկներ էին անում մշակները:

— Քիչ ժանգ ու ժէն արէք է. կէս օրը սրդեան ա. հլա ըրեգնակը թեքն ա կաղնած....

— Մակի ապի, ընչի՞ ես գեանի սհենց չըրջարըմ մեզ. ըրեգնակը գլխներիս տուել ոտներնըմս դուս ա եկել, դու ասըմ ես թէ հլա թեքն աս:

— Ս. քոռ հառամդադա, քիչ ոխիդ արա, քիչ բնդով չիկուծին արա, թէ չէ՛ ըրիկունն աղէն կը դայ խաբար կտամ, դուս անիլ կը տամ շատ խօսողին.... էս անտերի հըմար փող ենք առնըմ, աթար խուլ չի, բանեցէք էլի, — փահլաբաշին ասաց բարկացած և ձեռքի փայտը գետնովը տուեց:

Մշակները քիչ ժամանակ լուռ ու մունջ շարունակեցին սրբել, իսկ Մակին խոթուած դէմքով:

— Ետ վալիսը մարդ դի դուս անիլ տալ հա. — կրկնեց մշակներից մինը, աչքի տակով նայելով Մակինի խէթումէթ աչքերին ու դաժան դէմքին:

Ուղիղ կէս օր էր. արևը տապում էր, հող, քար ու առազ այսէս էին կեծացել, որ մարդ ոտները գետնին դնելիս զգում էր, թէ խաշումէ: Քամին առ ժամանակ բոլորովին կտրուած էր. ուռիների թույլ տերևները սլարել էին. արտերի հա-

սած, կծղած ժամանակն էր. արևասէր մրջիւնները, ինչպէս ճուռէքն ու մորեխները... իրենց զանազան ձայներով մի ընդհանուր թշուոց էին սարքել. ճանճերը հօ մարդու աչք էին մտնում շարունակ, մի րոպէ առանց ձեռքը շարժելու հանգիստ նստել չէր լինում. կիզիչ արևի տակ, մօտիկ դաշտերում երկրագործ մշակներն ևս վաստակում էին յոգնած թուլացած. մարդ որ խոտերի միջով ոտները փոխում էր, միքանի տեղ երեսի վրայ սլկհում շրջակալէ վայր էր ընկնում: Մօտիցս խլէզ (մողես) ու լորտուկները խլպտալով այս ու այն կողմն էին սողում, խշտացնում, քարի, փայտի ճեղք ու խոռոչը մտնում, գլխները դուրս հանում, էլի մտնում: Գետափերը դուրս եկած ջրի կրեաներն ու գորտերը մէջէմէջ կռկռացնում, թռչում՝ չլրփ, ջուրն էին ընկնում, կրկին դուրս գալիս փր, խոտերի մէջ մըտնում և զանազան ձայներ հանում: Ես ուռենու տակ թինկը տուած՝ ուզում էի միևնոյն ժամանակ զգոյշ մնալ, որովհետև վախենում էի, թէ սարսափ ազդող սողուններից մինը յանկարծ ծոցս մտնի: Ես շուռ եկայ մէջքիս վրայ պառկեցի, աչքերս ծառի ճիւղերին էի գցել. մին էլ յանկարծ մեկնած ձեռքս մի անսպասելի սառուսուռ զգաց: Վայ, վերթուայ տեղիցս, նայեմ տեսնեմ որ մի սև օձ վերևից զզղընած սողում է դաստակիս վրայով. օձը ձայնիցս սթափուելով ոտներիս տակ միքանի պտոյտ արաւ և ուզում էր մկան ծակը մտնել, ես վախեցած առայ մի մեծ քար և բարկութեամբ ջախջախեցի

Ադամի թշնամու գլուխը ու փայտի ծայրով բարձրացրի ուռենու ճիւղից թառ տուի:

Այդ միջոցին Մակի ապին մշակներին ճաշթող արաւ և ինքը եկաւ ինձ մօտ: Ես նրան ցոյց տալով օձի ջախջախուած գլուխը, պատմեցի Ադամի ու Եւայի պատմութիւնը, բացատրեցի խորամանկութիւնը և խօսքս տեղը յարմարեցնելով ականարկեցի և իրեն օձ լինելը... վերջացնելով այդ, ուզում էի փահաւազաշուն միքանի հարցմունքներ անել, բայց անպիտանը զգալով ականարկութիւններս գլուխն ռազ արաւ գնաց վերև, գետի խոր տեղում լողանալու: Իսկ ես մօտեցայ իմ ուշադրութիւնը գրբաւող մշակներին, որոնք ինձանից քիչ հեռու, ճանապարհի տակ՝ մի թմբի ետև պատասպարուած արևի կեղող ճառագայթների շանթերեց, չոր ու ցամաք հաց էին ծամում ու կեօլացած՝ ջրից խմում....

9.

Բարի աջողում ձեզ, մշակ եղբայրներ:

— Այ՛ն Աստուծոյ ահատ ու անպակաս բարին քու տանն ու տեղին. համեցէք այդայ ջան, հաց անոջ արայ, մի քանի երիտասարդներ տեղներից վեր կենալով հրաւիրեցին ինձ: Ես նրանց նախ ծանօթացրի անձիս հետ որ աղայ չեմ և ապա՝ շնորհակալ եմ, ասեցի ու մի քարի վրայ նստեցի:

— Աղայ ջան, քաղքըցի, կրթացող մարդ ես ըրեւրմ, ասա տենանք որտեան ես գալիս, որդի

ես գնրմ. աշխար մանեկած մարդ ես, ինչ նոր-նոր խաբարնի կայ, — հետաքրքրութեամբ հարցրեց ըստ երևոյթին մի ծեր, շլինքն արեառ մըշակ, որի կուրծքն ու թիկունքը արևից սևացել սև սաթ էր դարձել և պատռոտուած հալաւի միջից մարմնի դուրս ցցուած ոսկրներն երևում էին ինչպէս չոր տախտակ: Խեղճ մշակն ուրիշ բաց տեղ էլ ունէր. ամօթխած աշխատում էր ծածկել, որ չը տեսնեմ: Նրա քրտնած մարմինը ամօթխածութիւնից դարձեալ քրտինք գցեց, բայց նա բնական խելքի ու ձերքի տէր էր երեւում իւր աղքատիկ ձորձի մէջ...:

Մինչև ես նրա և նա ինձ հետ կը ծանօթանար, չափից դուրս դադրած վաստակաւորները նուազեցին քնից և իւրաքանչիւրը մի կողմը, խճերի վրայ պառկեցին ու սկսեցին քնի մէջ հանգստութեամբ խռացնել:

Ո՞րտեղացի ես, բիձայ, անունդ ինչ է:

— Ըղզնեցի եմ, անըմս էլ քե ծառայ Ակոբ ա: Գ՛ն՛ւ ի՞նչ ես ըղբրացու ջան, հարցնիլն ամօթ չիլ, — ասաց նա ինձ:

— Ես խաչթառակցի եմ, — պատասխանեցի:

— Ի՞նչ զունլուղի մէջ ես:

— Վարժապետութիւն եմ անում:

— Երնակ քե, — սիրտը վեր խմելով ասաց նա և խորը հառաչեց, բայց պատճառը չբացատրեց. անշուշտ ինձ շատ բաղտաւոր մարդ կարծեց երևի:

Ա՛կոբ ապէր, ինչպէս երևում է, տարիքը

վաթսուներկ ց մօտիկ պէտք է լինին. դու ծեր մարդ ես, ինչո՞ւ որդոցդ չես բանեցնում այս ճանապարհի վրայ. մեղք չես, որ ծերութեանդ հասակում ևս այսպիսի մի գփուար աշխատանք ես յանձդ առել:

— Վարժապետ ջան, քե ծառայ՝ մեծ, հասած որդի չունեմ, չիմ (բոլորը) մանր ընտէք են:

— Ակոր ասի, երևում է շատ ուշ ես ամուսնացել, որ որդիքդ այդչափ մանր են, դու արդէն ծեր ես:

— Հը՛հ, հը՛-հը՛, — քմբըծիծաղ տալով ասաց խեղճ Ակոր ասին. — Ես ընդամենը քառսուն տրեկան եմ:

— Վահ, զարմանում եմ, այդ թ՛նչ ես ասում. ասա ինչո՞ւ այդպէս զառամել ես:

— Ե՛... վարժապետ ջան, ասրուստի դարդը մարդի քսանըհինգ տրեկան հասակըմն էլա ծերացնում... Հլա մի մտիկ տուր էն կողքի վրայ խտոր ընկած տղին, քսանօխտը տրեկան ա. տես ինչպէս ա սիպտակացել. սրանք չիմ էլ ինձ պէս քեասիբ, կորած, շլինքներիցը հետ պարտքըմ թաղըած մարդիկ են:

— Ինչո՞ւ էք այդպէս աղքատ, ո՞վ է ձեզ այդպէս աղքատացրել, չէ՞ որ դուք ամենից շատ էք չարչարուում, տանջուում...

— Ե՛, արևիդ մատաղ, հլէ ո՞վ ասես, ով վեր ա կենըմ տեղիցը, մեր ջանն ա ուտըմ. ո՞ր մնի անըմը տամ, ո՞ր մէկէլինը թողամ, քեօխվայ, գզիր, քեաղխուղա, հարուստ, ձիաւոր... եասաուլ, գեղի

ու դրսի դատաւորնին... և հէնց մեր էս անիծած փահլաբաշին ու կնդղտորը. ամենքն էլ միս ուտող ղուշեր են, մենք նրանց հըմար ջամդաք, լէշ. ինչքան ուզըմ են մսերնիցս ձիգ են տալի... Վարժապետ ջան, կոց մի ծկրակեմ դէս ու դէն. էն խբըրբզանը եկած անգած դնելիս կլի ըստեղէք, — կասկածաւոր կերպով ասաց Ակոր ասին և հագիւտեղից վեր կենալով զնաց գետի կողմը, նայեց, ետ եկաւ և ասաց.

— Սրանք որ կան, անօրէն մարդիկ են. մի անմեղ բանի հըմար մշակութենից դուս կանեն. լղացել դուս ա եիել ուռըբու տակին փըրսըւեր ընկել քնել. հմի մենք կտրող ենք աներկիւղ խօսալ, գրից անել:

— Ակոր ասի, այդ փահլաբաշին էլ ձեզ պէս մշակ մարդ է, ինչո՞ւ դուք այդպէս քաշուում վախենում էք նրանից:

— Վարժապետ ջան, դա մեզ պէս մարդ չի. դա քիչ հըսկացող ա. բընըգլխի ա ու մեր կնդղտորի թագուն բաների հետ ծանօթ. հէնց դրա համար էլ կնդղտորը դրա քէֆին դիպչըմ չի, որ ինչա՛ իրան թաքուն-թաքուն բաները բաց չանի...

— Ի՞նչ թագուն — գաղտնի բաներ ունին կընդըղտորները:

— Ե՛ն, որ մեր տները քանդըմ են՝ հալալ աշխատանքնիս կտրըմ են: Տասներկու տարի ա մշակութին եմ անըմ. սրտեզ զնացել եմ, ո՞ր կնդղտորի կշտին բանել, ծառայել եմ, մինն էլա խտակ,

բարեհոգի, ձեռք թամուզ մարդ չի լել, չիմ քաշող, չիմ ուտող են մշակից...

— Վահ, միթէ այդ անպիտանները ձեզ պէս մարդկանց դուր քրտինքի վաստակից էլ մասն են հանում իրենց համար, միթէ այդքան մեռած խղճի տէր են դրանք: Պատմիր, աստ տեսնեմ, ինչպէս են կտրում ձեր ուճիկը...

— Սմասկան ստանում ենք օխտը մանէթ:

— Այդպիսի տանջանքի մէջ եօթը մանէթ. խեղճ մարդիկ, ճշմարիտն ասա, այդքան:

— Հն, հէնց էտքան, աւել տալիս չեն:

— Ո՞վ է վճարում ձեր ամսավարձը:

— Աղէն:

— Ո՞վ է այդ աղէն:

— Կնդդտորը:

— Կնդդտորը՞. ո՞րտեղ է նա այժմ:

— Ի՞րանց տանը, իրանց բանին ու գործին:

— Ի՞նչպէս թէ իրանց գործին, նա միշտ տանն է լինում:

— Չէ:

— Հայտն:

— Նա տանը մնալու ըրաւունք չուի, ամա դէ թագուն տեղ ա, ո՞վ ա հրցնում: Մհ, վարժապետ, շատ մուռտառն ա անիծածը. էն ա գիդըմ ա, թէ ո՞ր օրն ա անցկենալու մեծ աղէն՝ (ինժեները) և էն օրը մեզ վրայ կաղնած, մինչև անգամ թին ձեռին օգտըմ ա մեզ, որ մեծ աղէն տենայ, շնորհակալ լի նրանից. մնացած վախտը գնրմ ա տա-

նը, շրէաքի տակին արխէյին պորտիկ անըմ ու դոնլուղի վախտը դոնլուղն ստանըմ...

— Լաւ, փահլաբաշին ո՞րքան է ստանում:

— Նա. նրա տունն Աստօծ քանդի, նա համ մեզանից ա քաշըմ, համ էլ կնդդտորից էրկու իրեք մանէթ մեզանից աւել ա ստանըմ:

— Վահ, միթէ եօթը մանէթից նրան էլ էք բան տալիս և ինչո՞ւ համար:

— Ի՞նչ անենք, մեր ու կնդդտորի մէջ խըրըբզանութին ա անըմ, գանգատըմ. նա էլ իրեն սարփի խաթեր, ով որ օխտը մանէթից պակասով ա բանըմ, նրան ա ընդունըմ. դրա համար էլ մենք ճարներս կտրած մանէթից մի-մի շահի ուռըվաթ էլ փահլաբաշուն ենք տալի, որ չարախօսութին չանի, դուս գցիլ չտայ...

— Կնդդտորն ի հարկէ աւելի շատ ստանալիս կը լինի:

— Վարժապետ ջան, մի քիչ համբերի, մի մտիկ տամ, անիծածը կը գայ անգամ կը դնի ասածնիս կը մանայ՝ կնդդտորին խաբար կը տայ...

Խեղճ Յակօբը կրկին զնաց գետի կողմը, նայեց, վերադարձաւ և ժպտաշուրթն ասաց.

— Չարթնել ա, ծառի տակ նստած քթիւ ա անըմ — փափախն ու շորերը պտըմ ա:

— Ահօբ ապի, կնդդտորը որքան է ստանում. կրկին հարցրի:

— Նրա դոնլուղին չափ չկայ, գիդըմ չենք, ասըմ են քսան մանէթ ա ստանըմ ընջներաղիցը, ա-

1028-2013  
HSH  
(954) 4



մա էրկու էտղադար էլ մշակներից պոկելիս կլի...

— Ուրեմն նա վաթսուն մանէթ փող կը լինի ստանալիս, — ասեցի ես:

— Ե՛, աւել առնելիս կլի, վարժապետ ջան, դեղըմն էլ մարդ չի մնացել, որ էտ անաստուածին պարտական չը լի...

— Կնդդտորը այստեղացի է թէ...

— Հրաման քե, մեր քոռ Զիպուլի տղէն ա, էրէկ մէկէլ օրը մի տկլոր գաղ էր, հմի էտ կնդդտորու թենովը աղայ ա դառել, մշակներից կերած ուռչվաթովը ամենի մօտ էլ խօսքն անց ա կացնըմ. դեղմն էնդայդի հմբարտ-հմբարտ ման ա գալի, որ հետն էլ խօսըմ չի...

— Լաւ, այդ թո՛ղ, բայց միթէ ինժեները ձեզ չի ճանաչում կամ միթէ նա ամեն մէկիդ ոռճիկը չի որոշել:

— Գիդըմ չեմ:

— Ինչո՞ւ, չէք հարցրել:

— Վարժապետ ջան, գիր չենք գիդըմ, գակուն չենք հսկանըմ, հըրցնենք, չհըրցնենք, նրանք իրանց բանը լաւ գիդան:

— Կնդդտորն ինչքան կաշառք ուտելիս կլի ամեն մէկիցդ:

— Նա ասըմ ա, որ ընջներիցն ինքը ութ մանէթ ա ստանըմ ամեն մէկիս հըմար. ետոյ՛ ութից մինն ինքն ա վե կալնըմ, օխտը մեզ տալի:

— Ուրեմն ինժեներ աղէն այդ մասին խաբարու թիւն չունի, այդ կաշառակերու թեան մասին

դուք նրան ոչինչ չէք ասել, չէք գանգատուել:

— Չէ:

— Ինչո՞ւ. չէ որ ձեր արդար վաստակն ուտում են:

— Էտ մենք էլ ենք գիդըմ, ամա քեասիբու թենի մէջքը կոտրի, վախըմ ենք թէ կնդդտորը հետերնիս ինատ ընկնի, դուս անի:

— Դո՛ւք պէտք է աշխատէք նրան դուս անել տալ, իսկ դրա համար հարկաւոր է ձեզ, որ բոլորդ միաբանուէք ու այդ մասին մի խնդիր տաք ինժեներին:

— Լաւ ես ասըմ, վարժապետ ջան, միաբանութիւնը լաւ բան ա, ամա քեասիբ մարդիկ ենք եղողներնիցս վախըմ ենք:

— Բոլորովին մի վախենաք, ես էլ ձեզ կ'օգնեմ:

— Ա՛խ, էրնակ կլի, ո՛ւր ա, որ մի տհէ բան անես, ոտներդ կը պաչենք. էսքան տարի ա աշխատը՝ քար ենք կրծըմ, թո՛ղ ենք կուլ տալի... էլի սղքատ, սղքատ, սղքատ...

— Քանի տարի է, որ այս ճանապարհի վրայ մշակութիւն ես անըմ:

— Դրուստ տասը տարին էս եկող՝ նախարարութիւն պասին թամամ կլի:

— Տասը տարուց առաջ էլ այդ միւսնոյն չափով էիք ոռճիկ ստանում, թէ աւել կամ պակաս:

— Չէ, սրանից հինգ տարի առաջ Դիլու (Դիլիջանի) տակ Կարմիր ճալի կնդդտորը, Աստօժ հո-

զին լուսաւերի, խի՛ մի քարեհոգի, դարդիմանդ, քեասիբի դադրն իմացող մարդ էր. նա՛ միայն տասր, տասներկու մանէթ փող էր տալի ամեն մի մշակիս. նրանից ետը էտ բանն էրազ դառաւ մեղ հմար, էլ ո՛չ մի կնդդտոր օխտը, ութ մանէթից աւել չի տալի, ըրեւմ ա թէ՛ իրանք են զահրմար անըմ. — ասաց քնտեղից նոր զարթնած Սաքի անուենով մի հասակն առած մշակ՝ ընդհատելով Ակոբին:

— Ուրեմն ձեր այժմուայ կնդդտորն այդպէս անգթաբար է վարուում ձեր արդար վաստակի հետ:

— Հրաման քե, տհենց ա անըմ:

— Լաւ կը լինէր, որ ես այդ կաշառակեր անպիտանին տեսնէի թէ ի՞նչ պատկերի տէր է...

— Էս օր չրիւքշաբթի ա, կարելի ա, որ գայ...

Եւ, մինչգեռ մենք շարունակում էինք մեր պարզ խօսակցութիւնը, տեսանք ահա՛ գետի կողմից արխալուզն ուսովը դցած, գօտին չկապած, փահլաբաշի Մակին սրտատրոփ, համարեա գլխապատառ լինելով, մօտիկ արտը ոտի տակ տալով՝ շտապ-շտապ, գնդակի նման հասաւ քնած ու զարթնած մշակներին և անախորժ ձայնով գոռաց.

— Ե՛կաւ, եկաւ, վե՛ կացէք, լե՛ղ արէք, եկաւ, աղէն եկաւ...

Մակին աքացի տուեց այս քնածին, այն նրնջողին և քշեց դէպի խճուղին:

— Հը՛, լեղո՞վ-լեղով բանեցէք, կռներդ ժաժ տուէք: Խե՛չո, վե՛ կալ էն քարերը, եկաւ, հահահ,

Թիդ ժաժ տո՛ւ: Հանէս, սրբի՛ Ա՛, կուռդ խուկո՛րած չի...

Սրեգակն արդէն փոքր ինչ թեքուել էր, և տաք քամին հազիւ կարողանում էր թող բարձրացնել: Խեղճ մշակները բանելուց յոգեել էին. հազիւ կարողանում էին շարժուել, տատանուել, դիմացից կնդդտոր աղէն գալիս էր, իսկ փահլաբաշին շարունակում էր իւր աղուէսի դերը կատարել:

— Սղէն ձե՛զ ա մտիկ տալի, դէ հա՛, տենանք ո՞վ ա սիրըմ աղին, ո՞վ ա ղոչաղուլթին շանց տալի, ո՞վ ա ղուր գալի կնդդտորին, հահահ: Սաքո ապի, թիդ ժաժ տու, ղալբուլթին մի անիլ, աղին ասիլ դեմ ըրիկունը քե մի մեծ ստաքան արաղ խըմըցնի: Մշակներն ստիպուած աշխոյժ ստացան և խճերը խրթխըրթացնելով շարուեցին ճանապարհի երկարութեամբ:

Ես երկու կողմին էլ դիտում էի լուռ կացած, իսկ Ակոբ ապին ինձ աչք-ուռքով էր անում՝ ցոյց տալով փահլաբաշու աղուէսութիւնը:

Պ.

Մշակներից մի վերստաջափ հեռու, դաշտի երկայն ճանապարհով, զոնտիկը ցցած գալիս էր կնդդտոր աղէն և նրա ետևից մի մշակ, որի ուսին մի սափոր կար և ձեռին, ինչպէս երևում էր, թաշկինակում կապած հաց, աղալի համար:

Կնդդտոր աղէն հեռուից նկատեց ինձ: Ես

Թիփլիսից նոր ամարանոց էի գնացել Ղազախ և ամարային սպիտակ շոր ունէի հազիս ու սպիտակ գլխարկ. նա կարծեց թէ պաշտօնական անձն եմ. ուստի, յանկարծ, կարծես երկիւղած, քայլերն արագացրեց և զոնտիկն իջեցնելով գլխից՝ փակեց, կողքնուվազր բռնեց. բայց, երբ մօտեցաւ, մի քանի քայլ հեռու արդէն, որ ինձ ճանաչեց, կրկին զոնտիկը փռեց և սկսեց դարձեալ ծանր քայլել դէպի ինձ:

Մշակների դառն աշխատանքը կլանող կնքըղտորը իւր տարօրինակ նորաձևութեամբ մինչև անգամ ուզում էր ինձ էլ զարմացնել, ինձ էլ ցոյց տալ, որ ինքը թէև ուսում չունի, լուսավոր աշխարհ չի տեսել, բայց արդէն լուսաւորուած մարդ է, որովհետև իւր մի քանի ամսից առաջ ունեցած ջուլն արդէն փոխել էր այսպէս ասած՝ մեծամեծների հազուստի:

Բայց տեսնենք թէ՛ ինչ էր այդ նորաձևութիւնը կամ նորամտութիւնը:—Նա, նախ իւր առաջուայ՝ արևից սևացած երեսը պահում, պաշտպանում էր մի հին, խունացած, կոթն ու պողր կտարած, ճիպոտներից երկուսը դուրս պրծած զոնտիկի տակ, որը ճխլուած, թորշոմած Կոթուկի կամ Բլղբղանի \*) տերևի ձև էր ստացել. դրա

\*) Կոթուկն ու Բլղբղանը լսյն տերևով բոյսեր են: Առաջինի արմատն ու զօնն է ուտուում, երկրորդի միայն զօնը:

տակ երևում էր նրա այլանդակ դէմքը, որի անշնորքութեան պատճառ կարելի էր համարել նրա անիծած կեռ, ծակերը լայն, յօնքերի մօտից ճրկուած մեծ ու բուլթ քիթը, որի սիւնեակը կամ տանգը դէպի ինքն էր քաշել վերին անձոռնի շրթունքը, իսկ դրա տակից հազիւ սպիտակ գոյն էին ցոյց տալիս նրա սեսլաձև ժանգոտած ժանիքները:

Նա իւր առաջուայ, երբեմն ուլի, երբեմն ոչխարի մորթուց կարած կամ աւելի լաւ է ասել՝ բնդբընդորած մութալ փափախի տեղ՝ իւր կոնաձև, մեծ գլուխը ծածկել էր չգիտեմ որտեղից գտած և կամ ողորմութեամբ բաշխած զոնտիկի պէս խունացած, ձիթի գոյն ստացած շլապկայով, որի մեծ, քերուած, տեղ տեղ էլ կարմիր կաշին բացուած կզրուկից բարձր երևում էր մի ծակ, որն իսկապէս հաստատում էր, թէ ժլատ կնդդտորն այդ գլխարկը մի որևէ աստիճանաւորից է խնդրել և կամ դէն ձգած տեղից վերցրել, իսկ այդպիսի գբլխարկով մշակներից կնդդտոր աղայ պատուանունն էր վաստակում՝ նրանց հալալ աշխատանքի հետ միասին:

Նա իւր օյմէն պոկուած կոշտ շալի չուխի տեղ՝ հագել էր երկայն սիւրտուկ, որի առաջից շարուած էին մի քանի հատ պղնձէ դեղին, սպիտակ, սև և այլ կոճակներ, որոնցից երկու հատ էլ տարզի վրայից էին պսպղում:

Կնդդտոր աղէն իւր լայն, պարկանման, կոշտ

ու գծուծ շալէ շալուարի տեղ՝ հագել էր նեղ, սև մահուդէ, ետևը ծակուծուկ շալուար, որի փոխկերքը կարծես թեզէփի մէջ թրջուած լինէին:

Տրխետէնները կտրտուած տրեխների տեղ կեցել էր մինչև ծնկները հասնող ճտքաւոր կօշիկներ և վերջապէս, ձեռքին բռնած էր իւր առաջուայ կոմբալագլուխ բիրդ խոզարածի գաւազանի փոխանակ մի պողպատէ ձող, որով քայլելիս անդադար զարկում՝ չքիչխկացնում էր քարերին:

Կարճահասակ կնդրտոր աղէն կուզն և ջհուդի սև ու նօսը մորուսը ցցած, դեռ մի քանի քայլ հեռու ծանօթութեան ժպիտ ցոյց տուեց ինձ, ապա մօտեցաւ և աղայաբար ձեռք տալով ասաց.

— Օ՛. բարով, Սեդրակ, բարով, էտ ո՞ր քամին ա պտտել քե... հեռուից որ տեհայ, սիրտս լքլքոցն ընկաւ, հէնց գիդացի, թէ մեր մեծը՝ ընջներ աղէն ես, եա թէ չէ՝ պրիստաւն ես... Հը՛, ո՞նց ա, հաւսն էս մշակներիս. ձեր վարժապետութիւնն ա դժար, թէ մեր մշակութիւնը...

Ես արդէն ճանաչեցի, թէ ո՞վ է եղել խեղճ բանուորների կնդրտոր աղան: Ձերը դժուար է. — պատասխանեցի և լուռ կացայ, իսկ նա ինչ որ գլխումը կար, սկսեց դուրս տալ—պարծենալ:

— Մեր ընջներ աղէն ինձ ամենից շատ ա սիրըմ, շօսէն լաւ եմ պըհըմ. նա տասնուհինգ մշակի գլուխ ա կընըցրել ինձ. բոլամա էլ դոնլուղ եմ առնըմ նրանից...

— Իւրաքանչիւր մշակի ո՞րքան վարձ ես տալիս. երբ այդ հարցը գլուխս ցաւեցնող կնդրտորին տուի, խօսքն ընդհատեց, գոյնը փոխեց և մի փոքր կարմրելուց, տատանուելուց յետոյ՝ պատասխանեց.

— Ամեն մնին օխտը մանէթ:

— Շատ քիչ ես տալիս. ես կարծեմ օրէնքով դրանց տաս-տաս ըուբլուց աւելի պէտքէ նշանակուած լինի: Իսկ քո ուռծիկը ո՞րքան է:

— Ես եռսուն մանէթ եմ ստանըմ:

— Երեսունից աւելի չէ՞ս ստանում:

— Չէ. — պատասխանեց նա կեղծելով, թագցնելով:

— Գու շատ ես ստանում. ես գիտեմ, որ ո՞չ մի տեղ, ո՞չ մի խճուղու քեզ պէս կնդրտորի օրէնքով շնտ-շնտ՝ քսանուհինգ ըուբլուց աւելի չեն տալիս, ապա ո՞րտեղից է աւելի ստացածդ:

— Ես շատ վախտ ա, որ ծառայըմ եմ է...

— Փահլաբտշիդ ո՞րքան է ստանում:

— Տասը մանէթ:

— Ինչո՞ւ. չէ՞որ նա էլ նոյնպիսի մշակ է ինչպէս միւսները. եթէ նրանց եօթը մանէթ ես տալիս, ինչո՞ւ դրանն աւելի է... Կնդրտորը տատանուեց, պատասխան չէր կարողանում գտնել: Հարցմունքներս նրան ամեն բան մոռացնել տուին և նա ստիպուած թէև կիտով չափ ճշմարիտ, բայց և այնպէս խոստովանեց, որ իւրաքանչիւրից մի-մի ըուբլի կաշառք է վերցնում:

— Խըստովանք լի, վարժապետ, ամեն մնից մի-

մի մանէթ սուկըմ եմ. ոչովի չասես:

— Վախիլ մի, ոչ ոքի ասիլ չեմ, բայց արի դըրուտն ասա, աւելի վերցնելիս կլինես, թագցնում ես. — ասացի և երեսին ժպտացի ակամայից:

Կնդդտոր աղէն իմ դառը ժպիտից, այսպէս ասած, կակղեց ու ինքն էլ ճիծաղեց: Կա արդէն նըշան էր, որ անիրաւն ուրիշ մուտքեր էլ ունի:

— Լաւ բան չի ուրիշի դառն աշխատանքն ուտել, յափշտակել — գողանալ, հարամութիւն անել, այն էլ մանաւանդ այդ տեսակ քեասիբ և անօգնական մշակներին զրկել: Լաւ իմացիր, որ այդպիսի տգեղ գործ կատարողը Բրիտոսին մատնող Յուդայից էլ վատթար է: Աստուած օրէնք և պարտականութիւն է դրել իւրաքանչիւր մարդու վրայ նախ իւր արդար վաստակով ապրելու և ապա ունեցածից թշուառին, աղքատին մասը հանելու, թողլերին օգնելու և մանաւանդ ծառաներին՝ մշակներին վարձադրելու. ես գիդեմ, պարոն կնդդտոր, որ դու այլևս այն հասարակ գիւղացիներից չես, արդէն հասկացող մարդ ես դարձել, աւետարանը կարդացած կը լինես, այնտեղ ասած է որ՝ «Մշակներն արժանի են վարձի». դու այդ գիտես, լսել ես, այնպէս չէ:

Բայց կնդդտորը լուռ էր, ոչինչ չէր պատասխանում: Ես էլի հարցրի՝

— Դու այդ բանը աւետարանի մէջ կարդացել ես, գիտես, եա լսել ես, պարոն կընդդտոր:

— Կըրթացել եմ. գիտեմ. — խօսքերին շեշտելով

վերջապէս ասաց նա: Ես կարծում էի, որ խօսքերովս անպիտանի խեղճը կենդանացնելու եմ, սիրտը ողորմ եմ գցելու, բայց...

— Ասա խնդրեմ, լաւ բան է ասած այնտեղ:

— Լաւ ա. բա հու փիս չի...

— Անդոր լեզուով ասաց «լաւ ա», որովհետև իրեն սարփայ չէր, ինչպէս ասում են:

— Պարոն կնդդտոր, մի նեղանալ, ասա, դու քրիստոնեայ ես:

— Բա խու նասրանի չեմ. — աստիճանաբար նեղացաւ և պատասխաններն սկսեց կոշտացնել:

— Եթէ նասրանի չես, պէտքէ կատարես այն սուրբ պարտականութիւնը, որ գրուած է սուրբ աւետարանի մէջ: — Դու ուրիշի քրտինքը, արդար վաստակն ինչո՞ւ ես ի չարը գործադրում:

— Ես ի՞նչ չարութիւն եմ արել

— Քո արած չարութիւնը զգուելի չարութիւն է և քեզ նման շատերն են անում: Կա մեղք է:

— Ես ո՞չինչ մեղք չունեմ, աշխատանք եմ անըմ...

— Քո մեղքը շատ մեծ մեղք է և դու կը պատժուիս այդ բանի համար, լաւ է, որ այլ ևս այդպիսի տգեղ բան չանես...

— Աչքդ ի՞նչ ա տենը՞մ, մեծ ուտողներին թողել, ինչ ես նախատը՞մ...

— Ո՞վ է մեծ ուտողը:

— Հլէ աչքդ դորը շուռ տաս, կը տենաս. ես

իմ մօր փորըմը խուռ չեմ սըվորել, մեծամեծներիցս եմ էօրընակ առել...

Բայց զուր, ի զուր էին քարոզներս: Խիղճը կորցրած աղայ կնդդտորի կաշառակեր գարշելի դէմքից կարելի էր նկատել, որ կրքերը յուզուում են խիստ խօսքերիցս, անդադար պզլիկ ու պստիկ աչքերը խէթմթում էր մշակների վրայ, կարծելով անշուշտ, որ մշակները նրա գաղտնիքները յայտնել էին ինձ. ինչպէս ասած է՝ «գողը, գող, սիրտը դող»:

— Լաւ լաւ, գիլի աւետարան մի օխմիշ լիլ գլխիս, ես ըտոնք վաղուց գեղամ, դու գնա քու մոնթերի գլխին վաղապետութիւն արա, քու ասածնին իմ քեալլէն չեն մտնիլ, ըստեղ զազախըղ ա, ըտոնք ձեռք չեն տալ. — բարկութեամբ լցուած տեղից վերկացաւ, խուռնացած զոնտիկն ու աղբանոցից գտած գլխարկը մի կողմը գրաւ, նստեց ինձանից հեռու, մի քարի վրայ, աղայի սովորութեան ու գերքին համեմատ ոտը ոտովը ձգեց, հին սիւրտուկի պատուած գրպանից հանեց մի երկայն, կազմը հարկեր տեղից ճաքճքուած դաւթար, իսկ փահլաբաշի Մակին մի ժանգոտած պղնձէ թանաքաման և մի փետուր ձեռին կանգնեց աղի առաջ ինչպէս մի թոկած կապիկ: Դաւթարի թերթերը խիստ դեղնած էին, որոնց վրայի հազար ու մի նկարները ցոյց էին տալիս, թէ կնդդտորի ընջոտած օձօրքից կաթկթած անձրևի կաթիլներից պիտի լինէին փչացած. ափերին մատի հաստութեամբ

տողեր էին քաշուած, որոնց արանքներով ազուաւի հետքերի նմանող գծեր էին չանկատորուած, որ հազիւ կարելի էր գրերի նմանեցնել:

Կնդդտորն ըստ երևութին ուսերէն միքանի շալթայի-բալթայի էր իմանում և իբրև պաշտօնեաց իրեն պարտք էր համարում հայերէն խօսքերի հետ ուսերէն խառնել, սակայն այդ խառնորդի վրայ կարելի էր բաւական կուշտ ծիծաղել...

Նա բարկութեամբ լցուած՝ բառերին շեշտելով սկսեց ցուցակագրել և կարգալ հետևեալը.

— Տիշի վօսմիսօթ դվինոստի կոթ, հիւլ մեստիաց, էլիսաբէտապոպոլսկիլ գմբեռնի, զազախինսկիլ ուէգդի... շօսէհնի կազարմինսկիլ բրբբտայի՝ Պօպօքով Խէչո, բզրդէս, վրզդտան, պալշիվի, դուռակ — սաբակ...

— Բզրդէս, բզրդէս, աղայ ջան. — կապկային շարժմունքներով արագ — արագ և շարունակ սկսեց վկայել կնդդտորի օգնական փահլաբաշի Մակին:

— Եաքար Կակալովիչ Աղբանբսկիլ, բզրդէս:

— Բզրդէս, բզրդէս:

— Ա.կոբ Զօբանով Աղբանբսկի բզրդէս:

— Օ՛, աղայ ջան, Ա.կոբ Աղբանբսկին բզրդէս, ամա բսկի խարաշօ չի բրբբտայի անբմ. — գանգատուեց և ականջին ընկնելով ու վրաս նայելով փսփսաց, իսկ Ա.կոբը մատով ինքն իրեն ցոյց տուեց:

— Դա՛:

— Դա՛. — վկայեց Մակին ու կրկին տեղը կանգնեց:

— Ակոր Չորանիչ, եա թէբէ պօջօլ ըզդելայիւ, ըզընախէ. քե մղոյիթ կաց, լաւ ըրըբտայի արա, թէ չէ դուս կանեմ. — ասաց կնդդտոր աղէն, մատը թափ տուեց մշակի վրայ և շարունակեց նոյն կարգով կարգալ և մէջէ մէջ ոտը գետինը թակելով, սպառնալիքներ տալ դանդաղ շարժուող մշակներին:

Այդ միջոցին կազարմի կողմից կարմիր շորերով մի կին երևաց, որի ետևից մի մշակ մի երեխայ շալակած, և մի ուրիշ երեխայ էլ առաջները գցած գալիս էին:

Կինը կնդդտոր աղի Խանումն էր, որը մարդու նման նորաձև շորեր էր հագել:

— Խանըմը գալիս ա, աղայ, Խանըմը գալիս ա. — ասացին՝ նախ փահլաբաշին և ապա միւսները:

Թառթառ խանում կնդդտորակինը, որ մի քանի ամսից առաջ նահապետական պարզ, համեստ հագուստի մէջ եայլաղում կով ու կիթ էր անում, պանիր, իւղ ու կարագ էր պատրաստում, այժմ արդէն «աղակին» սպտուկանուն կրելով իւր վրայ ծառաներով, անվարձ ծառաներով էր էր շրջում: Նա իւր ամուսին կնդդտորից էլ լուսաւորուել էր, և, կորցնելով զիւղական կնոջ յատուկ նահապետական համեստութիւնը և պարզ կեանքի հետ ամօթխածութիւնը, քանդել էր հաշար ու մի լանթով փաթաթած գլուխը և թանկագին բաղդատի ծածկել. քթկալը կամ պոնգկալը, և զիւղացու խօսքերով ասած՝ «ըռէխմուէխը անամօթի պէս բաց էր

արել»։ բայց դա ոչ այնքան զիւղացու համար էր տարօրինակ թւում նայելիս, որքան անճանօթ մարդու, որովհետև մի քանի տարիներով քթկալի տակ ծածկուած ծնօտը շրթունքների և այտերի ներքևի մասերի հետ միասին բամբակի նման սպիտակ էին մնացել, իսկ քթկալագուրկ՝ չծածկուած տեղերն արևից սևացել, անձրևից և այլ հանգամանքներից այնպէս էր պոքկոտել, հաստացել, որ եթէ քաղաքակրթուած աշխարհում լինէր, կարելի էր ցուցահանդէս տանել և բարեգործական նպատակով շատ նուիրատուութիւններ ժողովել. նա ճիշտ հին աշխարհի քօսոտ կապիկի կերպարանք էր ստացել: Նրա մթանէն խաս կտորից էր, ուսին շալ ունէր ձգած և ոտներին սաղրի կոչուած կօշիկներ, որոնց կրունկներն առաջուայ շատ բոբիկ ման գալուց, հաստացած ոտների կօշիկների սովոր չլինելուց ծռուել էին մի կողքի վրայ և կաղացնում էին կնդդտորակնօջը. նա չուխի պէս արդէն տնգլի էր թակում... նրա փոքրիկ երեխան, որ նոյնպէս զարդարուած էր նորաձև շորերով և գլխին ունէր պատուտորուած յարգի գլխարկ, երբ հօրը տեսաւ, առաջ վազեց ասելով՝

— Պապա, պապա, եկայ, սյ, եկայ...

Իսկ մայրը, որ արդէն սովորել էր «կուզա՛, կուզա՛» ռուսերէն բառերը, ծանր քայլերով մօտեցաւ կնդդտոր աղին և հպարտութեամբ փեշերը բլուանդ արաւ, նստեց նրա կողքին: Նա առաջին հրճուանք էր զգում, որ իւր մարդը այնքան մշակ-

ների գլխաւոր է, որ իւր-մարդին «աղայ» են ասում...

Կնդդատորը շարունակ «ըզըզէս, ըզըզէս» անելով կարգում էր փթած՝ գրողի դաւթարը: Նա այլ ևս ինձ վրայ չէր նայում: Ես արդէն զգուանքով լցուել էի, երբ Ակոբը կրկին աչքով արաւ ինձ: Մնաք բարով ասացի ընդհանրապէս և դառնացած վարք ու բարքի այդ ասպականութեան վրայ, մեկնեցի խմբից, ձիս յետ արի, լգամը բերանը քաշեցի, նստեցի, և, դեռ հագիւ կէս վերստ տարածութիւն անցած լինէի, յանկարծ մի աղիողորմ ձայն, մի գոռոց կամ աւելի լաւ է ասել՝ մարդկային բառանչոց լսեցի. իսկոյն կանգ առայ և ականջ դրի: Պէտք է մշակի ձայն լինի դա, ասացի ու գիմաց գուրս եկայ:

Պողպատի ձողը ձեռքին բռնած, հիւանդանոցի նախած կօշիկները հագած, կնդդատոր աղէն ոտները գետինը թակելով՝ կատաղած, փրփրած գոռում և անգթաբար զարկում էր Ակոբի չորացած՝ տախտակ դարձած մարմնին: Ակոբը աղիողորմ ձայնով աղաչում, պաղատում էր աղին, որ կշտանայ, բաւականանայ ծեծելուց: Ակոբն աղաղակում էր.

— Աղայ, քե մատաղ, ես բան չեմ ասել վարժապետին, փահլաբաշի Մակի ապին խիալով (կարծիքով) ա ասըմ էտ բանը... աղայ, կանչիր էն մարդին՝ էն ձիւաւորին հարցրո՛ւ, տես. ես բան չեմ ասել, վայ, աղայ ջան, վայ... դուս մի անիլ... ըեխէքս սոված կը մնան վայ... վայ...

— Գնւս, դնւս, վոն, պօշօլ հառամգադա, քե պէս շներին, քե պէս իշին լաւութին անիլու չի. համ թեխս տակը ապրըմ ես, համ էլ մատնութին, խբըբզանութին անըմ...

— Աղայ, քե մատաղ, ինձ սպանիլ մի, ես էն մարդին բան չեմ խաբար տուել, ինձ զուր ես դուս անըմ...

— Պօշօլ, պօշօլ, հառամ թոխում...

Կնդդատորը չը լսելով Ակոբի պաղատանքներին, չզիջելով նրա անմեղ արցունքներին, ջրկեց նրան մշակներից:

Ակոբը սարի լանջով՝ վնգալով, հեկեկելով բարձրացաւ դէպի Աղբան գիւղը, իսկ ես գէպի Խաչթառակ:

Հինգ օրից յետոյ, նստած էի ձուղուրանց տան կտերը և նայում, դիտում էի դէպի նալթօքանայ և Գէօլբուլաղայ կողմերը: Աչքս խոնարհեցրի, նկատեցի, որ մի ծերունի մարդ հեռու կանգնած ինձ նայում է. իսկոյն ճանաչեցի նրան: Ակոբն էր: Խեղճը ձուղուրանց շներից վախենում էր, որ մօտենար տանը:

— Ակոբ ապի, ինչո՞ւ ես հեռու կանգնել. արի տեսնեմ: Ակոբը փայտը դիմհար տալով եկաւ մօտս նստեց, նախ ցոյց տուեց իւր անբաղտ մարմնի վրայի սպիւնները, որ ծեծուելուց էր ստացել և ապա պատմելով իւր անթիւ դարդերը, և, իւրաքանչիւր խօսքի ետեւից առատօրէն աղի արցունք թափելով՝ խնդրեց, որ ես միջամտեմ աղայ կնդդը:

տորին, որ կրկին ընդունի նրան մշակների թւում:  
 — Ես այն գազանի երեսը չեմ ուզում տեսնել, Ակոր ասի, միայն, նախ քեզ համար մի բողոք կը գրեմ, որ տանես ուր հարկն է տաս և ապա մի պաշտօն կը գտնեմ. ես արդէն մի տեղ գիտեմ:

— Որ տհե՛նց մի բան անես, ինձ ազատած կը լինես էն անիրաւի ձեռից. նա էնա խայինացաւ հետս, թէկուզ գնամ էլ՝ միսս կուտի: Ի՞նչ տեղ ա, որ գիտես, վարժապետ ջան:

— Դու ճանաչո՞ւմ ես պ. Գանէլին:

— Հրաման քե:

— Կարո՞ղ ես տարով կապուել նրա հետ:

— Կարամ, վարժապետ ջան. հարուստ մարդ ա՛...

— Այո՛, հարուստ էլ է ու արգար էլ... կարծեմ ամսական տասը մանէթից աւելի կտայ:

Ակորը համաձայնեց: Կապակցութեան թուղթը գրեցի, Ա. գիւղի տանուտէրին կնքել տուի, տարայ յանձնեցի պ. Գանէլին: Ակորը խոնարհութեամբ և հաւատարմութեամբ սկսեց ծառայել նրան: Երկու շաբաթ հազիւ լինէր, որ աղքատ Ակորը, կնդդորը աղի կարծիքով, իբր թէ մի շատ բազրաւոր պաշտօն ունէր պ. Գանէլի մօտ:

Կնդդորն ստուգելով, որ Ակորն իրեն բոլոր գաղտնիքները բաց է արել թէ վարժապետի և թէ օտարների մօտ, լսելով, որ վարժապետի միջոցով է ծառայ մտել քեասիբ Ակորը, ուզեց իւր վրէժն առնել նրանցից:

Այդ կեղտոտ անձնաւորութիւնն անմիջապէս ձի նստեց գնաց Ա., Գանէլի մօտ, որին ծանօթ էր և բարեկամ ձեւանալով նրան, ասաց, որ Ակորն իւր մօտից նախ ծուլութեան և ապա անհաւատարմութեան համար է արձակուած, ուստի բարեկամաբար խորհուրդ չի տալ, որ նրան պահէ իւր տանը: Սակայն Գանէլը մի պատուական անձ լինելով՝ չը կամեցաւ անսալ կնդդորի չարամիտ, սատանայական պատճառաբանութեան, յորդորանքներին և իզուր արձակել քեասիբ Ակորին, որ վարժապետի գրած կապակցութեան թղթով կապուած էր նրա հետ. մի խօսքով՝ բաց ասեց նրան:

Կնդդորը նեղացած, յուսահատ դուրս գալով Գանէլի տանից, հէնց սանդուղտների մօտ պտտահեց Ակորին և միքանի հայհոյանք տուեց նրան: Ակորն ալլևս կախում չուներ նրանից, նոյն և աւելի հայհոյանքներ առատ-առատ խփեց նրա ճակատին, աւելացնելով այս ևս.

— Ես քու ամեն հալ ու փալը բաց եմ արել վարժապետի մօտ. նա սօր-էգուց քու անըմդ կազէթով աշխար ա դուս բերելու...

Կնդդորը, ծուռ քիթը ցցած ևս աւելի բորբոքուած, քան առաջ, սպառնալիքներ կարգաց Ակորին և վրէժխնդրութեան թոյն խմած վերադարձաւ իւր «կազմարան» և գործի անաջողութիւնը պատմեց անհամբեր սպասող կնդդորակին թառթառ Խանուճին ու փահլաբաշի Մակինին:

— Ա՛ղայ, քե պէս պատուական մարդի անըմը

կաղին ուտող Ակոբը սաղ աշխարի մէջ բեգնամ ա անխուռ. սուս մի կենալ, էլի փորձի նրան բանի մէջ գրցելու:

— Ի՞նչպէս անեմ:

— Ես մի բան եմ միտք արել:

— Ասա տենանք:

— Ի՞նչ արի մի սուտ հնարի Ակոբի ետեցը կապի, ինձ ու Փլիպոզ թորոսովին էլ վկայ գրի, գնա՛ քեօխվայ — քեաղխուղէքին գանգատ արա, որ համ գլուխը սխտորեն շտրափ քառնեն, համ էլ դուլթսաղ պահեն, որ խելքը թուփ անի գլուխը հըւաքի ու ուրիշ վախտ իրան թայ՝ ու թուշը ճընանչի... սղակին, լաւ չեմ ասըմ:

— Ետ լաւ ա ասըմ Մակին, էհէյ, էլ խօսալ՝ լիզուղ պոնգովդ մի տալ, գնա՛, ոնցոր ասըմ ա՛ գանգատ արա, որ անըմըդ բացրանայ:

— Բա որ Փլիպոզը վկայութիւն չը տայ. — կասկածով հարցրեց նա:

Ի՞նչ որ նրան խոստանաս, թէ իմ պամբօշնիկը կը շինեմ, գլխի վրայ քլզրամիշ լելով վկայութիւն կտայ:

Կնդղտորը, այդ աղքատ մշակների ցեցը, կանչեց Փլիպոսին նրա համաձայնութիւնն առաւ ու անմիջապէս վերցրեց իւր փետրէ գրիչը, պարսկական կոթաւոր պղնձէ թանաքամանը և գրեց զրպարտութեան հետեւալ տարօրինակ բողոքագիրը:

«Ես ի նէրքօ ստորակրիալ Ա. գեղի պնակիչ, ճալի կըզարմի տասնուհինգ մշակի կլխաւեր կնդղտորս պատիվ ունեմ առգա տալու նորին պարէծնթու-

թենին Ա. գեղի շինական կառավարութենի քեաղխուղէքանցը և քեօխվայ Բալաբէգին...»

«Գօսպողին քեօխվայ Կակիովիչ, Աղբան կեղացի Ակոբ Չոբանովը, որ մշակութին էր անըմ իմ պարեծնթութենին պահ տըւած կազարմըմը, ամսիս քսանհինգին, քշեր ժամանակը կէօղացել ա մեզանից քսանհինգ մանէթի զատըմատ ու փախել: Սրանով խընգըրըմ եմ նրա գըղաստանը կտրէք և պատիժը տաք... էս բանին վկայ են փահլաբաշի Մակի Խորոզիչը և ըրըբտայչիկ Փլիպոզ Թորոսովը»:

Չեր պրեկամ կնդղտոր...

Գիւղական առածն ասում է՝ «գալիա բիր հուչ գեարաք», այսինքն է՝ «գփին էլ մի հօհօ է պէտք» և ապա թէ՛ «Գեօխվի վկան էլ գզիրը կլի»: Այդպէս և կնդղտորը՝ իւր փահլաբաշուն է վկայ կանչում, իսկ քեօխվեն՝ փողի, կաշառքի սաս լսելով՝ սկսեց պար գալ: Վերջինս կարգալով բողոքը, բեխերը սրեց, կնդղտորից վերցրած ջափափուլին, գիւղացու ուրիշ խօսքով ասած՝ «չըխկչխկանը» գրպանը գրեց, պատուիրեց իւր գզիր Պետոյին, որ խկոյն գնայ և Ակոբին որտեղ էլ որ լինի, բերի:

Գզիրը դագանակն ուսին գրեց, գնաց և միքանի ժամից յետոյ Ակոբին առաջ արած բերեց:

Ակոբը ձեռը ծոցին, անակնկալ դէպքից շփոթուած, կանգնեց քեօխվի և բազմութեան առաջ: Նա լացակումել էր, արտասուէքը հազիւ պահում էր և ոչինչ չէր կարողանում խօսել:

—Ա՛ պիճ հարամզադա, էս մարդի կաղարմիցը խթ էս գողութիւն արել:

—Քե՛օխվայ ջան, չիմ սուտ ա, էս գողութիւն չեմ արել.— հազիւ պատասխանեց Ակօբը:

—Լաւն էն ա՛ որ արածդ բոյինդ ունես, եթէ ո՛չ, վրէժ հաստատելուց եզը պատիժդ կերկուտակուի.— ասաց տանուտէրը:

—Ես ո՛չինչ գողութիւն չեմ արել...

—Սդա Մակի, Փլիպոզ, ըստի եկէք:

Վկաները եկան և կանգնեցին:

—Ասեցէք, սա կնդդտորի շէյուշույը կէօղացել ա, թէ չէ:

—Հրաման քե, քեօխվայ, մենք տեհանք որ դա մեշօքն ածած շլակած տանրմ ա:

—Պիճ շան տղայ, բա ասըմ էս կէօղացել չեմ.— գոռաց անիրաւը և ձեռի փայտով երկու անգամ Ակօբի սնգիրներին խփեց, ապա ձեռից բռնելով քաշեց կալի մէջ տեղը և լեռնականի գոռոցներով այնքան ծեծեց, որ աղքատն ուժասպառ ընկաւ գետին: Գզիրը ոտից բռնեց քաշ տալով տարաւ գոմի մէջ բանտարկեց:

Դատաւորները, սենեակ ժողովուելով, վճռեցին՝ որ երեք շաբաթ Ակօբը բանտարկուած մնայ և ամեն օր քեօխվի համար նրա այգում ճաշից մինչև երկու աշխատի: Դրանից յետոյ գողացած երեգէնների համար կնդդտորին չորս ամիս անվարձ ծառայի խճուղու վրայ: Բազմութեան մէջ հազիւ

մի մարդ գտնուեց միայն, որը խղճալով Ակօբի վրայ, բողոքելով ասաց.

—Չորս ամիս որ մարդին դուժսաղ էք անըմ ո՛վ դի պահիլ նրա քիւլփաթը...

—Կնիկը: Թող գնայ մուրացկանութիւն անի, պահի.— պատասխանեցին դատաւորները:

Ակօբը դարձեալ խճուղու թող շնչեց: Եւ այդպէս խեղճ աղքատը կրկնապատիկ գրկողութիւն, պատիժներ կրելով գիւղում, չկարողանալով այդպիսի դաժան կացութեան դիմանալ, աղքատ ծընուածն աղքատ էլ մեռաւ, մի անշուք գերեզման իջաւ իւր փշրուած ոսկրներով, և, կեանքի դառնութեան մատնեց իւր մատաղհաս որբերին, իբրև աղքատութեան յաջորդներ՝ թողնելով նրանց կաշառակեր, տգէտ քեօխվաների և կնդդտորների գիշատիչ ճիրանների մէջ:

### Դ Ա Լ Լ Ա Ք Ի Ղ ՈՒ Լ Ի Ն

Ա.

1886 թ. օգոստոս ամսին Ղազախի Խաչ-  
թառակ գիւղացիք ամենքն էլ իրենց արտերը  
հնձել վերջացրել էին և մի կողմից կրում, միւս  
կողմից եզն ու ձի լծած կասում էին. բայց վնչ  
Վանիսանց աղքատ դալլաք Ստեփանին. միայն նրա  
հունձն էր ետ ընկել: Եղանակը սարսափելի շոգ  
էր—արեգակը կրակի պէս ալաւ տալով այրում  
խորովում էր: Ստեփանի ժամանակին չհնձուած  
արտը բոլորովին կծղել չորացել էր, այնպէս որ  
ցորենի հասկերը խանձուած մագերի նման փշաքա-  
ղել, հողի վրայ կռթնել էին:

Քեասիբ դալլաքը հիւանդատեղից նոր էր վեր  
կացել և հազիւ ոյժերն իրեն հաւաքած հունձ էր  
անում իւր Արևբաթան հողումը: Տխուր և  
վշտալի հնձաորը ամեն մի մանգաղ անելիս խորն  
ընկած աչքերից աղի արտասուք էր թափում, երբ  
կծղած հասկերից կարմիր ցորենը բնահան լինե-  
լով փուռում էր հողի վրայ իւր ոտների տակ:

— Վնչ, արևով հնձիլ չի ըլլմ, հասկն ու ծրղ-  
նօտը բռնըմս փշրւրմ են. — քրտինքն ու արցունքը

սրբելով՝ ասաց Ստեփանը և մանգաղը վեր դրեց  
ու սկսեց մտածել: Նա վճռեց, որ կծղած արտը  
գիշերը հովով հնձի և ցերեկը կրի իր կայն ածի:

Աղքատ Ստեփանի հունձը ետ ընկնելով, նրա  
ընտանիքի մէջ սով էր գցել, այնպէս որ ոչ ալրա-  
տանն ալիւր կար և ոչ տաշտումը հաց: Դալլաքի  
հնձի ետ ընկնելու պատճառներից մինն էլ այն  
էր, որ գրպանումը փող չունէր մշակ բռնէր,  
կողքին եղբայր և կամ հասած տղայ չունէր, որ  
կուռը գցեր. այլ մեն մենակ ինքն էր, որ պէտքէ  
աշխատէր, մաշուէր և իւր ութ հոգուց բաղկացած  
ընտանիքը կերակրէր ու գիւղական հարկ ու բէ-  
գիառը քաշէր: Աղքատութեան երեսը սևանայ,  
շատ վատ դրութեան մէջ էր դրել դալլաքի ընտա-  
նիքը—այնպիսի օր պատահում էր, որ նրանցից ոչ  
մէկի բերանը հացի թիքա չէր մտնում. կասեա  
թէ՝ ծոմ էին խեղճերը:

Ստեփանի կին Հէրիքը բոլորովին քաղցած էր  
մնում, որովհետև ուզածը, մուրածը հաւի թխսի  
նման իր երեխանց բերանն էր դնում. իսկ Ստե-  
փանին Ստտուած էր պահպանում:

Ստեփանը դեռ հունձը չվերջացրած, մի օր  
իւր նման մի աղքատ տղի հետ սէլընկեր դառնա-  
լով երեկոյեան գոմէշները լծեց, հորիքն առաջ  
գցեց, սայլը տարաւ Արևբաթանայ արտի մօտ վեր  
թողեց, մանգաղը ձեռն առաւ և մէջքը կռացրած  
իւր աղքատութեան, դառն ցաւերի մասին մտածե-  
լով՝ մինչև լուսանալը հինգ տասնեակ խուրճը

հնձեց և լուսադիմին ձայն տուեց ընկերին, սալը բեռնեց հաշանով, լծան ուսին նստեց ու սոված փորով, թուքը կուլ տալով, իւր ընկեր Կարապետի հետ գոմշասէլը քշեց դէպի Խաչթառակ գիւղը:

Ստեփանի սալը հասաւ գիւղից բարձր մի տեղ, որտեղից սէլհարքը — սալուղին մի շատ դժուար զառիվայրով պէտքէ իջնէր դէպի գիւղը:

Խաչթառակ գիւղի սէլհարքները առհասարակ շատ դժուարագնաց են, իսկ այն զառիվայրով սալ իջեցնողը նախ պէտքէ հաղորդուէր — սրբութիւն առնէր ու այնպէս սալի առաջն ընկնէր, որովհետեւ սալը փախած ժամանակ սալապանը կարող էր երեսի վրայ վայր ընկնել և սալի տակովը լինելով մեռնել:

— Կաղնի, օհօ... քե մատաղ, օհօ, Գնւլի ջան, կաղնի, օհօ...: Կարապետ:

— Հէյ:

— Գոմշների չուանը տեղը գցեցիր...

Պրծա՛ր:

— Հա՛. — պատասխանեց Կարապետը:

— Կարապետ ջան, քե մատաղ, սէլի թառից կախ լած կոնց, պինդ պըհի շուռ չգայ, աղպէր ջան. — աղաչելով ասեց Ստեփանն ու երեսին խաչակնքելով սալը տեղից շարժեց:

Ճանապարհը բացի զառիվայր լինելուց, շատ էլ քարքարոտ էր, սալը փախած ժամանակ երբեմն այնպիսի մեծ մեծ քարերի շալակ էր բարձրանում, որ ասում էիր այս է պէտք է շուռ գայ

ու խեղճ քեասիբին տակովն անի. բայց Կարապետը պինդ կախ ընկած պահպանում էր, իսկ Ստեփանի Ղուլի գոմէշը, նրա ութնանգամ ընտանիքի միակ յոյսն ու ապաւէնը, նոյնպէս, բնագղմամբ կարծես, հասկանում էր իւր տիրոջ ցաւն ու աղաչանքը. նա ոտները գետնին ամուր դէմ տալով՝ դժուար տեղերում ծանրաբեռն սալը շուռ գալուց ազատում էր: Նրանք սալը գլորած քարի նման ներքև իջեցրին:

— Փնօք քեզ Աստօժ, որ սաղ սալամաթ քըշացանք՝ ազատուեցինք էս դժոխքի ճամփիցը: Զառիվայրն իջնելուց յետոյ՝ սալը կանգնեցնելով, ասաց ձէնը փորն ընկած Ստեփանը և չուխի կոշտ փեշովը երեսի ու շլինքի կեղտախառն քրտինքը սրբեց:

Բ.

Հէնց այդ միջոցին Խ. գիւղի կողմից երեք կասկածաւոր մարդ իրար հետ քչփչալով, աչքները յառած դէպի Ստեփանի սալը, բարձրանում էին կամաց-կամաց:

— Կարապետ:

— Հէյ:

— Եկող գիւղանոնցը բրաւուրդ ես անը՞մ:

— Հա՛:

— Բանի են գալի հա: Ա՛, չլի թէ կողից բէգիւռից եկել ա: Գրանց գալու շնորքիցը նըհենց

ա ըրևըմ, թէ մեզ բանից-գործից զցիլ զեն...: Մինը Գիւլլահանց Մուսինի պմպօշնիկն ա... — վախկոտ ձայնով ասաց Ստեփանը, նախազգալով, որ իւր գլխին մի ինչոր բան է պատահելու:

Եկողներից մինը Խաչթառակ գիւղի դատաւոր Մուսինի զգիրն էր, երկու էլ ուրիշ մարդ: Նրանք գալիս էին Ստեփանին տանեն Մուսինի ճանկը զցեն, որ խիստ պատժի:

Քեասիբի յանցանքը կայանում էր հետեւեալում: — Գատաւոր Մուսինի կին Խանումը իւր արծաթէ գօտին գիշեր ժամանակ իրենց կալի դարմանի մէջ կորցրել էր. սուղեայ Մուսին շան հաջոցին զարթնել և մթութեան մէջ մի մարդ էր նկատել իւր հարևան Գալլաքի տան կողմը՝ փախչելիս. այդ իսկ պատճառով նա իրեն իրաւունք էր համարել Ստեփանի վրայ զցել իւր անտեղի կասկածը, որ, իբր թէ, Ստեփանն էր գողացել նրա կնոջ գօտին: Այդ կասկածանքին տեղիք էր տուել այն՝ որ մի օր Ստեփանը եկեղեցու դրանը, միքանի քեզխուղա մարդկանց ներկայութեամբ, համարձակուել էր դատաւոր Մուսինի երեսովը տալ նրա լափած վեց աբասի կաշառքը, որը խեղճ դալլաքի արիւն քրտինքոտ աշխատանքից էր կերած:

Այդ օրը, առաւօտեան վաղ վաղ, Մուսին խիստ քեափար — քեափար կատաղել էր Ստեփանի վրայ և սպասում էր, որ նրան ճանկը զցի ալբուսած սիրտը հովացնի:

Ստեփանի հանգից մինչև գիւղը դառնալը

նրա մի քանի ընկերներն արդէն գիւղն էին հասել: Սրանց հետ գիւղացիներից շատերն ևս թէև հաւատացնում էին, որ Ստեփանն անարատ է գողութեան գործում, և այն գիշերը, երբ քամարը կորել էր, Ստեփանը տնքալով իւր կծղած արտը հնձում էր գիւղից միքանի վերստ հեռաւորութեան վրայ, բայց Մուսին, խիղճը հանած իւր կրծքից, երգում էր Աբրահամի Աստուծոյ անունով, թէ ինքը բացի Ստեփանից ուրիշ թշնամի չունի:

— Սուղեայ Մուսէս, արի դու էն անմեղ մարդի վրայ խեալ մի անիլ, հըւատա՛ վէրնէին Աստուծուն, որ Գալլաքն ըրեկունը գիշերուայ կէս էր, որ իր Ըբբթանայ հողըմը, իր արևի ձէնն ածելով հունձ էր անըմ:

— Մուսի ապի, Աստօ՞ գիտայ, որ Ստեփանի կողքի հընկերը ես եմ լել գիշերիս, պարտական լեմ ստեղծողին, թէ սուտ ասեմ, նա ըսկի՛ արտիցը զրա՞ղ չի լել...

— Քրիստոսի անըմը վկայ, սուրբ սկիհն ու մեռօնը գիտայ, որ դալլաք-Ստեփանը էտ բանըմն անարատ ա, անմեղ ա... Այդպէս ամեն կողմից ականատեսներն սկսեցին երգումներով վկայել անմեղ յանցաւորի մասին. բայց, Մուսին խղճմտանքը կորցրել էր արդէն:

— Չէ, չէ, սուտ էք ասըմ, անպիտականներ, դուք էլ նրա պէս հաւամզաղէք էք. ես քշերս, իմ էս աչքերովս տեսայ, որ քաչալ դալլաքը մեր

կալիցը, մեր շան ղաքին փախչելով գնաց իրան քարուքանդ կօկալը \*) պրծաւ:

Մինչդեռ այս խօսակցութիւնները շարունակուում էին գիւղամիջում, դէպի Ստեփանն ուղարկուած մարդիկը սայլին հասան և լծկանների առաջը կտրելով ասացին:

— Օհօօ... սէլդ կղնըցրո՛ւ, արի գնանք, քեօխվա-սուղիէքը կանչըմ են քե:

— Հա՛, ես գիղի ոչ, որ դուք լաւ բանի չէք գալի՛ք. Կարապետ, տեհնոր, որ ասըմ է՛.— լիշեցրեց ընկերին Ստեփանը և ուզեց սայլը շարժել:

— Կղնըցրո՛ւ, արի գնանք, քե ասըմ ենք, թէ վռաղ կանչըմ են...

— Ս՛. ձեզ մատաղ, ինչի՞ են կանչըմ, է՛նչ կայ ասա էլի, Մուխի ապի.— կրկին հարցրեց՝ նա:

— Դէ՛ ըռխիդ մի անիլ, ինչ կայ-կայ, ասըմեն արի գնանք, իմացիր էլի:

— Եանի թաքուն ա՛, չի լիլ ասէք, թէ ինչի են կանչը՞մ.— նեղսրտութեամբ՝ մի ձեռով սէլի գըլուխը բռնած միւսով ճիւղտը, էլի հարցրեց Ստեփանը:

— Դէ՛, քե ասըմ ենք, որ գլխներնիս տանիլ մի, քու քեփովը աղաքնիս ընկի գնա՛, թէ չէ գըլուխդ թակելով կտանենք:

— Ա՛ի, ա՛, թէ մի բան կայ, ասեցէք էլի, ինչի են կանչըմ, սէլս էս չոլըմը խու կարալ չեմ թողալ գնալ. ասեց Ստեփանը:

\*) Խրճիթ:

— Յաւը գլխիդ, քնցախը ջանիդ համար են կանչըմ, քշերիս էն մարդի կնկայ քամարը խի ես գողացել...  
Պալլաք Ստեփանը ահից և ակամայից ժպտաց, կարծելով թէ մի ինչոր հանաք են անում նրանք:

— Ծըծաղի, ծըծաղի, քաջալ Սլօ (մականուն). հրէս կտենաս գլխիդ գեալաջողը: Մենք եկել ենք քե տանենք մաշկելու, դու համ անիրեսի պէս ծըծաղըմ ես, համ էլ՝ բոլինդ (յանձդ) չես առնըմ քու արած հառամզադութիւնը:

Ստեփանը բանի էութիւնն իմանալով— որ իրեն շառով են տուել, աղաչեց նրանց, որ թողնեն գոնէ սէլը տուն հասցնելու, բայց չթողեցին: Պալլաքն սկսեց ձիգ— ձիգ անել, բայց խեղճ աղքատը երեք գալլի նման մարդկանցն ինչ պիտի անէր. նրանք մի քանի պինդ քեօթակ տալով, վեր գցելով, քաշ տալով տարան քեօթվայ-սուտիէքի ճանկը գցեցին, և, մինչև անգամ այսպիսի մի գանգատ էլ արին նրանց.

— Պարոն դատաւորներ, էս զունդուզը \*), մեզ ջլիս բիաբուռ բէյսիրաթ արաւ, էնդադար ուշուսց թափեց գլխներիս. խնդրենք մեզ պաւականութիւն տաք...

\*) Ղունդուզ ասում են քաջալութիւնից մաղերը թափուածներին և բորոտներին:

Պ.

Ստեփանին քաշտալով, երբ տարան գիւղա-  
մէջ՝ Եղոյի կալը, Մուսին մի ձեռնափայտ ձեռին  
տանից դուրս եկաւ և դաժան-ձայնով հրամայեց.

— Ա՛դա, էտ գող շան տղին կոխեցէք, տուէք,  
ոսկրը մսիցը հանեցէք, մինչև որ իր գողութիւնն  
իւր բերանովը խոստովանի:

Մուսինի անիրաւ հրամանը լսուեց թէ չէ,  
գզիւրներն Ստեփանին ձեռք առան, բայց ինչպէս...  
դազանակներով այնքան թակեցին, այնքան ջար-  
դեցին, որ ձեռքները յոգնեցին: Մուսին դձրձեալ  
գողաց.

— Ա՛դա՛, խի՛ էք կաղնրմ, տուէք, մորթեցէք  
էտ քաշալ հառամզադին, մորթեցէք, վախիւ մի՛ք,  
ես եմ դրա սլատասխանատուն.— կրկին հրամայեց  
նա և մօտենալով գետնին տասալուռած Ստեփա-  
նին, իւր ձեռքի հոնի միտտած ահագին փայտով  
զարկեց դալլաքի քաշալ գլխին:

— Վ՛այ, մեռայ, ձեզ մատաղ օգտեցէք, անօ-  
րէնի թորփաղըմն եմ մնացել. վայ, վայ.— լսուեց  
Ստեփանի հատած աղիողորմ ձայնը: Վերջինս իրե-  
նից գնաց, արիւնն սկսեց առատօրէն հոսալ դալ-  
լաքի գլխի պատուռածքներից և նա ճապաղած ըն-  
կաւ գետին: Թշուառը նուազած, անշունչ, գետ-  
նին մի քիչ մնալուց լետոյ՝ սկսեց մորթած հաւի  
պէս թրպլըրտալ, և՛ մատներով գետնից հող քըր-  
փըշտել, խոտ սրճոկել... նա գոռոււմ էր այնպէս,

ինչպէս անտառոււմ գայլերի ճանկն ընկած եզը  
կամ կովը: Ծեծը շարունակոււմ էր դեռ... -

Ստեփանի սպիտակ կտակից կարած շապիկը  
արիւնից բոլորովին կարմրել էր, թակուած մար-  
մինը լեղակի պէս կապոյտ գոյն էր ստացել, որ  
երևոււմ էր նրա քրքրուած շապիկի հազար ու մի  
ծակուծուկից:

Բայց ինչ էին անոււմ թշուառ տեսարանին  
ներկայ եղողները՝ Ստեփանի հարևանները, ան-  
զգայ խաչթառակցիք. միմիայն հանդիսատես էին.  
նրանք շատ սառը կերպով էին նայոււմ այն քըս-  
տըմնելի տեսարանին. բոլորովին չէին խղճոււմ ի-  
րենց հարկի լծակցի վրայ, ընդհակառակը նրանք  
դեռ սուղիայ անգուլթ Մուսինի արարքը գովոււմ  
էին:

— Շատ լաւ ա անրմ, էգուց էլ մեր կնկայ  
քսմարը կը գողանայ, թո՛ղ ջուխտ աչքը մի բնով  
հանեն, որ խրատուի: Իսկ նրանք, որոնք առաջուց,  
մինչև Ստեփանին բերելը նրա օգտին էին վկա-  
յոււմ, Մուսինի սպառնալիքներից ահաբեկուած հե-  
ռացել էին այն տեղից. ոմանք էլ՝ թէև այնտեղ  
էին, բայց այդ բառբարոս տեսարանից վախենալով՝  
լուռ էին կացել բազմութեան միջոււմ:

— Ա՛ղջի՛, ա՛ղջի՛, Հէրի՛ք.— ճչալով կանչեցին  
հանդիսատես կանայք:

— Հը՛.— պատասխանեց Ստեփանի կին Հէրիքը:

— Աղջի՛, տունդ քանդեցին, մարդիդ սպանե-  
ցին, ա՛ խեղճ ու նաչար, վա՛ղ տուր, վա՛ղ տուր...

Այդ յանկարծական և գուժատու ձայները Ստեփանի կնոջը շանթեցին, նա չէր իմանում զէպի որ կողմը վազ տայ, շփոթուել էր:

— Ա՛ղջի դէսը, դէսը՛, Եղոյի կալի վրայ... Սմեն կողմից ճչալով ճանապարհ ցոյց տուին անբախտ կնոջը

Հէրիքն ահաբեկուած, կայծակի արագութեամբ հասաւ Ստեփանին, բայց նա՛ քեասիբ դալլաքն արդէն գետնին ընկած ուշաթափ տրըփում էր:

— Վայ... էս ի՞նչ օրի եմ տեսնում քե, վայ, Հէրիքը կուրանայ, Ստեփան ջան, վայ, Հէրիքը կիրանայ, էտ ի՞նչ հալի ես, այ էս քե մատաղ մեղքդ ի՞նչ ա. է՛ն, որ քիւլփաթդ սոված տուն արած դուռն իրեսներին փակած ա՛մ, տաշտ ու մաղդ դարդակ ա՛մ. վայ: Վայ Աստօծ ջան, սրա սհենց անողի տունը քանդես ի՞նչ կլի՛...

Հէրիքը ողբաձայն աղաղակելով ամբօխի միջով գիժ կովի պէս վազեց ու գրկեց կիսամեռ Ստեփանին: Մուսին նստած տեղից կրկին վեր կացաւ և մատը թափ տալով՝ սպառնաց գզիրների վրայ.

— Ա՛դա տուէք, տուէք, էտ անդգամին էլ մարդուն հասցրէք:

Գաժանի հրամանը լսուեց թէ չէ գզիրները Հէրիքին էլ ձև ք առան, առանց ամաչելու, որ կինարմատ է. բայց մի քանիսը հանդիսատեսներից, հազիւ թէ խղճացին, Հէրիքին խլեցին գաղանացածների ձեռքից:

Թակած, աղցան դարձած Ստեփանը կնոջ վայցից փոքր ինչ ուշքի եկաւ, ուզում էր վեր կենալ օգնել նրան, սակայն, Մուսինի գզիրներն ու օգնականը նրա ոտներից բռնեցին և քաշ տալով տարան անասունների աղբով լիքը մի գոմ ձգեցին, ուր սովորաբար Խաչթառակայ քեօխվաներն այդպիսի յանցաւորներին մի քանի օրով բանտարկում էին: Հէրիքը դարձեալ ճչում ու ողբում էր. նա ուզում էր առաջները կտրել Ստեփանին խլել, բայց անոյժ էր. նրան մտրակելով դուրս ձգեցին ամբօխի միջից, իսկ Ստեփանին բանտարկեցին հոտած գոմի մէջ:

Հէրիքը իւր երեսն ու մազերը պռճօկելով փոքր ինչ հեռացաւ և կալի աջ կողմով սլտտեց, եկաւ գոմի աղբածակի դրանը կանգնեց ու այնտեղից սկսեց իւր ամուսնու հետ ողբով խօսել: Հէրիքը ամբողջ մարմնով դողում էր, ամեն մի հեկեկանքը նրա անմեղ սիրտը կտոր—կտոր էր անում. չքկարողանալով աղբածակից Ստեփանին տեսնել և լսել նրա ձայնը, Հէրիքը ճուտը կորցրած թխսի նման այս ու այն կողմն ընկնելով՝ ուզում էր գոմի դուռը բաց անել: Նա աղի արտասուէքն աչքերին՝ ճիշտ կալմէջ արած եղան նման պտոյտ էր գալիս ժանդահոտ գոմի շուրջը, մինչև որ Ստեփանի ձէնը կը լսէր. նա կարծում էր, թէ կը մեռնի առանց իրեն տեսնելու:

— Ջան ջան, Հէրիք ջան, ջան. վայ, վայ... վայ մէջքս, վայ գլուխս. արինն աչքերս կալել

ա. վնյ, տեսնըմ չեմ, էա ո՛րտեղ ես, ա՛յ ես քե մատաղ, ձէնդ լսըմ եմ, իրեսդ տեսնըմ չեմ, վնյ...

Հէրիք ջան, մեռնիլ չեմ, քե մատաղ, վախիլ մի, իրեսդ պոճոկիլ մի, մաշերդ պոկ մի տալ, բեխեքս հմի սոված կտորուեցին, գնա՛ տես ո՛րդիւան ես երկու հաց ճարըմ. գնա՛ քե մատաղ, գնա՛, տեսնենք էս ի՛նչ փորձանքի մէջ ենք ընկել...վնայ...

Հէրիքը լսելով այդ բոլորը, չկարողանալով դրանը մօտենալ, ուզեց գոմից հեռանալ:

— Վնյ, վնայ... շարունակ լուսւմ էր դալ-լաքի ձայնը:

— Ջան, ջան, անտէր-անտիրական մարդ ջան: Հէրիքը պատասխանում էր ամուսնու վայոցին և աղիողորմ ձայնով լալով՝ գետնից հող էր վերցնում դէպի երկինք շարտում և այսպիսի անէծքներ կարգում:

— Ի՛հ...Մուսի...ո՛նց որ դու իմ խեղճ ու նաչար մարդին նհախ տեղը փորձանքի մէջ քցեցի՛ր, ... Սատճանից խնդրել եմ, որ քե էն օրը քցի՛...որ Ստեփանին էրնակ տաս. ո՛նց որ Ստեփանին ըրնի մէջ թթախեցի՛ր, էնպէս էլ քու ջիգարդանէն անընդամենը դառնայ. էն տեղն ընկնես, որ ջուր ուզես՝ ծո՛վերը ցամաքեն, միրգ ուզես՝ ծո՛ւերը չորանան. տնկես չկանանչի՛, ցանես չը պողի: Ինչ օրեր Ստեփանի կնիկն ա քաշը՛մ, նրանից վատթար օրեր Խանըմդ քաշի: Քրիստոս Ամինակալից խնդրել եմ, նա՛ իրան որդկերանց սուգ ու շիւանին նստի Ջատկի կանանչ-կարմիր կիրակի օրը: Նա՛

Խանըմդ, իրեսն էնդայդի պոճոկի, որ երկնքի Հաքիմն էլ դժբանայ սղացնել: Ի՛հ Վերնէին թագաւոր Աստօճ, տեղդ բացրն ա. տեսնըմ ես ըշխարիս խէրն ու բարին, շառն ու չարը. դո՛ւ էա հըրշարակների ըշխարիցը հուր ու կրակ թափես գէլ Մուսինի քիւլփաթի ջանին, օրին ու արևին. դո՛ւ հանգցնես նրա օջախը և կտրես կտրի ծուխը... Մուսին պակսի էս գեղիցը, բալի թէ՛ քեսսիբ—քիւսուբն ազատուի դրա ձեռիցը...

Այդ անվերջ և մարդու վրայ սառսուռ ազդող անէծքներով խեղճ Հէրիքն ուզում էր իւր կրակուած, բորբոքուած սերտը հովացնել... բաց այդ միջոցին՝ նրա ոտն ու գլուխը բաց, մերկ ու քաղցած, շատ լաց լինելուց աչքերն ուռցրած երեխաներից մինը թոթովեց.

— Նանի, սոված եմ, հաց եմ ուզում...

Երեխան ողբալով մօր առաջն էր գալիս: Հէրիքը մինչդեռ աչքը կը բարձրացնէր, միւս երեխանէրն էլ եկան լալով:

— Ջան, ջան, բալէք ջան, ջան, ձեր մօր աչքերը տրաքուի, ձեր ապինին սպանեցի՛ն\*), նրա սպանողին Աստօճ սպանի: Հէրիքը փոքր երեխին իւր արտասուլթաց գիրկ առաւ, միւսների թաթը բռնեց, գնաց սայլին հասաւ և կանգնելով՝ յանկարծ վիզն ուսովը ձգեց, սրտածմրիկ հայեացքով նայեց ճանապարհին մնացած սայլին և դող-

\*) Մահուան հասցրին:

դողունն ու լալագին ձայնով ասաց.

— Վայ, վայ, սէլս տէրը մեռածի նման մնացել ա ճամպին թող արած. վայ, մղկտայ Մուսի-նի ջանն ու օրը...

Պ.

Տղէտների խումբը այն լեռնանտառային մարդիկը՝ քեօխվայ, քեաղխուղայ, սուղեայ ու գզիր, մեծ-մեծ փափախները վեր կալած՝ ժողովուեցին զատարան, որը մի կատարեալ գոմի — անասնանոցի էր նմանում. նրանք անտեղեակ օրինաց ճշմարտութիւններին և մի կողմը ձգած արդարութեան օրէնքի յօդուածները, առանց փաստ ու վկայի, և վերջապէս, առանց խղճմտանքի ձայնին լսելու, սգիտաբար վճիռ կայացրին: — «Որովհետև սուղեայ Մուսէս Գիւլլակովը գիշերը տեսել ա, որ իրանց շան զաքին մի մարդ փախաւ դալլաքի տան վրայ (երևի Ստեփանն ա լել) և երկրորդ, որ Մուսէսի փեսայ Ալէքսին էլ միևնոյն կերպով ա վկայութիւն տալիս, վճռըմ ենք, որ դալլաքը՝ ես վեց թուման փող տայ Մուսինին, ես թէ փող չունի, իրան Ղուլի գոմէշը տայ փողի տեղը...»: Ահա գիւղական դատաւորների փաստը, վկան և խիղճ ու դատաստանը: — Այդպէս ուրեմն վճռեցին՝ անմեղ Ստեփանին, սգէտ և անլեզու քեասիբի ընտանիքի միակ յոյս 120 րուբլիանոց Ղուլի գոմէշը երեսուն մանէթա-

նոց քամարի փոխարէն խել և տալ Գիւլլականց Մուսինին:

Խղճմտանքները կորած էր: — Քեասիբ Ստեփանին սոված, ծարաւ ձգել մի հոտած գոմի մէջ և դուռը երեսին փակելով ճաքացնել, նրա անմեղութիւնը յանցանք դարձնել և տասնեակ ժամերով դուռը բաց չանել. միանգամայն երևակայել անգամ չէր կարելի, բայց դա համբերութիւն չէր խեղճ Ստեփանի կողմից: Այլ՝ նա ջարդուած, տանջուած էր, կարծես Յուդաների աշխարհում, նա չէր կարողանում կողպած դուռը կտրել, բանալ, գզիրն այնտեղ դրան առաջը փայտը ձեռքին կանգնած էր... իսկ ներսը ողորմելի աղքատի շունչն արդէն ժանգահոտութիւնից կտրուելու վրայ էր:

Այդպէս քեօխվայ-քեաղխուղէքն ու գզիրը մի տարօրինակ և անարդար վճիռ երեկոյեան դէմ հրասարակաւ կարդացին Ստեփանի գլխին և բաց թողին նրան...

Ստեփանը, որ հոտած գոմի մէջ մեռելի գոյն էր ստացել, երբ դուրս եկաւ և իմացաւ որ իւր սիրելի Ղուլին դատաւորների համարձակ վճռով պէտք է Մուսինին յանձնուի, գոյնն աւելի սփարթնեց, և, հազիւ թէ սիրտ առնելով՝ նա վստահացաւ խօսքերով ընդիմանալ դատաւորներին ասելով.

— Քեօխվայ, քեաղխուղէք, ես մինչև մեռնիլս, աչքս բաց, զուր տեղը իմ աղպէրը՝ իմ աչքի լիս Ղուլի գոմէշս տալ չեմ, տալ չեմ Ղուլիս

աջու կուռս, բեխանցս կերակրողը...

Գատաւորները հազիւ թէ իմացան դալլաքի որոշ խօսքերը, դաժանացած դէմքով և սպառնացող ձայնով հրամայեցին իրենց օգնականին ու գրրին.

— Ադա, գնացէք էտ հառամզադի, էտ քաջալ շան տղի գոմէշը գոմից դուրս արէք բերէք... անամօթ, գոյ, քեօփաօղլի, մենք վճուել ենք և կառնենք կտանք, դու ինչդադար կուզես ըռէխդ շաղ տու...

— Տալ չէմ, պէտք ա ինձ սըպանէք, որ Աուլիս տանէք...

— Ադա անգաճ միք դնիլ դրա թարութօհմաթներին (սպառնալիքներին), գնացէք գոմէշը դուս արէք, կոճերը թակիլով բերէք. թէ որ խօսան, աղաքնիդ կտրեն՝ իրան էլ, կնկանն էլ թակեցէք՝ հալից քցեցէք:

Գզիրները փայտներն առան գնացին Ստեփանի ետևից: Ստեփանը Աուլի գոմէշը տուն էր արել ու դուռը ետնափակ տուել, նրանք աշխատեցին, բայց չկարողացան կոտրել, դատարկ ետ եկան և քեօխվայ-սուղիէքին հասկացրին բանի եռութիւնը:

— Ա՛, իրեք մարդով գնացիք ու դարդակ եկա՛ք. — գոչեց դաժան Մուսին:

— Ա՛, տալիս չի՛. — հարցրեց և քեօխվայ Կարապետը:

— Չէ՛. — պատասխանեցին նրանք:

— Մտիկ արէք դուք, էն քաջալ շան տղին, էն հառամթորսունին. էլի սաղ տեղ ունի հա... Քեօխվայ, վեր կացէք գնանք տունը գլխին փուլ ածենք, քարուքանդ անենք...

— Քեօխվայ, քեադխուղէք, դուք անօրէն բան էք ուզում անել. մարդին իրեն տանն, իրեն սեփական յարկի տակ ուզում էք թակել, ծեծել ու զուր տեղը գոմէշը խլէլ, մեծ յանցանք էք գործում Աստուծոյ և օրէնքի առաջ...

— Էտ քու խելքի բանը չի, դու գնա՛ քու այիբ ու բէնը կրթացրու մոնթերիդ. — խոժողուած դէմքով ասաց Մուսին Թիֆլիսից ամարանոց գնացած մի ուսանողի և ապա արհամարհանքով լաղ արաւ՝ ծիծաղեց վերան: Վերջինս վշտացած գլուխը շարժեց և զատարանից դուրս եկող բառբարոս լեռնականներից բաժանուեց, գնաց դէպի իրենց տան կողմը, նստեց պարտիզի բարձր թմբի վրայ և դիտում էր, թէ քնչ պիտի անեն սպառնացողները:

Կարապետ քեօխվան, որին քիչ ժամանակից յետոյ «հոգոցն հանգուցելոց» արին, սուղեայ \*) Մուսին, լայնաբերան Արզմանը... և թեթևալիկ սուղեայ Թևոն, գզիրները, Մուսինի փեսայ Բալաբէգը, որ լաւ գաւազանամարտութիւն գի-

\*) Գիւղերում սովորութիւն կայ, որ քեադխուղա մարդկանց, որոնք թէկուզ պաշտօնի մէջ էլ չըլինին, քեօխվայ, սուղիայ պատուանուններ են տալիս:

տէր... այդ բոլոր մեծափափախները միասին ուղևորուեցին դէպի խեղճ դալլաքի տուն, որի դրան առաջ կանգնած էին մարդ ու կին և խորհրդակցում էին, թէ ինչպէս պաշտպանուեն:

— Եհէյ, ա՛հ հարամգադա, ա՛հ քէօփաօղլի, ա՛հ շան տղայ, փախչես ոչ, էս ա դալիս ենք կողքերիդ սաղ մեացած ոսկունին էլ փշրենք, որ մեզ նոր ճնանչես, թէ ո՞վ ենք մենք: Դու մզեար քանի գլխանի ես, որ մեր գգիւրներին դարդակ ես ետ դարձնում, և մեզ՝ դադարանիցը տեղըհան անում:

— Քաջալ, հմի կը տեսնես իմ տղութինն էլ, քո՛ւնն էլ... Ըտեղ կաղնի, փախչես ոչ, հմի տեսնենք ո՛ւմ նանը լաց կլի, քունը՞, թէ մերը. — դեռ հեռուից բարձր ձայնով սպառնալիքներ կարդացին գնացողները և քայլներն արագացրին:

— Քեօխվայ, հառամգադի կնիկը լաչառ ա, որ գնաք՝ ձեզ պահեցէք, թէ չէ քարով փետով անմեղ կըտայ. էլվխտ քիչ էր մնում մեզ կտորէր, կամաց սաց գգիւրը:

— Որ գնանք, ձեզ որ հրամայեմ թէ՛ տուէք, էլ չխնայէք. — պատասխանեց քեօխվեն

— Վայ թէ տուն մտաւ դուռն էլի փակեց, քեօխվայ, էն վախտն ի՞նչ անենք:

— Ինչ դենք անիլ, կտրովն էնդադար քար նի ածիլ կտամ, որ ըռխիցը-հետ լցուի. — պատասխանեց Մուսին:

— Սուղեայ, քեօխվայ, դուռը որ փակի կը-

տուրն ըլենք, վայ թէ թուանք ունենայ տակի՛ուց (ներքևից) կրակ տայ:

— Քեօխվայ, դրուստ ա ասում, էլվխտ էն քաջալ հառամգադէն թուանքի տնրմ էր տալի...

— Ըհը՛, ըհը՛... ծիծաղեց քեօխվեն, — ստանայ շունը նհենց զարաղոխրու \*) ա տուել, որ վախենաք, տուն չը մտնէք:

— Բալարէզ:

— Հէյ:

— Քաջալին ես լաւ գիտեմ, որ Աթո ալինի կալի զոլովը փախչիլ դի, դու նհէ բցըըհան պատտու, որ եալի քամակովն առաջը կտրես: Մուսինի փեսայ Բալարէզն իսկոյն փեշերքը քլուանդ արաւ գօտին խրեց և դաշոյնի դաստից բռնած կուզուկուզ պտտեց բլրի ետևով, իսկ քեօխվայ-սուղիէքը գնացին ուղիդ ճանապարհով:

— Քեօխվայ, ասում եմ գոմէշը հանիւուց ետը՝ հառամգադին քե տամ՝ ոտն ու ձեռը կապած տանես Թալեն, ի՞նչ ես ասում:

— Ի՞նչ դեմ ասիլ, կը շտանեմ մեր տանը մի քանի օր կպահեմ, ըշտրափ էլ կ'առնեմ, վե կը կըթողամ էլի:

— Մո՛ւսէս, վախրմ թէ էտ հառամգադայ-քեօփաօղլին գնայ բացը տեղը խնդիրք տայ, մեզ փռնեն. — սաց քեօխվեն:

— Հը, հը՛, հը՛, մսխարայ եսանը՞մ. — ծիծաղելով սաց դաժան Մուսին:

\*) Սև երկիւղ (թուրքերէն թարգմանած):

— Ընչի՞ եմ մտխարայ անըմ, գնաց, գնաց, նահլաթը չար սըտանին:

— Նրա հըմար եմ ծըծաղըմ, որ էն դունչը կապած մոզուցը դու վախըմ ես, լսւ, նա գնալու, խնդիրք տալու ճամպայ ա իմանը՞մ, նրա բերանըմը լիզու կայ, որ դանգատուի՞. մին էլ էս որ՝ թէկուզ գնայ էլ, մեզ պէս մարդկերանց խօսքը խու ծուխ չի դեն նրանը դղիլ. ընդեղ նճենց մարդիկ ունեմ, որ դրան սո՞ղ-սող կտրատելիք տամ...

— Ե՛... Տանաք արի, էս ա գլուխը թակիլով գոմէշը խլելու ենք քե տանք. — ասաց Արզմանը:

— Ս ուսէս, գոմէշը խլելուց եզը քաջալին հետս տանիլը լաւ չի, մենակ եմ գնալու, համ էլ՝ ընտեղ մի քանի լիզուանիկ հառամզադէք կան, բան ժաժ կըտան, թողենք կորչի...

— Դէ լաւ, էտ դու գիդես, քե՛օխվայ, ամա վատա թակիլով հալից քցիլ տամ, շատ եմ քեափար-քեափար լե՛լ շան տղի վրայ. գզիլն ասըմ ա մեռած ըբխանցս գերեզմանին փիս ուշուսց ա տուել...

— Ինչքան ուզում ես ջարդի, ո՞վ ա աղաքդ կտրըմ. — պատասխանեց ախմախ մականուանուած Կարապետ քեօխվեն՝ մօտ 300 տան շինական կառավարութեան տանուտէրը, որն աղքատներից այնքան հաւ ու ճիւ էր կերել, որ ուսերն ու վիզը բաւական հաստացրել էր: Այդպիսի խօսակցութեամբ նրանք մօտենում էին անմեղ յանցաւորի խրճիթի դրանը...

Ե.

Ստեփան, քե մատաղ, ութն են ութը. — երկիւղալի ձայնով ասաց դալլաքի կին Հերիքը, երբ գնացողները բոլորն էլ տան դիմացի թմբի գլուխը դուրս եկան:

— Հինգն են, ութը ո՞րդեան ա. — Ստեփանը նույն ձայնով պատասխանեց Հերիքին:

— Լաւ մտիկ արա՛, հրէն, հրէն հինգը թմբի աջու ղոլովն են դալի, իրեքն էլ ձախու. Բալաբէգըն էլ ա հետները, թակիլ դեն, տոււն մտի, տոււն մտի:

Ստեփանը լսելով Հերիքին և զգալով, որ չի կարող իւր թօյլ ուժով դիմադրել խմբին, Հերիքի և մանր երեխանց հետ մտաւ իր խրճիթը ու դուռը ետնափակ տուեց:

Անիրաւները Լանկթամուրի նման շրջապատեցին աղքատի խրճիթը, միայն այն զանազանութեամբ, որ չկրակեցին նրան: Սակայն տան չորս կողմն էլ քար ու խիճ չըմնաց, բոլորը ծխանքից ներս թափեցին տոււնը լցրին, որտեղ վայնասու ձայնը մարդու սիրտ էր ճմլում...

— Գուռը փերթահան արէք, նի մտէք թիքա թիքա արէք. — լսուեց Մուսինի անողորմ հրամանը և ներսում ճաքացրեց աղքատների սիրտը: Քարերը կարկուտի պէս թըմփ-հա թըմփ ներս էին թափւում:

— Վայ, նանի ջան, վայ. վայ ոտս, վայ...

— Վայ գլուխս սլատլեցին վայ... — քիւնջ ու պուճախը փախչելով կամ մօր փեշի տակ մտնելով լալիս էին երեխաները, իսկ ծնողները շփոթուած չէին իմանում երեխանցը պաշտպանեն քրքկարկուտից, թէ փեղկահասն եղող դուռը: Երեխայքը ճրճում էին այնպէս, որ մարդ ասում էր փորները պէտքէ պատուռի:

— Ջան, ջան, անօրէն ըշխարքմ ծնուած որդիք ջան, ջան, ծալքի տակը մտէք, ծալքի տակը, Հէրիք, բեխանցը կտորեցին, ծալքի տակը կոխի, ես դուռը կպահէմ...

— Ստեփան, դուռը փշրեցին, մէջքդ պինդ դէմ արա, պինդ դէմ արա... Բայց, լսուեց փեղքահասն եղող դրան ձայնը:

— Վայ, վայ, արինհէղուլթին դի լիլ, բացահանչեց երկիւղած կինն աղիողորմ ձայնով և ծնողների լաց ու կոծը միախանուեց երեխանց ճչոցին:

Ստեփանը տեսնելով, որ կարկուտի պէս թափուող քարերից չեն ազատւելու երեխայքը, դրան փակիչը դուրս գցեց ու դուրս փախաւ, որ գազաններն իրենց ետևեցն ընկնեն, որպէսզի անմեղ երեխաներն ազատուեն անգութների հարուածներից: Ստեփանը դուրս պրծաւ տանից, Հէրեքն էլ նրա ետևեց:

— Ա՛ հառամզազայ, ա՛ քեօփաօղլի, էտ դո՞րն ես փախչում, փախչիլ մի, կաղնի, կաղնի, թէ չէ տուռի, տուռի, տուռի... — ասաց թեթևասուրիկ սուտլիկ Թևոն և «այնալի» հրացանի փամփուշտը՝ պատրո-

նը տեղը դրեց, մեկնեց, որ արձակի: Ստեփանը վախից կանգնեց, իսկ Հէրիքն արգէն բոբիկ ոտից բռնած բղաւում, հարայ էր կանչում դրան շէմքումը: Հրացանի կանգնեցրած սրսն ընկաւ գետին՝ Սուսինի փեսայ Բալարէգի գազանակի յանկարծակի հարուածից: Անիրաւը ետևի կողմից խփեց ու պարծենալով ասաց.

— Կերան, ճնանչեցիք ես ո՞վ եմ, Աուլին տալիս չի... էտա տհէ իմ անըմ հայ...

— Գո՛ւս արէք գոմէշը. — հրամայեց Կարապետ քեօխվեն:

Գայլերը նրսները յաջողացրին: Հէրիքը շէմքումը, իսկ Ստեփանը կալի բաշուծն ընկած արեան մէջ տրեփում էին, նրանց մօտեցող չկար հարևաններից: Աուլի գոմէշը տարան և հենց այն տանիլն էր, որ տարան: Աուլին տարան, Ստեփանի աղքատ ընտանիքը սոված, ծարաւ տուեն արած թողեցին, խրձան կէսը հանդումը մնաց միւս կէսը կալի մէջ:

Գալլաքը անկողին մտաւ, երեխանց դրուլթիւնն աւելի վատացաւ: Հէրիքն էլ չէր կարողանում մուրալ, ոտն ուռել էր և վէրք դարձել...

Ստեփանը հիւանդատեղից վեր կենալուց լետոյ՝ բողոքեց անիրաւներից... չարչարուեց, ունեցած — չունեցածը՝ հաւերը, պղնձները ծախեց, միքանի անգամ խնդիրներ գրել տուեց, բայց մինչև օրս էլ՝ բան չը դուրս եկաւ: Վերջերս էլ մի աղերսա-

զիր գրել տուեց ուղարկեց ուր հարկն է: Իսկ Ղուլին քեօխվայ — քեաղխուղէքը հերթով իրենց սայլում ու քաշանում լծեցին...

Այդպէս Գալլաքի վերքը անբուժելի մնաց և այնուհետև աւելի աղքատացաւ...

## ՇԱՇ ՊԵՏԻՆ ԵՒ ԳԻԺ ՈՒՅԱՆԸ

Մի առաւօտ լոյսը նոր բացուել էր. գարնանային արեգակը իւր մի ահանջով պռուռնգ էր արել արևելքից դէպի արևմուտք և սար ու դաշտ լուսաւորել էր դեռ զովաշունչ լուսով: Իսկ Խաչթառակ գիւղի վրայ դեռ ևս հովանաւորուում էր սառն և մուգ ստուեր, որի պատճառը Կարմիրքար կոչուած լեռնաշղթան էր, որ հարաւից հիւսիս ձգուած՝ ուղիղ պատի նման կանգնած արգելում էր արևի թեք ճառագայթներին զիպչել Խաչթառակ գիւղին ու հանդին: Գիւղացիք թերթաժ եղած իրենց բնակարաններից, իւրաքանչիւրն շտապում էր իւր գործին: Գիւղամիջից աջ ու ձախ անցնողները զիւղական համեստ «բարի լիս»-ով ողջունում էին միմեանց: Կով, գոմէշ, ոչխար ու տաւար, նախրչիները քշում էին դէպի դաշտը արօտատեղերում արածեցնելու:

Գաշտերի մատղաբոյս կանաչներն արեգակի շողի առաջ մարմարի գոյն էին ստացել. մարդ որ անցնում էր այդ կանաչների միջով մինչև ծընկները ցօղի մէջ թրջւում էր. սակայն արեգակը հետզհետէ բարձրանում էր, որ ցօղը ցամաքեցնէր:

Գարնանային բնութիւնն ուրախ էր իւր պարունակութեամբ—գեղջուկներն ու գեղջուկահիւները բոլորն իրար խառնուած աշխատանք էին սկսել, կենդանիներն արդէն արօտ էին հասել, հովիւն ու նախըջին հնչեցնում էին իրենց քաղցրահնչիւն սրինգն ու պիտուն. սակայն, խաչթառակցի աղքատ Պետին տխուր, վերաւորուած, մի կարճ փայտ ձեռին, գլուխը կորացրած գնում էր դէպի Ուհանի տուն: Պետին հագին համարեա թէ շոր չունէր, մերկ էր—շելա շապկի միայն վզի օղակն էր մնացել բզին հուպ տուած, ետևի կողմը պոկ եկած էր, իսկ առաջից թեւի նման երկու ծանգլ էր մնացել կախ ընկած. շապկի վրայից հագած հորագործ չուխէն չէր կարողանում ծածկել նրա մարմնի բաց տեղերը, անտրավարտիկը բոլորովին գծծուել էր և բաց ծնկները փշերից ու կառներից հարիւր ու մի տեղից չանկոտուել արիւնը բաց մսի վրայ չորացել էր, այնպէս որ այդ բոլորի հետքերը նոյն իսկ մի քանի սաժէն հեռաւորութիւնից արդէն երևում էր: Պետին գլուխը դեռ չէր բարձրացրել, նա մտքի դօնն ընկած գնում էր:

— Բարի լիս, Պետի, էտ ո՛ւր ես գնում:

— Բարին արևիդ. — շատ ցածր ձախնով պատասխանեց Պետին իւր համագիւղացու ողջունին. — Ուհանի տուն եմ գնում:

— Ի՞նչ կայ:

— Սչառս տարել ա, տալիս չի...

— Ե՛. բաս զուր ես գնում. նա քեզ բան

տուող չի. հերու էլ (անցեալ տարի) Սաքոյի կովը խլեց...

Պետին յոյսը կտրեց նրան հանդիպողը, բայց նա դարձեալ շարունակեց, գնաց Ուհանի տան ետևը՝ չափարի տակ կանգնեց և սկսեց կանչել անգութ Ուհանին:

— Ուհան, Ուհան, էհէ Ուհան...

— Հի՛յ. էտ թնջ ա, Պետի. — վերջապէս սրահի տակից գլուխը հանեց գիժը և պատասխանեց:

— Ուհան, աչառս խի՛ ես տարել, ա՛ քե մատար:

— Սչառդ ո՛րն ա, ա՛դա:

— Ո՞նց թէ աչառդ որն ա, հէնց ասում ես, լէյի թէ բանի խո՛բար չլես. խի՛ գլխում չես աչառս որն ա՛:

— Չէ:

— Հմի դու աչառս գիտում չես:

— Չէ. — կրկին բացասական պատասխան տուեց Ուհանը, բայց այդ բաւական չէր, դեռ աղքատի վրայ ծիծաղում, լաղ էլ էր անում: Բայց օրը բարձրանում էր, Պետին դաշտն աշխատանքի պէտք է գնար, ըոպէն թանկ էր աղքատ երկրագործի համար, նա սրտի այրուելուց սկսեց թուել իւր աչառի բոլոր արտաքին նշանները:

— Ս՛յ տղայ. աչառս էն ցցապող, երկու աչքունքանի, պոչը երկար, ծէրը ծաղիկ, թափանալի, գլուխը կո՛պալ, դարաշալուար անասունն ա, որ

սրանից էրկու ամիս առաջ շակիս հետ փոխեցիր. իմացար հմի:

— Իմացայ, փոխեցի, հմի էլ խլամ եմ, աղաքս ո՞վ ա կտրում, քեփս չի:

— Ա՛, ո՞նց թէ աղաքս ո՞վ ա կտրում, ապրանքի տէրը ես եմ, դո՛ւ ես տիրապետո՞ւմ. մըգեար աշխարս հալա-հալայ ա՛:

— Քու ապրանքը շակն ա՛, շակը, որ հրէ, է գետի զրաղին շան ու գիլի փայ ա դառել. — Ու-հանը հեռուում շակի լէշը մատով ցոյց տալով աղ-քատին, պատասխանեց շատ սառը կերպով:

— Ո՛ւհան, ա՛ քու տունդ չքանդուի, դու ա-չառն էն պայմանովը տըւիր, որ շակը ես սըտա-կի եա գետըմը խեղդուի, ետոյ ետ խլէս:

— Բա դու լղար կեկուի, ջանը ցաւոտ՝ աղջա-ւազ շակը ինձ տուիր, որ գնայ գետն ընկնի խեղ-դուի, աչառս տանես լծես, վնասը ես քաշեմ...

— Ո՛ւհան, Ո՛ւհան, հաւը որ հաւ ա, եբոր ջուր ա խըմըմ, գլուխը բցըըցնըմ, աչքերը պլե-քըմ ա վերև, Ասծուն մտիկ ա անըմ, փառք ա տալի և էլի խըմըմ. ա՛ տնաքանդ, դու խու մարդ ես, ընչի՛ ես անաստօծ-անաստօծ խօսըմ. սրանից երկու ամիս առաջ առուտո՛ւր ես արել քու հարե-ւանի հետ՝ ա՛չառ ես փոխել, ետոյ՛ շակը տարել ես գետը գցել սպանել, կաշին մաշկել տանդ դը-րէ՛լ. դէ հմի դու ինքդ ասա տենանք՝ էտ ո՞ր Աս-տօծը վե կունի, բա խղճմտանք չունես, բա՛ վերև Աստօծ, ներքև գետինք չկա՛յ. բա դու քրիստոնայ

չէս. քե հըմար ամօթ չի, ուսում առած մարդ ես, դու որ ինձ նման խեղճերին ոտի տակ ես տալի, անուսումն ինչ կանի: Չէ որ դուք՝ տիրա-ցուներդ Աստօծաշնչի մէջ կարդըմ էք «Մի ցան-կանար քու ընկերի եգանը, մոզո՛ւն, իշին և էն ամեն բանին, որ նրանն ա». տիրացու Ուհան, բա՛ ես խոզ ըրցնող եմ, էս բանը գիտըմ եմ, հըս-կանըմ եմ, դուք որ մարդ ըրըցընող՝ կըրթացող էք, ժամըմն էլ ամենից առաջի տեղն էք կաղնըմ՝ կարթըմ, երգըմ..., հսկանըմ չէք: Վայ, վայ, վայ ես ձեր ուսում տուողին ինչ ասեմ հա՛. ա՛ ձեր ուսում տուողի տունն Աստօծ քանդի, անըմնիդ յուսումական էք արել, ամա ինչ փիս-փիս բան ա-սես ձեզանից ա դուս գալի... մնին պարտքակոխ էք անըմ, մնին գոռի խեղդըմ, մնի մոզին, մէկէ-լի էշն էք խլըմ, եա թէ չէ՝ տասը մանէթով կըշ-տերնիդ մարդի սաղ տարի նեօքար էք պահըմ...

— Շաշ Պետի, ձէնդ կտրի, գլխիս գիլի աւե-տարան մի կարգալ, ռադ լի կորի, թէ չէ կը գամ էնդադար կըթակեմ, որ թան խմելուց կընկնես. — կոշտ, անախորժ և սպառնական ձայնով պատաս-խանեց նրան տիրացու Ուհանը:

Իսկ Պետին շարունակելով իւր իրաւացի նկա-տողութիւնները, մօտեցաւ անասունների խմբին, ջուկեց իւր եզը, քշեց դէպի իրենց տան կողմը, կարծելով, թէ իւր խօսքերը, գեղջկական քարոզ-ները որ և է ազդեցութիւն ունեցան տիրացու Ուհանի քար սրտի վրայ:

— ԵՏԷ՛, ա՛ սարսաղ, էտ ո՛ւր ետ տանըմ էտ եզը, գլուխդ քոր ա գալի՛. — ասաց զիժ Ուհանն ու մի դազանակ առաւ վազ տուեց զէպի նա, և հասնելուն պէս մի քանի հարուած տուեց նրան: Պետին դազանակը խլեց և շարտեց զցեց մօտիկ չափարը: Գիժը ձեռքերն իսկոյն գրպանը տարաւ, բայց ոչինչ չգտաւ, վազեց տուն, կատաղած կրկին դուրս նետուեց, յարձակուեց աղքատի վրայ. ինչպէս երևում էր տանից զանակ դուրս բերեց:

— Հօ, հօ քե մատաղ, բիժի ջան, բիժի ջան...: Եզը փախչում էր զէպի հին տիրոջ տան կողմը, իսկ Պետին աղաչելով վազում էր, որ առաջը կտրի:

— Ա՛, տօ թաբլու (դեւահար), քե՛ չեմ ասըմ տանիլ մի եզը, տլական չե՛մ. — գոռաց անիրաւը, յանկարծ վրայ ընկաւ բռնեց աղքատի վզին մնացած յետին հնոտի շապկի օղակից (օձիքից) և հաչհոյելով սկսեց ձգձգել, պատռտել, մերկացնել նրան:

— Ո՛ւհան, ուշունց մի տալ, ուսում առած մարդ ետ, խախը կը լսեն, ամօթ ալիբ ա...

Ուհանը մի ձեռով բռնեց ձեռքից, միւսով միքանի անգամ բռնցքեց նրա գլխին: Պետին չէր ուզում խփել դեռ: Գիժը եզը խլեց ետ տարաւ, իսկ Պետին շարունակեց իւր ճանապարհը զէպի գիւղամէջ:

Աղքատ Պետին զիժ Ուհանից ուժով էր. նա կարող էր Ուհանի պէս երկուսին ծեծել, բայց նա համբերելու պատճառներ ունէր — նախ այն՝ որ

Ուհանն իրանից հարուստ էր և երկրորդ՝ նա շատ լաւ գիտէր, որ ինքն ինչքան էլ արդար լինի, այնուամենայնիւ քեօխվի առաջ մեղաւոր պիտի ճանաչուի, ո՛ւր մնաց թէ անարդար ժամանակ. ուստի չհամարձակուեց ձեռք բարձրացնել տիրացու Ուհանի վրայ:

— Տէր Աստօժ, ուսում առած, կարգացող, գրի սեն ու սիւտակն իմացող մարդն էլ էսդայդի անիրաւ, էսդայդի անաստօժ կլի՛. — ինքն իրան ասելով, զարմանալով Ուհանի անխղճութեան վրայ, Պետին վշտացած գնաց գիւղամէջ, մի ցորենի հորի մօտ կանգնեց, ուր տանուտէրը հորից ցորեն հանելով էր զբաղուած:

Պետին փափախը վեր կալաւ և ասաց.  
— Բարի աջողըմ քե, քեօխվայ ջան. — պատասխան չստացաւ:

— Քեօխվայ, ասըմ եմ բարի աջողըմ. — ձայնն աւելի բարձրացրեց նա, բայց էլի պատասխան չստացաւ: Պետին քիչ էլ մօտեցաւ հորին:

— Քեօխվայ ջան, բա՛, Ա՛ստօժ վե կունի՛, որ էրկու ամիս ա՛ եզն եմ փոխել Ուհանի հետ, հմի գլուխս թակելով ետ ա առնը՛մ. — նա ուղղակի սկսեց զանգատուել. թէև քեօխվից դեռ իւր ողջունի պատասխանը չէր ստացել, սակայն անիրաւ քեօխվեն էլի անպատասխան թողեց նրան. մինչև զանգատի վերջն անգամ տանուտէրը իւր գլուխը չը բարձրացրեց և չնայեց աղքատի երեսին: Պետին խեղճ — խեղճ ձայնով էլի կրկնեց, էլի աղաչեց.

—Քեօխվայ ջան, բայ թնչ ես ասըմ, անց անեմ, հոռնծս՝ բանս մնաց. տանս էլ սոված են.— քեօխվեն լուռ էր:

—Քեօխվայ, ես քու որդկերանց արևին մատաղ, բանս մնաց. մի պատասխան տո՛ւ, մի բան՝ մի հա, ես չէ էլա սոսա տենամ:

Գիւղումը Պետին Շաշ անուն էր ստացել, որովհետև աղքատ էր, ուժ չունէր, որ խօսքը դուրս տանէր, ուստի լաւ ասէր, թէ վատ, արդար, խելօք չիմար, բոլորը չիմար էին ընդունում: Քեօխվեն էլ էր նրան չիմարի տեղ դնում, որովհետև գիտէր, որ Պետին իրեն, հակառակ գէպքում, չի կարող վնասել՝ մեծին զանգատուել և բացի դրանից. նա դեռ աղքատի գրպանից ակնկալուածիւն էլ ունէր: Մարդակեր քեօխվեն երկար լուռթիւնից լետոյ, սպառնաց ասելով.

—Ս՛ շաշ, գլուխս քոնի ցաւացնես, տենըմ չես ցորեն եմ հանըմ. ուզըմ ես ետ դառնամ գլուխդ էրկու կէս անեմ...

—Քեօխվայ ջան, համարձակութիւն չլի, դու ցորեն ես հանըմ, անոշ լի քե, ամա իմ բանը մնըմ ա, մենակ, աղքատ մարդ եմ, խափան եմ մնացել, մի բան ասա...

—Ի՞նչ բան, թնչ եզը, թնչ խափան. դո՛ւս տուր տենանք (ասո՛ տեսնենք):

—Վի՛ր, քեօխվայ ջան, բա մայցար ո՞չ, հինգ վեց հետ ասեցի խու:

—Փետս վե դեմ ունիլ էս ախմախի գլուխը

ճղիլ հա. թիւնբաթիւնի տղայ, հա՛, էն ա քեօխվեն էլ քե պէս շաշերի գլուխն ունի, որ բան ու գործը թողի, քե պէս իշին լսի էլի:

—Քեօխվայ ջան, բա մնէլ ասեմ.

—Մնէլ ասա, հլա տասնըմին էլ. թէ կուգես, ըսկի ասիլ էլ մի.— ասաց տանուտէրը և խռովածի պէս երեսը շրջեց ու դարձեալ սկսեց ջուալի բերանը կապել:

—Քու որդկերանց գլխովը մատաղացուի պէս պտիտ գամ, քեօխվայ ջան, դալաթ արի, որ քեփիդ գիպայ. լսի, ասեցի թէ՛ սրանից էրկու ամիս առաջ, տիրացու Ուհանի հետ առուտուր եմ արել, գոմշիս շակը փոխել եմ նրա աչառի հետ. ջուրը վարարած վախտը շակը տարել ա գետն արել խեղդել, կաշին մաշկել տանը դրել ու աչառս էլ խըլել ա տարել իր տւարի մէջն արել: Սօր գնացի դաչանք, պղատանք արի, որ ետ տայ, գլուխս թակեց ճամպայ դրեց. մթամ էտ քիչ էր, մեռելնիս էլ տեղըհանն արաւ գերեզմանից՝ ամենի քեալլին (գագաթին) էլ ուշունց տրւեց:

Քեօխվեն լսելուց լետոյ՝ իբրև թէ դատաստան կտրեց, իբրև թէ Պետինի դարդին դարման արաւ՝ նա դարձաւ և հեգնական ձևով ասաց.

—Ուհանը քե թակեց:

—Հրաման քե, քեօխվայ ջան:

—Շնտ լաւ ա արել Ուհանը, սպանած դէր քե. տօ՛, բա վիզդ ընչի՛ ես էտղադար հաստացրել, որ նա էլ ա քե թակըմ...

—Քեօխվայ ջան, նա կարալ չի ինձ թակի, ամա հարուստ ա...

—Գնա, գնա, գլխիցս ռանգ լի, կորի—սուտ խուռ չեն ասըմ, թէ «Պետին շաշ ա» անօթ էլ չես քաշըմ բոլիցդ, եկել ես գանգատըմ թէ՛ «Ուհանն ինձ թակեց»։ գնա, կորի, կարըմ ես դու էլ նրան թակի եզդ տար, կարըմ չես, տանդ վեր ընկի. քե պէսների եզն ով ասես, կուտի. սուտ խուռ չի ասած թէ՛ «գիժը կը դադի, խելօքը կուտի»... Պետին մի փոքր լուռ մնալուց յետոյ դառը սըրտով, վիրաւորուած հեռացաւ տանուտէրից...

Փոքր ինչ անցաւ, Ուհանի կալի մօտ կրկին աղմուկ բարձրացաւ:

—Տիրացու Ուհան, բա հմի դու եզս տալիս չես էլի:

—Քոռ ես, տենըմ չես, որ տալիս չեմ:

—Բա, ասենք եզս խլըմ ես, կաշի՞ն...

—Ընչի՞ կաշին:

—Շակի:

—Կաշին էլ չեմ տալի:

—Խի, մի սաս տենանք:

—Քե հըմար եմ չըրջարւել շակը գետիցը հանել, մաշկել, աղ արել, չորացընել...

—Բա հմի դու էրկուսն էլ տալիս չես:

—Ձէ, չէ. տալիս չեմ, գնա որդի սըզըմ ես, գանգատուի:

Պետին մտքի հետ ընկած, կրկին մօտեցաւ անասունների խմբին, եզը ջոկեց, որ քշի, գիժ

Ուհանը յանկարծ դանակը սրած՝ դուրս ընկաւ տանից և հասնելով նրան, եզան առաջը կտրեց:

Այստեղ արդէն ղալմաղալն աւելի ուժով ըսկուեց:—Սըբատ շաշն և գիժ հարուստը, փոխադարձ հայհոյանքներով, յանկարծ իրար դմփեցին:

Պետին Ուհանին մի ձեռով շարտեց գետին, բայց ասը սրտուժն էր: Ուհանը թշի աքաղաղի պէս վեր կացաւ էլի կպաւ Պետինի ետիցը. վերջինս մի թեթեւ հարուածով կրկին գետին գլորեց նրան, որի քիթը հողումը տնկուելուց արիւն գցեց... Ուհանի տեղը որ նեղացաւ, գրպանից սըրած դանակը հանեց, յանկարծ խրեց Պետինի ազդրի փափկամսի մէջ: Պետին վայ կանչեց և ընկաւ գետին, իսկ Ուհանն ազատուելով նրա ձեռքից, եզը ետ տարաւ:

Հարան հասաւ Պետինի կին Խանուժին, որ ճչալով եկաւ ընկաւ վիրաւորուած ամուսնու կուռը և լաց լինելով տարաւ քեօխվի տուն. ինքը չխօսքան լինելով տանուտէրից, քթկալը վերև քաշեց, փարդէն ներքև՝ երեսը համարեա ծածկեց և մի փոքր երեխայ կռնակը քաշելով՝ նրա բերանով սկսաւ դառնաղէտ գանգատ անել, բայց անիրաւ քեօխվին, իրեն առաջուայ գիրքը տալով կնոջ վրայ էլ բարկացաւ սաստիկ.

—Ս՛ լաչառ, քիչ չուխիդ արա, մարդիդ վեր կալ տար քու քանդուած տուն, մինչև որ կիրակի օրը վճիռ տանք էտ մասին:

—Քեօխվայ ջան. քեօխվակնկայ հըմար էրկու

ոստ մանած կանեմ, քու որդկերանց գլխովը պտիտ  
գամ, աչառս ան տուր. նա տունս քանդեց, երե-  
խանցս սոված տուն արած թողեց...

Քեօխվեն զրանից յետոյ՝ կրկին լուեց: Պետին  
շարունակ ան էր քաշում, նրա վերքը երկիւղալի  
էր: Խանումն արտասուքն աչքերին մարդու կո-  
նակն ընկաւ կրկին և դէպի երկինքն անէծքներ  
ուղարկելով, տարաւ իրանց տունն, գալլաք կան-  
չեց դանակի կտորուստը մսից հանել տուեց, վեր-  
քի վրայ մահլամ դրեց, փաթաթեց, կապեց, բայց  
Պետինի համարեա ամբողջ մարմինն ուռաւ և նա  
անկողին ընկաւ միքանի ամիս. ամառուայ աշխա-  
տանքը մնաց թերի և թռչունների կերակուր  
դարձաւ. նրա լուծը մնաց տափին և առանց  
աշնանացանի: Նրա ընտանիքը, որ ութ հոգուց  
էր բաղկացած, քաղցեց, մերկացաւ, որովհետև  
տան տղամարդը՝ միակ աշխատողը միայն Պետին  
էր: Նրանց ալիւրն սպառուած էր, դաշտն ու  
մաղը դադարի, ոչ ոք չէր հարցնում, թէ քնչ են  
ուտում, ինչպէս են ապրում նրանք: Անցան  
աշունն ու ձմեռը. եկաւ գարունը: Խանումը շոր-  
ւով, թանեսպասով, փթռուկով, հիւանդն ու ըն-  
տանիքը պահեց, իւր սև օրերը անցկացրեց:

Մարտի վերջն էր արդէն. էշերն անգամ կա-  
նաչով կերակրում կշտանում էին: Սար ու ձոր  
նուրբ կերպով կանաչել էր, սինգրիկ, ձնէփակ,  
իշխատուտուկ, շուշան, խնդուղ, փիփերթ ու  
կոսթո, բոլորն էլ իրենց թւերը բարձրացրել էին

գետնից, երեխանցից ամեն մինը մի մի փայտ սրած՝  
ընկել էին հանդերն ու այգիները և պհրուցի  
տալով՝ արմտիք էին հանում ուտելու համար:

Պետինի աղքերանցից երկուսը հասած էին,  
նրանք էլ էին գնում հանդը բանջարեղէն բերում  
իրենց տունը կերակրում, մինչև որ Պետին վեր  
կը կենար անկողնից: Վերջապէս նա վերկացաւ  
մայիսի կեսին — այն ժամանակ, երբ բոլոր գիւղա-  
ցիք խոտի հունձը վերջացրել էին և մանգաղները  
սրած մտնում էին գարու արտերը: Աղքատ Պե-  
տին միայն երկու օրավար աշնանացան ունէր  
կնոջ շնորհիւ. նա հնձեց, բայց եզը չունէր, որ  
կրէր, կասէր: Եզներից մինն անիրաւ պարտատէրն  
էր տարել, իսկ միւսը գիժ Ուհանը: Խեղճը սրա-  
նից նրանից եզն ուզեց կասեց, բայց միւս տարուայ  
համար ցանքս չպիտի անէր — եզը չունէր: —

Այդպէս շաշը գատեց, գիժը կերաւ, մարսեց-  
կաշառակեր քեօխվեն էլ մինչև այսօր դիւան չկրտ-  
րեց: Պետին մեռաւ, Խանումն էլ նրանից յետոյ  
չապրեց...

### ԱՆՏԵՂԻ ՏՈՒՐ ՈՒ ԴՄՓՈՑ

Ամարային շող և սոթ երեկոյ էր — քամին կտրուած, շունչ քաշել չէր լինում. երկինքը պարզ չէր, աստղ բոլորովին չէր երևում:

Ղազախի Քարվանսարայ գիւղի ամեն կողմից քրտնքում մզուող հնձուորներն՝ ամեն մինը մի սարի լանջից՝ օրուայ տառն աշխատանքից յոգնած, վատտակած, ջարդուած — փշրուած ջանով տուն էին դառնում: Հնձուորների խօսակցութիւնն իրենց առօրեայ աշխատանքի նիւթի մասին էր, այսինքն՝ սրն իւր արտը հնձել, վերջացրել էր սալլ պիտի լծէր, սրը դեռ շատ ունէր հնձելու, սրը մշակ պիտի վարձէր, սրի հացն առատ էր, որինը պահաս և այլն:

Երկու հնձուոր՝ մինը Հաղօանց Աւագը, միւսը Վանխանց Պետին, տարօրինակ խօսակցութեան տաք-տաք վիճաբանութեան մէջ էին: Նրանց վէճն այն մասին էր, թէ Քարվանսարայ գիւղում ո՞վ ումնից հարուստ է: Երկու հարեանները շուտով բաժանուեցին գիւղամիջում և խօսակցութիւնը ընդհատուեց:

Պետին մտաւ իրենց սրահը, իսկ միւս կողմից՝ նրա եղբայր Ակոբը, որն այդ օրը պարտատիրոջ մշակն էր՝ փողի շահի կողմից:

Վարդավառի պաս շաբաթն էր ուղիղ: Պետին ու Ակոբը պապի տուած աւանդութեան սահմանից դուրս չը գալով՝ պէնդ պաս էին պահում և հետները վերկալած պաշարը՝ ճաթի (կորկի հաց) չոր ու ցամաք հացերը պարկի մէջ մէջքներին կապած տուն վերադարձրին, մանգաղները վերև՝ պատից կախեցին, երեսներն սւ ձեռքները լուացան և գետնին՝ մի հին քեչի վրայ ոտնմեկ նստուեցին:

Երկուսի թոշնած դէմքի արտայայտութիւնն ևս ցոյց էր տալիս, որ քաղցածութիւնից սրտները թլկտում էր: Պետին աջ ու ձախ՝ պուճտիսներին նայելով, դարձաւ կնոջն ու ասաց յուսահատ ձայնով.

— Ա՛ կնիկ, բա փիփերթից գատից էփել չէս. սրա պէս պասն անտէր լի, սօրի ջլիս սոված կտորուել ենք. էհ, մեր պապերն էլ բան են սահմանել էլի. էս եաղու լած ճաթերն էլ զան-ղուռութ զառան կերուան ոչ...

Պետին կին Չառիկը տեգորից չխօսկան էր. նա ոտով, ձեռով ու գլխով հասկացրեց, որ տաք տաք փթուակ՝ ալիւրով շինած կերակուր է պատրաստել ուտելու:

— Ռէ պի, պի. — այնպէս շտապ շտապ ասաց Պետին, որ սիրտը կարծես թէ սովից զնալիս լի-

նէր: Նա պարկից հանեց ճոթ ու կտոր զուռութ-  
ներն և բրդեցին ամանները լցրին:

Մութն էր: Նաւթի ձեռնհրաքը սիւնի ճակա-  
տից կախած մրոտում էր օճորքի գերանները  
և ծխախառն լուսաւորում սրահը: Պատի տակ  
վառած կրակի վրայ դրուած էր փթռուկի պղին-  
ձը և Ջառիկի տէգրակինը մի փայտէ երկար շիրե-  
փով խառնում էր: Երեխայքը կրակի մօտ կրկրած՝  
աչքները կթել էին ամանին: Նրանց մեծ շունը  
նոյնպէս դուռնչը դրած երկու ոտի արանքում,  
սպասում էր կերակրի մնացորդին: Միւս կողմը՝  
պատի երկարութեամբ մի ձող էր ձգած, որի վրայ  
նրանց երկարապոչ աքաղաղը աչքերը խփած նըն-  
ջում էր բոլոր հաւերի հետ միասին և երբեմն,  
կարծես երազ տեսնելով, ծորկ էր տալիս, կամ  
ինչպէս ասում են՝ սիրտը վեր էր խմում...

Ջառիկ հարսը ածեց ու մօտ բերեց տաք-  
տաք փթռուկի քրեղանները շարեց նրանց առաջ,  
թաթով սկսեց թրըմփացնել այս կամ այն երեխի  
գլխին, որոնք «նանի՛, փթլուկ եմ ուզում» անելով  
ամեն կողմից, անախորժ ձայնով ժանգ ու ժէն էին  
անում... խոնջէն արգէն պատրաստ, սառը շուրն  
էլ կողքներին էր դրուած: Խեղճերն այնպէս ա-  
խորժակով էին ուտում, որ ասում էիր այս է մատ-  
ներն էլ պիտի կուլ տան պատառների հետ...

Վերջապէս, Ջառիկն ու իր տէգրակին Նար-  
գիզն էլ նստեցին, քամակներն իրենց մարդկանց  
հակառակ կողմը շրջելով քթկալներն իջեցրին և

սկսան տաք-տաք փթռուկ հոռթ անել՝ խպշտել:

Գիւղականի համար արգէն բաւական գիշեր  
էր անցկացել: Նրանք պառկեցին քնելու: Քիչ  
ժամանակից յետոյ, երբ գիւղը խոր և խաղաղ քնի  
մէջ էր, երբ սև ծով դարձած մթութիւնը հետգ-  
հետէ աղօտանում էր խիտ ամպերի տակից  
պէծ-պէծին տուող լուսնի կարճատև շողերով, երբ  
մօտիկ անտառում հաւկուր բուն վայ էր տալիս  
իւր գլուխը և դաշտերում գիշերերգ թուչուննե-  
րըն իրենց գայլայլով գերազանցում էին իրար, այդ  
միջոցին մի տան կիսախաւար սրահի տակ մի տա-  
րօրինակ խօսակցութիւն սկսուեց: Պետինի ու  
Սկոբի ձայնն էր, որ քանի գնում բարձրանում  
էր անդադար:

— Ս՛ղա, Ս՛կօբ, լէյի թէ՛ քու քունն էլ չի  
տանելիս լի. — հարցրեց Պետին:

— Վայ է՛. քունը սրդեան ա, նո՛ւնջը սրդեան. էս  
անտէր լըւանը ջանս ջլիս քօս-քօս գցեցին. — միջատ-  
ներից նեղացած պատասխանեց Սկօբն ու լռեց:

— Ս՛, մի գրից էլ ա արա զըրցով լենք, էս  
անտէրների կծիլը մանանք ոչ է՛:

— Ի՞նչ գրից անեմ:

— Ես իմ. դէսից, դէնից:

Երկու եղբայրները զրոյցի նիւթ ընտրեցին  
իրենց համագիւղացոց՝ Ժօլտինի ու Վգրի հարս-  
տութիւնը, որի մասին Ջրվզի ձորից մինչև Ք.  
գիւղը Պետին ու Հադօանց Աւագ ապին երկար  
վիճել էին իրար հետ:

— Ա՛, Ա՛կորբ:

— Հէ՛յ:

— Դու շատ անխելք ես, ծաղի պակաս ա:

Ա՛դա, բա դու նոր ես զիզը՛մ, որ Վզիբը ժօլտինից հարուստ ա՛:

— Ա՛կորբ, դու էլ ես Աւազի խելքի մարդ լել հա՛. — նեղացած սրտով ասաց Պետին:

— Աւազը խելօք ա, քու դարդը քաշի, քնւ. սաղ աշխարը զիտըմ ա Վզրին, հմի դու փահլըլանի պէս ոտդ դէմ էս տուել թէ՛ ժօլտին նրանից հարուստ ա՛...

Այդ խօսքերով Ակորբը կարծուամ էր թէ կարող է եղբօրը համոզել, բայց իզո՛ր: Նա քանի խօսում էր, Պետին բորբոքուած գոռգոռում էր և այդ նշան էր, որ վերջը կռուելու է եղբօր հետ: Բանն այն տեղը հասաւ, որ երկուսն էլ բարկացան:

— Ա՛դա, ա՛ քեալլաբաշ, մի աչքդ բաց արա ժօլտինի դովլաթը տես է՛, ախրը նրա ճօթի դուքանը ջոկ, արաղինը ջոկ. չլնգարինն\*) էլ չեմ ասըմ, բաղը բաղչէն, ճանճի տիրքը՝ (մեղուների փեթակների կոյտը) ու էնպէս խօսա էլի:

— Տէ՛ր իմ Աստօճ. ա՛, տօ գլխամեռ, նրա ճօթի, արաղի ու չլնգարի դուքաննին, նրա բաղ ու բաղճէն էն չէր, որ Աղգանայ գետի սալ ու սալաւի փայ դառաւ. չէ՛ որ մէկել — մէքսէլ օրն էլ գեղմիջըմը տիրացուն կարգաց, դուէլ՛ էտ

\*) Փականագործինն:

քառ ընկճներովդ մացար, որ էն սալ ու սալաւի խաբարը քաղաք ա հասել, յուսուճականնին էլ կաղէթըմը գրել են. դէ հմի ասա տենանք. ժօլտինի հարստութինը որն ա:

— Ա՛րա, ա՛ Բլնդէօշ ուտող մեռնես դու, բա ըսկի մացել չես որ ժօլտին աշխարովս մին հին փող ունի՛:

— Ա՛, տօ կոմբալազուխ փչացած, ժօլտինի հին փողերն էն չէր, որ Աթոն Ասլանանց Սրգսի հարիր մանէթի հեա զո՛լ տարաւ...

— Հլա՛, հլա՛ ըռխին մտիկ արա...տօ մեռած, Աթոն՛ քու թայն ա՛, խի՛ ես ըռէխդ շաղ տալի, որ իմանայ ու քեանից էլ նեղանայ էն յուսուճական մարդը:

— Ո՛րտեղ ա, որ իմանայ, նա էլ քե պէս բեդասլն էր՛ զնաց, Ռուսէթայ վրայ կորաւ, ջահանդամւեց...

— Տէ՛ր մեղայ քե. ա՛ տօ զիլըռէխ մեռած, դու քանի ըռէխդ շաղ տաս. ձէնդ կտրի՛, թէ չէ՛ ոտն ու ձեռս դող ա ընկել, վէ կը կենամ գլուխդ կը սխտորեմ. — բորբոքուած գոռաց Պետին և միքիչ լուեց. բայց եղբայրը շարունակ շանթում էր նրան իր կծու խօսքերով:

— Ա՛կորբ, սո՛ւս կաց. արի դու ինձ հուջաթ մի անիլ էս դառը քնոցին. էս կէս քշերին մեր տունը վայվիկ մի գցել...: Ակորբը չկարողանալով իրեն զսպել, շարունակեց իր խօսքը տեղ տալ և ահա՛, հաստաւիզ Պետին անկողնից վեր թռչելով՝

մի կողքն այրուած հաստ թոնիրխառնի ձեռքն  
առաւ ու կատաղի կերպով յարձակուեց եղբօր  
տեղի վրայ:

Ակօբն էլ ժամանակ չը կորցրեց. նա ևս մի  
ուրիշ զագանակ (ձեռքը ձքելով՝ տո՛ւր թէ կը  
տաս եղբօր կարկաժին (զագաթին):

Ահարկու տուր ու դմփոցն սկսուեց—իրար  
ջարդեցին, փշրեցին... Վայվլիկն ընկաւ գիւղը. Զա-  
ռիկն ու Նարգիզը գրանց թողած դէս ու դէն  
ընկան, հարևաններին օգնութեան կանչեցին: Երե-  
խայքը լեղապատառ ճչում էին քիւնջ ու պուճա-  
խում: Գիւղացիք կիսամերկ, քնաթաթախ, մենա-  
մարտների տուն թափուեցին և հազիւ հազ կարո-  
ղացան նրանց իրար ջարդելուց ազատել, բայց ար-  
դէն ուշ էր, որովհետև երկսի գլուխն էլ ճեղք—  
ճեղքուել էր զագանակների փոխադարձ հարուած-  
ներից:

Միւս օրը Պետին ու Ակօբը վերաւորուած,  
գլխները փաթաթած, բանից գործից ընկած՝ ծաղր  
ու ծանակ դարձան գիւղում: Նրանց արտերը կրճ-  
ղեցին, իսկ ուրիշներն արդէն կրող կասում էին,  
և, զուարճութեան նիւթ առնելով եղբայրներէ  
կուրը, շարունակ կրկնում էին՝ «Անտեղի տո՛ւր ու  
դմփոց...»:

Գ Ի Ի Ղ Ա Մ Ի Զ Ո Ի Մ

Ա.

Գիւղական սրահի առաջ փոքրիկ գեղջկուհի  
ճաղկաւիլը ձեռին՝ կզացած սրբում էր կալը և  
կանչում իւր հօրեղբօրը:

— Ա՛մբ, այ ամ, Խեչո՛ ամբ...

— Աղլի բնչա, Հո՛ւռիկ (Հուիփսիմէ), — սրահի  
տակից հարցրեց Խեչոն:

— Ոքմին ա՞ն կանչըմ:

— Ո՞վ ա, այղլի:

— Հլէլի թէ Լտնըհագին լի: Դ

— Ո՞րդի ա, ա՛ Հո՛ւռ:

— Հրէ հա՛, էն վիրի փէյնի ծէրին կաղնած. —  
մատով ցոյց տուեց Հուռին ու շարունակեց սրբելը:

Խեչո ամին մի կարմիր թաշկինակ գլխին  
հուլպ տուած, սրահի սիւնների արանքից զուրս  
նայեց այս ու այն կողմն և հարցրեց,

— Ա՛, էտ ո՞վ ես, ա՛ կանչող:

— Ես եմ, ես. ա՛ Խե՛չ:

— Գու էս, կը՛նդդտոր:

— Հա՛. բարի օր քե՛:

— Ասծու բարին:

Ի՞նչ ես հրամայում, ի՞նչ կայ.— մտերմական եղանակով հարցրեց Խեչոն իւր աղայ Կնդղտորին, որը գիւղում միւսներին զանազանում էր իւր երկու տեսակ հագուստով— նախ՝ կնդղտորական սիւրտուկ ու շլապկայով և երկրորդ՝ աղայական կամ կնեագական երկար չուխայով ու կոժնուտ մորթուց կարած գլխարկով:

— Ոչինչ.— պատասխանեց Լտնըհագին:

— Դու ինչ ոչինչ բանի հրմար կանչել ես, էլհէ մի փորացաւ կունենաս: Հըւատայ էն ինչ ես դու գիդանք, ընդուր հրմար ես կանչում:

— Ձէ, բան չունեմ:

— Դէ ասա տենանք: Ծիծաղիդ մէջ բան կայ...

— Գընըմ եմ Գիքոյի կալը. ասեցի գաս իրար հետ գնանք:

— Հա, փորացաւդ իմացայ:

— Ի՞նչ:

— Էն էլի, որ գիդանք...

Ո՞րը:

— Մըրագինը...

— Օ... շատ փուչն ես. էտա գլխի ընկար, էլ ի՞նչ թըգցնեմ: Կիրակի ըրիկու ա, մրդկէքը հըւաքուած ընտեղ զրից են անըմ, համ էլ՝ ըրիկնաժամն ա, հարսն ու աղջիկ ջուրն են գնըմ. զրիցը մըհանայ, փորերնիս կշտանայ՝ ջահէլ տղէք ենք ետևներիցը մտիկ կտանք փարուեզ կանենք (կը դուարճանանք):

— Վայ-վայ, քըմէրը մեռնի Խեչո, որ մարդ հլա բերանը բաց չարած, դու իմանաս ո՞չ, թէ ի՞նչ կայ մտքըմը. ախր տեսայ, որ լիւզուդ ծամելով ես խօսըմ է: Կայ, գալիս եմ:

Հէքո, Հէքո. այ աղջի, մի չուխես դուս բի... Ես մըգեար քե պէս աղպեր տղի խաթըրը կը կոտորեմ:

Հուււի ջան, կալը թամիւզ սրբի, էսա վրատիս ետ եմ գալի. — ասաց ու Լտնըհագու հետ զրոյց անելով, ծանր քայլելով, հպարտութեամբ ընթացան դէպի Գիքոյի կալը, ուր գիւղի ամեն թաղից հետզհետէ կէնտ—կէնտ մարդիկ էին ժողովւում:

Լտնըհագի կնդղտորը, որին «Երկարապոչ» մականուն էլ էին յատկացրել իւր նորաձև հագուստի պատճառով, իրեն շատ հպարտ և ազատ էր պահում գիւղամիջում: Նա, որ յայտնի էր իւր անտակ վայրախօսութեամբ, Խեչոյի հետ շատ զաղարկ բաներ սկսեց խօսալ, որոնց նա պատասխանում էր ի մեջի այլոց...

— Բրուտի կնիկը լաւ հարսն ա, չէ, կը՛նդղտոր:

— Դու էտ ես ասըմ, բա Մինասինը՞:

— Ի՛ւք, նա խու ջէյրան ա, հարսը չի:

— Բա հրէ, հրէ,—

— Ո՞րը:

— Է՛ն, որ թոփի գիւլի պէս կուժն ուսին տակնուց դիեր հըրաքեաթ ա անըմ...

Այդպիսի զաղարկ խօսակցութեամբ երկու

երիտասարդները հասան Գիքոյի կալը և կիտուած ամբօխի հետ կալի բաշի գերանների վրայ ոտնկալս նստեցին, երեսները դէպի ջրի ճանապարհի կողմըն արին:

Գիքոյի կալը, դա գիւղի և՛ կլուքն էր և՛ բուլոււարը և հրապարակական դատաստանատեղին, ուր ամեն ժամանակ կարելի էր տեսնել՝ դատաւոր քօռ Մոլլաքեօխլին, նրա թիկնապահ և խորհրդատու Եաղախուրուն, քարտուղար Թոփալի տղայ Մճուտիկին, քեաղխուղա Բրուտին, Խևին, կնգղի Վալինին, կարճապոչ ատվակատ գիժ Ուհանին, սուղեայ Ալգաշին և շատ ուրիշներին՝ իրենց մեծ-մեծ փափախներով հանդերձ:

Ամեն Աստուծոյ կիրակի օր, գիւղացիք այդ նշանաւոր փափախների շուրջն էին հաւաքուում խօսուում, դատուում, հէքիաթ ու առասպելներ էին պատմում, սրախօսութիւններ էին անում և կսմնեղ կեանքից դառնացած՝ խարջի, կոռ ու բէգեառի, հանգն ու ջուրը բաժանելու, սար ու դաշտ անելու, հանդի համար զորողչի բռնելու և գիւղական հագարաւոր ցաւերի մասին խօսուում, մտածում:

Բայց Գիքոյի կալն աւելի Գոռ-Մոլլաքեօխլի ու նրա խորհրդատու Եաղախուրու աթոռանիստը կարելի էր համարել: —Քեօխլեն ամեն օր և համարեա ամեն ժամ իւր զալմաղալչի գզրի հետ կալի բարձր տեղը կանգնում էր, և, Ադամից մինչև օրս ինչքան անլսելի հայհոյանքներ կան, թափելով

գիւղականների գլխին, որև է քեօխվայական և... հրամանի համար, ժողովում էր նրանց կալը՝ կատարել տալու այն: Նա բաշլուղի ծպներն ուսերովը թառ տուած, հպարտութեամբ, շատ անգամ գոռացնելով փորձում էր իւր նոր՝ կաշառք ստացած մտրակի ոյժը...

—Ս.յ գեադան, Հանէս, Հանէս:

—Համմէ, Խնչ ա, քեօխվայ ջան.—պատասխանում էր խոտի կապոցը լալակած գիւղացին:

—Շըլակիդ խոտն էտ ճըմպի միջըմը վե՛ գցի ըստի արի. լեղով, հահահ:

—Քեօխվայ ջան, ըպըրնքնիս սոված տուն արած են, կանց մ'թիքա խոտ գցեմ ետոյ գամ:

—Ես քե հրամայըմ եմ, որ հէնց էս սհահթիս գաս: Բայց գիւղացին շարունակում էր գնալ և ահա գզիրը գոռաց ու դադանակով նրան հասաւ:

—Ս. շան տղայ, ա՛ հառամդադա... ըրիկունը որ քե կանչըմ ի, խի՛ չիւր գալի. դէ խոտդ վե՛ գցի: Ս.՝ դու էլ սէլդ կղնըցրու ըստի եկէք, թէ չէ էսա ուն ու ձեռս դողըմ ա:

—Արթին ջան, քեօխլին ասա դէգս տափըմս կիսատ ա, աւինդն էլ լաւ չի, անձրև կգայ խոտս խարաբ կանի, թող գնամ բերեմ, ետոյ՝ ինչ ասըմ էք ասեցէք.—աղաչեց գիւղացի սայլապանը, որ խոտը կրելու էր գնում:

—Լիլ չի: Սէլիցդ վե՛ր արի...

—Ադա, էտ հարամդադին սէլիցը վե՛ գցի,

վե՛ գցի. — քեօխվեն բարբառօսաբար հրամայեց  
գզրին ու ինքն էլ յարձակուեց:

— Բե մատաղ, քեօխվայ. — աղաչեց սալլապանը  
խղճալի ձայնով, բայց քեօխվեն գոռոցով հասնե-  
լով նրան, շրբ խկ, մղկտացրեց սալլապանի և միւս-  
ների մէջքը:

Ամեն մի գիւղում Գիքոյի կամ Մաթոսի կալը,  
մեծ նշանակութիւն ունի քեօխվա-քեագխուղանե-  
րի համար: Նրանց ետեւից ամբոխն այնտեղ հա-  
ւաքուելով, անկարելի բան էր, որ վե՛ճ ու կռիւ-  
չսկսէր և «արաղփուլու» պատրաստութիւն չտես-  
նէր քոռ ու կաղ քեօխվաների համար: Խ. գիւղի  
Քոռ Մոլլա քեօխվեն միշտ իւր վատ սովորեցրած  
կաշառակեր աչքը ղիտիլ արած՝ հրճուում էր և  
նայում գանգատաւորներին: Նրա ճեպուած աչքի  
ջուրը ծորում էր, մինչև որ տեսնէր, թէ ո՞վ է  
ձեռքը գրպանը տանում. եթէ մէկը ձեռը շար-  
ժում էր, որ մի տեղը քորի, նա կարծում էր,  
թէ գրպանից իրեն համար բան է հանում: Շատ  
անգամ, երբ գիւղացի թաղաւորները լեռնականի  
տուր ու տրաքօցը սարքում էին, նա ղիտմամբ  
թագնւում էր, որ կռուի մէջ մէկի կամ միւսի  
գլուխը դազանակների հարուածից ճեղքուի, որ-  
պէս զի իրեն գանգատուեն, և ո՞ր կողմը որ շատ  
կաշառք տայ, այն կողմին արգար դուս բերի...

Ճարպիկ և խորամանկ քեօխվեն նա է համար-  
ւում, ով երկու կողմից էլ կաշառք է վերցնում:

Այն նշանաւոր կալում, 1892 թ. խոլերայի

համաճարակի ժամանակ, մի ամառային օր, կիրա-  
կի երեկոյեան դէմ գիւղացիները ժողովուած, ինչ-  
պէս գիւղացին է ասում՝ «իրար բռէխ էին կըր-  
ծում»:

Վիճող հայհոյիչների հանդէպ, մի խարխուլ  
մարագի շէմքում, եօթանասուն տարին բոլորած,  
մէջքը սիւնին դէմ տուած նստած էր մի ալեղարդ  
ճերունի: Նա չալիկը (ձեռնափայտը) դռշին չենած,  
ծանր շունչ քաշելով լուռ նայում էր կռուող  
հայհոյողներին և սպիտակ գլուխը, վշտոտի նման,  
խորհրդաւոր կերպով պտտում, հառաչում էր և  
դառնացած ինքն իրեն ասում.

— Հէ՛յ գիղի քաղցր ժըմանակ հա՛, գնացի՛ր,  
անցա՛ր, էլ ետ չես գալու... դո՛ւմի քե, լիսահոգի  
Քիքի, ընդուր էր ասըմ թէ՛՝ «էնղայդի ժըմանակ  
կը գայ, որ մեր որդիքը մեզ էրնակ կը տան հա...»

Խիստ ճերմակ, բայց զեռ ևս առոյգ ճերու-  
նու հայեացքից նկատելի էր, որ պիտի իջնէր կա-  
լը, բայց շատ դառնացած էր նրա անմեղ և պատ-  
կառելի դէմքն ու հոգին:

Գիւղացիք զեռ տաք տաք վիճում ու հայհոյում  
էին իրար:

— Ա՛դա, տօ քու ո՛րդիքը կըտորւեն, չոբա-  
նիդ խի՛ չես խրատըմ, ա՛րտս խի՛ ես ոտնակոխ ա-  
նիլ տալի:

— Քու ո՛րդիքն էլ կըտորւեն, հլա քու ազիզ  
մուլքերն էլ... բա դու մէկէլ-մէքսէլ տարին բաղս

խի իր քարուքանդ անըմ. — պատասխանում էր կատաղած հակառակորդը:

— Հանէս, քաջալ Հանէս, ա՛, էրկու աբասի ես պարտ, իրեսդ խի ես դէմ անըմ. զուր տեղը քու ազիզ մուլքերը խի ես հովհովել տալի. — բարկացած, կատաղութեան փրփուրը բերանին պահանջում էր վաշխառուն իրենից թուլացած աղքատից, իսկ վերջինս պատասխանում էր ողորմելի ձայնով.

— Ա՛ բէյմրուաթ՝ ա՛ անխիղճ, բա տուել չեմ, քանի ուզես, քանի էս գեղի մէջ ինձ խայտառակ անես, բոլ չլու, քու էրկու աբասին քանի հետ դեմ տալ. մին տուել եմ, մնէլ ես ուզը՛մ...

— Ե՞րբ ես տուել, տօ ես քու է՛...

— Ա՛ մսակեր, բա էն տալ չէր, որ եկար թաղայ շինած լուծս տարա՛ր, դու չիր, որ ասեցիր «պարտքիդ դուս կանեմ»...

— Տօ ախմախ, լուծդ շահրմն եմ տարել, շահրմը. — մի ձեռը ճակատին դնելով, անիրաւը շեշտում էր «շահ» բառի մէջքին:

— Ա՛, մգեար թնչղադար վոխտ ա վրես կրցել, որ էրկու մանէթանոց լուծս շահրմն ես տարել:

— Տարի ու կէս:

— Վայ քու բէյմրուաթ տունը չքանդուի, էրկու աբասին տարիուկիսըմը էրկու մանէթ շահարաւ. մգեար քու էրկու աբասին թխսի պէս ճուտեր ա հանը՛մ: Գրանք հազիւ թէ լուում էին, միւսներն էին սկսում իրար ուէխ կռծել:

— Վա՛լի, զո՛թուր Վալի, կնկանս խի իր թակըմ, անմարդ էր:

— Լա՛ւ ի անըմ, բա իմ կնիկն անմարդ էր, որն նա թակըմ էր. — պատասխանում էր Վալին, որ իւր հարևանի կնոջն այնքան ծեծել էր, որ նա ծեծից մշտական հիւանդութիւն ստացաւ յետոյ:

— Շաւթուլնիս (դեղձս) խի ես զողացել. — ասում էր երրորդը, չորրորդը... և տուր ու դմփոցըն սկսում էր քեօխլի գրպանի համար...

Բ.

Ծերունի թիւնին հիւնի չալիկը ձեռին դիմհար տալով, վերջապէս վերեկից կալն իջաւ: Ամենքը պատկառեցին: Թիւնին երկու ձեռով չալիկը գետնին դէմ տուեց ու ասաց.

— Ա՛յ տղէք, ա՛յ որդիք, խի էք ջահէլութին անըմ, խի էք անմեղ բաների հըմար իրար հէրն ու մէրը չուրըր տալի. ընչի չէք ըշխարիս զիւլումաթին մտիկ անըմ. բա տենըմ չէք Աստօճ մեր մեղացը բարկացել ա՛. բա դուք խուլեարի (խուլերայի) սաս չէք լսել, բա դուք սհենց սիպտակելու չէք... Թիւնին աւելի ուղղելու համար ցոյց տուեց իւր մորուսն ու մազերը:

Կռուողներից ոմանք Թիւնի ապօր յանդիմանութիւնից ամաչելով ցրուեցին, ոմանք էլ երեսները շրջեցին, թագցրին սիւնների ետևը:

Թիւնին երկար յանդիմանութիւնից յետոյ՝

սկսեց աւելի մեղմ կերպով խօսել, խրատել և համոզել իւր ունկնդիրներին...

—Արդեք, բշխարիս փխուլթինն ու գէշուլթինը շատացել ա. էլ ոչ մեծ կայ, ոչ պուճուր, ոչ հէր, ոչ մէր, ոչ քիր ու աղպէր և ոչ բարեկամ... Դրա հըմար էլ Աստօծ երկնքից պատեճնի ու զիւլումաթ ցաւեր ա զրկըմ մեզ հըմար... Ի ուք ջահէլ էք, ինչ էք տեհէլ: Շատ խուլեարի տարիք եմ անց կացրել էս սիպտակ գլխովս, համա մեծ խուլեարի տարին, օ, Աստօծ հեռու տանի ձեր զիւլմանի գլխիցն էլ. շատ փիս տարի էր:— Սրանից խելի առաջ, բեխայ ի, գոռի ա միտս. խուլեարը՝ ինչպէս հմի, աշխարս պատեց—մարդիկ ին, որ կըտորոււմ ին, ազիզ մեռելնի ին, որ անհաղորթ, անէրէց ին լըմ, հէր ու մէր՝ որ իրանց որդիերանց շիւանին նստած՝ մազերնին ճեպում, պուճուկտըմ ին: Անանըմ խուլեարից հէնց իզիթ մարդիկ, հէնց ջիւան ջաներ ին մեռնըմ, որ ամեն մէկը մի-մի թագաւորի բարեբար: Անտէր ցաւը, որ բունըմ էր, մարդի լաշ, հեռի ձեզանից, սևացնըմ, սև փեցախ էր շինըմ. էլ դալլաք, ջառահեա հաքիմ, դոխտուր, բայթալ չէր մնըմ, ամենին էլ կանչըմ ին, ամա ոնչիչ չէր դառնըմ. ընկնողը, խարաբըլողը կարպետին քացի էր տալի, մի խօսքով էն ա մեռի հա մեռի էր էլի... շատերը հէնց հացի թիքէն բերնըմն ին մեռնըմ...

—Պահ, պահ, պահ... անտէրն ինչ փիս ցաւ ա լել... Թիւնի ապէր, մեծ մարդիկ էլ մեռնմ ին:

—Շատ. զորմածիկ Պետին, հէնց ջղացի ճամպին, ալրի պարկը շրակին հոգին տուեց:

—Բեխէք:

—Դրանցից էլ ին շատ կըտորոււմ, ամա տղայ-մարդիկ աւելի ին բըթարափ լըմ:

Ծերունու նկարագրութիւնից վախեցած՝ այս ու այն կողմից երեսներին խաչակնքելով «փառք քեզ, Աստօծ»,— շշնջում էին նրա յափշտակուած ունկնդիրները և հառաչում... Մի երիտասարդ կար այդտեղ միայն, որ այն բոլորը նախապաշարմունք համարելով, շարունակ ծիծաղում էր հառաչողների վրայ... Թիւնին նկատել էր անպատկառ երիտասարդին, բայց դեռ ոչինչ չէր ասում նրան:

—Հը՞, վախըմ էք. — հարցրեց ծերունին ունկնդիրներին:

—Վախըմ ո՞րն ա, Թիւնի ապէր, կտորածքի ենք, որ պատմութիւն ես անըմ վրերնիս ջուր ա մաղըմ, էտ ինչ զիւլումաթ ցաւ ու կրակ ա, որ Աստօծ զրկըմ ա մեզ հըմար...

—Հը հը՞. վախեցող մարդը կիրակի օրը պատարագ անիլու փոխանակ մեռելներին ուշունց կը տայ. — խօսքը տեղը յարմարեցնելով, ամաչեցնող հայեացքով պատասխանեց ծերունին և դարձեալ շարունակեց:

—Վախէք, չվախէք. Աստու ճըմպիցը չիմնէլ դուս են եկել: Նա էլ Տէր ա, արգար դադաստան դի կտրիլ: Իէ ձեզ ինչ աջողութիւն անի, առողջութիւն տայ Աստօծ, քանի որ կիրակի օր ա, դուք,

որ ամեն մինդ մի տուն քիւլիաթի տէր էք, խի՛ չէք աղօթքի, մատաղի, ուխտի, պաշտըմ պատարագի վրայ միտք անըմ, քանց՝ մինը մնիդ միս էք ուտըմ, մինդ մնի ըռէխ էք կռծըմ... Զը՞, ամօթ չի՞...

— Ես իմ Աստօծը, հլիվերը (ծերունին)

Ասծու բերանիցն ա խօսըմ:

— Հայը դրուստից էլ դրուստ ա ասըմ, հլա որ էտ ձեռի չալկովը գլխնիս էլ թակի, դառ քիչ ա մեզ. — ասում էին այս ու այն կողմից:

— Ա՛պէր, դէ մեծ, բնրգիտուկ մարդ ես, դու պատճառ դառ, մենք էլ անենք... հլա եղեցուն պատճառ դառար շինեցինք, հմի էլ քե ենք մտիկ տալի. էլ դո՛ւ սաբար դառ, բալի հոգերնիս դժօխքից ազատես. մենք էսա վրինու (վայրենի) ենք դառել. — ասաց մի աւելի բարեպաշտ հասակն առած գիւղացի և տկտկաց, լացակումեց:

— Ա՛ բալամնի, աչքերնիդ զաքին Գրվըսըրեցիք, թալըցիք գնացել են Հաղարծին սուրբ նշանը բերել գեղըմը թափօր արել. մարդիկ էք, գեղ՞ գեղական էք, վե կացէք եկող շաբաթ օրը ձի վեր լէք, դէսից դէնից հետներդ վե կալէք գնացէք Հաղարծին Պօղոս վրդըպետի կուշտը, համ սրբերի գերեզմաններից օխնած հող բերէք բերաննիդ գըցեցէք, ջուր արէք խմեցէք, համ էլ վրդըպետին միւննաթ արէք, որ սուրբ նշանը, մեռնեմ նրա սուրբ ողորմութենին, բերի ըստի, կիրակի օրը մեծով պիւճուրով, մարդ ու կնկանով դուս գնանք,

առօք: փառօք պաշտըմ-պատարագ անի, բալի Ասծու ողորմն ըշխարիս հասնի, մեր գեղն էլ ազատուի էն գիւլ-գուլումաթ ցաւից...

— Տղէք, Թիւնի ապէրը մեզ շատ բանըմ ա խրատել, հըմի էլ մեր գեղի հին բան տեհած մարդըն ա, արքաուութին լի իրան, եկէք ամեն մինդ Ասծու տըրածից մի-մի բան մըտղանայ խօստացէք՝ գնանք սուրբ նշանը բերենք: Դէ, ով ինչքան ա տալի իր Ասծու փայը. — յորդորեց Մուխի ապին, որ Խաչթառակ գիւղում իր բարի խրատներով Թիւնի ապինից պակաս մարդ չէր:

— Աղպէր, ես ուղիղ սրտով մի որց (արու) թօխլի եմ տալի:

— Դէ, էլ ով. թէ Աստօծ կսիրէք, մատաղացու ա, սրտալի տուէք. — ասաց մի ուրիշ ծերունի:

— Տասը խան ցորեն էլ ինձ գրեցէք. — ասաց մի աղքատ գիւղացի, որ ջրաղացպանութեամբ էր կառավարում իւր տունը և վճարում իւր գլխի ու ծխի հարկը:

— Սաքո՞, դու քեասիբ, քիւլիաթի տէր մարդ ես, թո՞ղ քու մի խանը ըբխեքդ ուտեն եօլայ գընան:

— Վ, ա՛, Թիւնի ապի ջան, էտ ինչ ես ասըմ, մատաղին ինչ քեասիբ, ամեն մարդ էլ Ասծուն պարտական ա:

— Թող տայ, թո՞ղ, Թիւնի բիձայ. քեասիբինն աւելի ընդունելի ա լըմ: Ուսէփն ու Մարեանըմի ջուխտ եղունիկ տարան Երուսաղէմի տաճարը, ամա

Աստօծ սիրով ընդունեց... — Իւր առարկայից խօսեց գիւղի քահանան և աւելի եռանդ տուեց մատաղատուններին:

— Հինգ խան գարի էլ ինձ գրեցէք:

— Ենպէս արէք, որ չիմ ցորեն հըւաքւի. — ասաց քահանան:

— Տէր-տէր ջան, քու կարգը վկայ, որ ցորեն չունեմ, գարի եմ ուտըմ...

— Լաւ, զարար չունի. — գարին ես ցորնի հետ կը փոխեմ, — ասաց մէկը:

— Գրեցէք, թող գարի լի, բան չկայ:

— Ի՞նչքան:

— Իրեք խան:

— Կէս գրովանքայ խունկ ու մում էլ ինձ գրեցէք, պաշտըմ-պատարազին կձխեն. — խոստացաւ և իսկոյն կշռեց Վերին-Աղգանեցի ատամը ծուռտիկ չարչի Թորոսը, որն իւր «չարչիխուրդասին» մանրունքը՝ իշով ման էր ածում գիւղերում և գարու, իւղի... ու ցորնի հետ փոխում:

— Տիրացու, գրի՛, ես էլ տէր-տէրի ու տիրացուեքի հըմար մի բօթլկայ արող կառնեմ: Թիւնի ապէրը մէջքը պատին յենած՝ չիբուխը համ ծխում համ օրհնում էր մատաղատուններին և շարունակ նայում, զիտում էր մի կոկլիկ հագնուած երիտասարդի, որն անդադար՝ ծիծաղում էր այդ տեսարանի վրայ: Ամենքը «մտղանէն» տուին, բացի ծիծաղողից: Թիւնի ապէրը գլուխը խորհրդաւոր կերպով շտրթելով և արհամարհական հայեացքով զի-

մեց «Երկարապոչ» մականուանեալ երիտասարդին, որն առանց պատկառանքի, երկու ձեռը երկար չուխի տակ՝ ետևին դարսած, հպարտութեան ժպետը բերանին կանգնած էր սրահի առաջին սիւնի տակ և փորացու ընկածի պէս շարունակ ջրի ճանապարհի կողմն էր նայում, ուր զուգուած հարսն ու աղջիկները կժերն ուսերին գընգընգալէ վայր ու վեր էին անում...

— Գու ի՞նչքան ես տալի, Կը՛նդդոր:

— Հո՛հ, հո՛հ, հո՛. — հռհռալով ծիծաղեց Երկարապոչը:

— Մեզ վրայ ես ծիծաղը՞մ, թէ Ասծու մտղանի վրայ, անդայ Կնդդոր. — լցուած սրտով հարցրեց ծերունի Թիւնին:

— Հլէ ձեզ վրայ էլ, մտղանի վրայ էլ:

— Խի՛. հլա մեզ վրայ կը ծըծաղես նրա հմար, որ քե պէս թագա դոն չենք մտած, դուքանբազարից առած խաս կտորներից հագած, կապած չենք, բա մտղանի վրայ խի՛ ես ծըծաղըմ...

— Բա ծըծաղեմ ո՛չ, ի՞նչ անեմ, մատաղացուները՝ որց, մողի, տաւար որ մորթէք դուք ուտէք, Ասծու փորը կշտանալ դի՛...

— Պահ, պահ, պահ. ձեզ մատաղ, էտ ի՞նչ ասըմ Ասծուն. — ամեն կողմից զարմացած շշնջացին գիւղացիք:

— Վայշ. տղէք, ես մի կըրթացող, գրի սեն սիպտակն իմացող չը տեհայ, որ Աստօծ ունենայ. ո՛ր այլը-բէն իմացողի կշտին՝ Ասծու, մատաղի,

ճրագի, սրբի անըմ ես տալի, սկսըմ ա ծրծաղել, հըռհուալ, մասխարութին անել... — դառնացած և գլուխը պտտելով ասաց Մուխի ապէրը, իսկ Թիւնին անժամանակ լռեց:

— Ա՛յ տղայ, դէ որ կրթացողնին տհենց դալի-դո՛ւրու են, շաշ ու փէնջ են. լաւն էն ա, որ մեր ըեխէքը խոզարած մնան: Տէր-տէր, էհէ տէր-տէր, բա էն օրը էս քաջալ գլխիս դուրան իր օխմիշ լըմ, քարոզութին իր անըմ թէ՛ «ըեխէքդ յուսումարան ղրկի՛», տենըմ էս, գիր իմացողնին էլ էտ չէն, որ Ասծու մատաղի վրայ ծըծաղըմ էն... վնյ, վնյ:

— Մգեար ես մսիս կէր եմ լել. որ տղես քաղաք ղրկեմ գիր սըվօրելո՞ւ. ո՛վ որ ղրկըմ ա, թնջ օգուտ. գնըմ են ուրիշի բնըմը ձու ածըմ կուկուրի պէս, էլ չեն սսըմ թէ՛ հէր, մէր ունենք...

Թիւնի ապէրը դեռ խէթ աչքով տնդողւմ էր համարձակ երիտասարդին: Նա կնդդտորին ոտից ցգլուխ նայեց-նայեց և երկար լուրթիւնից յետոյ՝ արհամարհական ժպիտով սկսեց դառն նախատինքներ թափել նրա գլխին:

— Ա՛, ա՛ դու վրախ՝ (կոկլիկ), դու խի՞ տհենց բեղասլը դուս եկար. բա ամօթ չի քե հըմար, բա հըմանչըմ չէս. էսղազար մարդիկս քու բոյու բուսաթին ենք մտիկ տալի՞ որ գրի սև ու սպիտակն իմացող ես, որ մի բան, մի խրատ տաս, մի խիթարես մեզ, որ Աստուած էլ ուրախանայ մարդ էլ. դու ըտոնց փոխանակ՝ խալիսի սիրտը պղտորըմ,

յուսները կտրըմ ես, Ասծու մատաղի վրայ անպատկառանք ծըծաղը՛մ...

Կնդդտորը դեռ լուռ էր:

— Բա հըմի դու մտղանայ չես տալի՞, Կը՛նդդտոր. — զարմացմամբ հարցրեցին:

— Չէ, էս մատաղին հըւատըմ չեմ. մատաղը խուլեարից մարդ չի փրկիլ, ես էնղազար դեղ ու դարմաննի եմ բերել մեր պատերն ու սները քու սել, որ խուլեարը Տանձի-հօղի դիւզովը պո՛չը ցեց ա փախչիլու. դուք ձեր դա՛րդը քաշեցէք...

— Հլա՛, հլա՛ ոտների կրկատած փոստալներին, գլխի չարքեագի գլըբարդնէն ու կեցի էրգեան չուխին մտիկ տուէք, մէջքի ըրծաթայ քըմարին, նաղի աղի պէս հմբարդ-հմբարդ՝ ձեռները ետողլին ղնիլուն ու խելքիցը պահաս-պակաս դուս տալուն:

— Ի՛... Մենք էլ կասենք, թէ քե պէս մի բընը-գլտուկ տղայ կայ մեր գեղըմն էլի. փչանաս դու, փուչ պոպոք դառնաս... սա էլ հալբաթ մեր գլխին եզըդի, գլթ ու կարճապոչ Ուհանն ա դառել, որ ուխտատեղերըմն էլ խաչ քար չի թողել, չիմ խաչից խրտնածի պէս թոլ ա արել ձորերն ածել կուտարատել, թէ՛ «սրանցըմ ղօրուլթին չկայ», որ թնջ ա՛ խալիսը ուխտ չը գնան, չհանբուրեն:

— Լաւ եմ անըմ, ձեռիս է՛ միջովն ա գալի. — յանդգնութիամբ կրկին իւր առաջուայ դէրքը մըտաւ Լտնըհագին:

— Քա՛շուի, քա՛շուի կո՛րի ըստիան, էս ծեր

մըղկերանց հետ բաս մի մտնիլ, քիչ զոչլոչի տուլ թէ չէ... — ասացին մի քանիսը:

Լտնըհագին տեսնելով, որ բանը փթռուկ է, պոչը քաշեց և իրեն հրողի առաջից զնաց, հեռացաւ:

— Պիճ հարամ թոխըմ, դրանից մեր ըխէքն՝ քնչ էօրնակ դեն վե կալնիլ, քնչ դեն սըվորիլ...

— Է՛. էտղայդինների մեղքեցը չի, Թիւնի ապէր, որ Աստօծ ըշխարիս ըրիսին քամակովն ա մտիկ տալի: Ա՛յ պիճ-պճից լաճ, մթամ բան խօսաց, բան ասեց: — Մենք ասըմ ենք պաշտըմ-պատարազ անենք, չոքի-պուկի անենք, հող լից տանք, տափ ճեպուենք, որ Աստօծ մեր հաւատովը մեզ հովութին տայ, նա թլիսմ ունեցող թաթի պէս իրանց սներն ու պատերը դեղ, սպիրտ - մսպիրտ ա քսել, թէ՛ «խուլեարը ճանձուտ թալովը դի փախչիլ. ի՛ն՛, գլուխդ թաղեմ, գլուխը՛դ...»

— Է՛... դա՛ որ լաւ տղայ լի, անըմը էրզնապոչ կղնեն, Հանէս ապի:

— Լաւ, լաւ. մի փուչով աշխար չի քանդուիլ. տաղ արէք, բօլ ա: Արսէն, գրի. — Թիւնի ապին կրկին շարունակեց իւր գործը — իւրաքանչիւրի վրայ էլ մտղանայ դրեց:

Նրա քարտուղար տիրացու Արսէնը Գիքոյի կալեպանի սրահի տակ, նրա ոտները ծուռտիկ թախտի վրայ ոտը ոտովը ձգած նստած, ծնկանը մի թուղթ էր դրել և գրում էր մատաղ խոստացողների ազգ. և անունները: Բանը գլուխ եկաւ:

Թիւնին ընտրեց և երկու մարդ, որ միւս օրն սկըսեն մտղանեն հաւաքել:

— Աստօծ ձեր մինը հզար անի, ումբընիդ էրգեան, արևնիդ շատ լի: Տէր վերնէին թագաւոր Աստօծը բարի աչքով մտիկ տայ ամենիդ... էտղայդի բարութին, էտղայդի լաւ բան, ըսկի արած չիք դուք. — Թիւնին նպատակին հասած համարելով իրեն, օրհնեց ամենին:

— Քե արքաւութին, Թիւնի ապէր ջան. Աստօծ քե մեր գլխիցն անսլակաս անի, սուրբ մըրդիրոսների դասը դասի, էսթաւուր բարի բաների պատճառը միշտ դո՛ւս լըմ...

Այնուհետև ամենքը լցուած էին բարեպաշտական զգացմունքով, էլ կռիւ ու հայհոյանք չըկար, բոլորը խաղաղ էին Թիւնի նահապետի քարոզների կարծես ներշնչութեամբ և լսում էին նրան: Թիւնին ոգևորուած նորից փայփայեց իւր ալիքը, բեխերը սղալեց, կոկորդը մաքրեց, ըհը՛հը՛, հազաց և հիմայ էլ սկսեց Կայէնի և Աբէլի զոհաբերութեան մասին պատմել իւր ունկնդիրներին, դրանով կամենում էր աւելի զօրացնել բարին և եռանդ տալ, որպէս զի միւս օրը մատաղը սրտով և առատօրէն տան:

— Երկու աղպէր են լըմ, մնի անըմը Կայեան, մէկէլինը Աբէլ: Կայեանը շատ օձի կծածն ա լըմ, հօրը, մօրն ու աղպօրն ըսկի սիրելիս չի ըլըմ: Մ՛հետ էրկու աղպէրն էլ ուզըմ են Աստուծ մատաղ անեն: Օձ Կայեանը ըռանչպար ա ըլըմ, Աբէլ

լը չորբան: Նրանք էլ մեզ պէս՝ չոռի ու ցաւի ժը-  
մանակ Ասծուն միտներն են գցըմ՝ ուզըմ են մըտ-  
ղանայ տալ...: Ասծու օխնած Աբէլը ոչխարը բե-  
րըմ ա դիւզըմը կղնըցնըմ, բրխին խաչ քաշըմ ու  
ոչխարի միջից՝ սրտալի մի թուխը-սախար (թուխ,  
միայն գլուխն սպիտակ ոչխար) ոչխար ա ջոկըմ,  
ձեռաց վե գցըմ մորթըմ, փետ ու կրակ անըմ սկը-  
սըմ խրովել: Օձ Կայեանը, Աստօծ անըծի նրան,  
կալը նոր քամած՝ ցորենը կիտած ա ըլըմ. սա վեր  
ա կալնըմ՝ անսիրտ-անսիրտ ցորենը խախալըմ, տակ  
ու գլուխը բերըմ մատաղանայ տալի ու ինքն էլ  
փետ ու կրակ անըմ իր առածը խրովըմ: Երկուսի  
կրակն էլ մի դիւզ տեղ ա ըլըմ՝ բացը երկնքի տակ:

Աստօծ մտիկ ա տալի տենըմ, որ Աբէլը սըը-  
տով տըւեց՝ նրա մատաղի կրակի ծուխը ծլլի  
(ուղիղ վերև) ա բացըանըմ — նրա մատաղն ընդու-  
նելի ա անըմ:

Պռօթող-մռօթող, տակ ու գլուխ տուող Կա-  
յեանի վրայ Աստուածաբար չըրանըմ ա ու նրա  
ցորենի հասկերն անըծըմ, թէ՛ «թող այսուհետև  
քու ցորենը մի հասկանի մնայ»:

Կայեանը տենալով, որ Աստօծ Աբէլի ղօլը՝  
պահեց, մի օր, Աբէլին՝ ոչխարի մէջ շըւաքըմը խո-  
րը քնած վախտը, վեր ա կալնըմ կովըզիզիկը (սև  
սուր քար), բուզը զուս ա կտըրըմ ու իրան չոմ-  
բախովը կրկաթի կիսին տալի՝ ղուղը շաղ ա տալի  
հն սպանըմ: Կայեանն անպատիժ չի մնըմ: — Աս-

տօծ նրան շաշւացնըմ ա սարերն ու հանդերը  
գցըմ...

— Վայ ես քու արդար դատաստանին մատող  
հն, Աստօծ ջան. քեօխվացո՛ւ, հրէ նհէ վճիռ տու  
հն, — միաձայն ասացին լսողները:

Այդ խօսակցութեան միջոցին հեռուից, Գիքո-  
յի կալին, կարծես կարօտած, Աթո ապին մամխի  
փայտից շինած երկար ու կուպլազլուխ չիբուխը  
դնչին՝ փը ստ-հա փը ստ, փո՛ւ-հա-փո՛ւ մուլ անե-  
լով, ամպերի պէս ծխի մէջ, ծանր քայլերով գալիս  
էր իւր համագիւղացիների ժողովատեղին:

Վերջինի հագած տափազործ շալի չուխից,  
ոտների երեք ամիսը մի անգամ հագնուող չուս-  
տերից ու գառան մորթուց կարած միջակ մեծու-  
թեամբ նոր փափախից գուշակելի էր, որ օտար  
գիւղից է վերագարձել (գիւղացիներն իրենց նոր  
շորերն առհասարակ օտար կամ պատուաւոր տեղ  
գնալիս են հագնում):

Յանկարծ մի ստարոտի իրարանցում ընկաւ  
գիւղական այդ միակ խաղաղ ժողովի մէջ...

— Պս, պս, պս. ձեր արևին մատաղ, վե կա-  
ցէք փախչենք...

— Ադա քնչ խաբար ա:

— Աթո ապին եկաւ, դա խուլեար մանածող  
ա. — Թաթին շըջանով նստած ժողովականների մի-  
ջից բացականչեց, ծը՛ւնդ, տեղից կանգնեց և փախ-  
չելու արաւ:

— Խթ. խթ անդա, ոնց թէ խուլեար մանածող

ա. — Կասկածաւոր և վախեցող ձայներով աղաղակեցին ամենքը, կարծես զգալով, որ Աթոն Գարվանսարայ գիւղից պէտք է գալիս լինի, ուր խոլերան բաւական կոտորած էր արել արդէն: Թաթին հարցնողներին սկսեց բացատրել բանի էութիւնը:

— Ռաւօտը՝ ծէգին հետ, դա ձին նստած Գըրվըսրայ էր գնում. — լըքլքալով ասաց վախկոտ Թաթին:

— Աօրթ:

— Էն Աստօծը. — երզուեց նա:

— Վայ դրա տունն Աստօծ քանդի, ադա, Գըրվըսրան քնչ ունէր դա. քնչ շունն էր կըտաղել, որ գնում էր...

— Բարի օր ձեզ. — վրաբերեց Աթոն և բերանից հանելով չիբուխի հաստ կոթը, սպազեց մի քարի վրայ:

— Բարի օրը գլխիդ ու արեւիդ դիպչի, Աթո. ա, Գըրվըսրան ինչի՞ իր գնում...

— Թիւնի ապի ջան, ետղու տարած ձիուս ստները ջլիս պէպիկ էր, տարայ նալները կպցնիլ տըւի:

— Վայ գէլը քե էլ լափի քու ձիուն էլ: Տօ տնաքանդ, բա էտ անծօտած միւրքիցդ հըմանչեցիր ո՞չ, ընգլամագ-ընգլամագի տղայ... ախմախ, մի ձի նալնիլ տալու հըմար վեր ես կենում ձի նստում, գլուխդ թուրքի ախոււնդի պէս տըրմբտըմբացնիլով գնում էն գիւլ-գիւլումաթ ցաւի մէջ՝ որ բերես գեղը քցես՝ տաս մեր տները քանդէս: Ադա, տօ լած-չլած խէլքդ էլ քամին տանի, քսան օր ա

ղղամանս դարդակ ա մնացել, ոչխարնիս ըլանի, պանիրս հոտըմ ա, ըսկի ես Գըրվըսրայ չեմ գնում որ աղ առնեմ, գու ձին նալնիլ տալու հըմար դուդէդ դաւաչու՝ (ուղտապանի) պէս ցից արած, ճօճալով՝ իշի ընգաճըմը քնածի նման գնում ես գեղի հըմար ցաւ բերէս:

— Մթամ մենակ դա ա գնում, ապէր. քեօխվեն իրեք օրը մ'հետ Թալեն ա վազ տալի. — շշնջացին միւսները:

— Քեօխվի է քոռ հէրն անիճուլի, մթամ նրան աւսըմ չեմ, նա վիրի արտի ցորենն ա, ուր ա գնում, վեր ընկնի էլի՝ հլեչուէնը տենանք գլխներնիս ինչ ա գալի...

— Խուլեարը մհանայ՝ քեօխվի փորը կշտանայ. խի, նրա փորի ցաւը գիդըմ չես ապէր. ընդդ...

— Այ հարամ լի նրա գլխին, հարամ...

— Վայ էն գեղի գլխին, վայ՝ որ Գոռ—Մուլէն դի տէրութին անիլ...

— Դէ ես քնչ անեմ. քեօխվայ ջոկելու վախտը որ գալիս ա, ամեն մինդ էլ արաղի աղպէր էք դառնում. ամենիդ աչքն էլ նրանըմ ա ըլըմ, թէ ո՞վ ա մի էրկու թաս սիպտակ խմացնում, որ նրան քուչէք (հրէք) աղաք գըցէք. էլ հու միտք չէք անում, թէ տենաք ջոկուղ մարգն արժանի ա, թէ՞ անարժան: Մեր գեղի գլխիցը մի լաւ քեօխվեն Աստօծ ա կտրել. խի չի բդի էս թաւուր տարին մի բանիմաց, հսկացող քեօխվայ ունենանք, որ մեր մէջը կարգ դնի՝ ցաւի վախտը հանդը,

ճամպէքը կապի, թող ա՛նչ, որ ծիտն էլա անց կենայ Սյրը-մի ճալի կշտովը.— աւելի բորբոքուած սկսեց Մուխի ապին:

— Բա հլէ սօր գլուխս ցըւըցնըմ իք թէ՛ մատաղ տո՛ւ. թէ ձեր մատաղը զօրաւոր ա, ընչի՛ք էք նախատըմ էտ մարդին՝ Բըրվըսրայ գնալու հը՛մար, թո՛ղ ձեր մատաղը չը թողի, որ խուլեարը ընտեղան ընտեղ փոխուի էլի....— վրայ հասաւ լտնըհաքին, որից մտղանայ չէին կարողանըմ աւնել և ծաղրեց նրանց հակասութիւնները, բայց կատաղած ամբօխը Թիւնինի հրամանով կրկին դուրս վռնդեց Երկարապոչին:

Մուխի ապին դարձեալ ուզում էր շարունակել իւր խօսքը, բայց յանկարծ Գոռ — Մողէն դուրս եկաւ և մի թուղթ ձեռին գիւղացոց գլխին կարկուտ թափեց, որ իւրաքանչիւր տուն մի-մի սալ սլափաւստի՛ դռների աղբ ու փէյինը դէն ածի:

Հրամանը խիստ էր: Գիւղական ժողովն անմիջապէս ցրուեց դեռ իւր ըղբաղմունքը չը վերջացրած...:

### ԵԶԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԸ.

Ըշխարիս սուտը շատ ա բանց զօրթը:  
Սուտ կայ թեւաւոր ա,  
Սուտ էլ կայ պողաւոր:  
Մի սուտը հազար զօրթ արժի:  
Ժող. աս.

### Ա.

Քնատեղից հէնց նոր արթնացած զազախեցի Պետին, աչքերը տրորելով, ոտի ծայրով բզում էր իւր քնած ընկերի կողքին ու փորին և անզաղար կանչում՝

— Ռա՛քէլ, Ռա՛քէլ... ա՛, մանըմ չե՛ս, Ռա՛քէլ...

— Հը՛, հը՛...

— Վե՛ կաց:

— Ռա՛քէլ:

— Հը՛, հը՛:

— Ա՛, դէ վե՛ կաց է. տնա՛շէն, մարդն էլ էտ-քան կը քնի՛, վեր հա՛:

— Ըը՛. լիսացել ա՛:

— Բա ի՛նչ ա, օրը ճաշ ա դառել:

— Բազուկն աշմիշ ա լե՛լ:

— Հն, հն. վե կաց. եկել ա ջլիւ Լուու վրայ կախ լել:

— Վայլիէ. ս Պետ, էս ինչ ջանս փիս ջարդուել ա. ըսկի կարմ չեմ աչքս բաց անեմ:

— Օյեանմիշ լի, օյեանմիշ. մթամ ես տհենց չեմ. ոսկրնիս գշերս մընչի լիսը մղմղացել են:

— Ուլֆ. վնյ, վնյ. — Ռաքէլը հագլու տեղից ալաս արաւ (վրանստեց):

— Ռաքէլ, էլետ խտոր չ'ընկնես, գործնի. ետորը ծգծքոտել ա— վախտին ուլախնին՝ լծկանը հըւաքենք, լծենք, գնանք. — ասաց Պետին ու ձեռի ճիպոտը դրստեց: Նա ուզում էր գնալ լրծկանը բերելու, բայց վախենում էր, թէ ընկերը կրկին քնի սէլը մնայ անտէր:

Ռաքէլը կրկին վրանստեց, վերջապէս աչքերը բացեց և իւր կոշտ ձեռքերն աջ ու ձախ դէպի կողքերը տանելով՝ սկսեց լաշը քսել ու ամուր— ամուր զրփել: Խեղճ աղքատը գլխիցը ձեռք վեր կալածի պէս այնպէս պինդ-պինդ քորոտում, պոկոտում էր միսը. որ ասում էիր՝ այն է արիւնը կը լկի, լաշը կը կարմրացնի: Գլուխը քորելիս խրթխրթոցի ձայն էր լսում— նա իւր բահանման եղունգները համարեա կիսով չափ մսի մէջ էր մտցրել, բայց, կարծես դեռ իսկական մսին չը լինէին հասած նրանք, որովհետեւ քեասիբը քորելուց չէր կշտանում: Ռաքէլը, որի տանձի կոթի պէս բարակացած վիզը դեռ գիմանում էր հագար ու մի գիւղական ցաւի՝ կող ու բէգեառի, խարջ

ու պարտքի, չանէն մի կողմի վրայ ծռած՝ զրփում, պատռոտում էր իւր միսը, բայց սիրտը չէր հովանում, որովհետեւ նրա հագին, եթէ չափազանցութիւն չկարծեն ընթերցողները, երկու տարուայ՝ հարիւրաւոր կարկատաններով մի շիւայ հալաւ կար, որը կեղտից թիթեղի հաստութեամբ օւլայուել՝ կոշտացել, կէջ էր դարձել...: Նա տրեխները հանեց, միջի հողը թափ տուեց, հագաւ, տեղից վեր կացաւ սէլի մօտ կանգնեց ու սկսեց ճլմկոտալ, արոճտատել...

Պետին արգէն հաւատաց նրան, որ արթուն է, դարձաւ և ասաց կրկին.

— Ռաքէլ ջան, սէլին մղիթ կաց, էս գնըմ եմ ուլախնին հըւաքեմ բերեմ լծենք՝ մանգղիչներնիս էրգեան ա. վախտին տեղ հասնենք: Սմսար կաց հա, սէլիցը բան չգողանան... — ասաց ու ինքն շտապով անյայտացաւ մութն ու փշոտ մոլուտների և մոշուտների մէջ:

Լուսինն արգէն անյայտացել էր. արեւմտեան սարի բարձրութիւնից մութ ստուերն ընկել էր դիւզի մոլուտների վրայ խաւարացրել նրան, այնպէս՝ որ դաշտի առարկաներն աչքով իրարից զանազանել չէր լինում: Պետին սիրտն ահ գցած, այդ խիտ ու մութը մոշուտների մէջ եզներ էր որոնում. նա գիշերն ինչոր երազ էր տեսել:

— Ուլֆ, անտէրն աչքս հանեց. վայլ է, քրտորունջ տունն Աստօծ քանդի, աչքս հանըմ էր. — լսում էր մոլուտից:

Չօփ ու փշոտ ցողունները Պետինի աչքին էին գիպչում, փշերն ու սրհարները չանկոթում, պոկում, պլոկոտում էին նրա երեսը և պատռոտում նրա ձորձերը: Քիչ լուռթիւնից յետոյ, էլի լըսուում էր:

— Ո՛ւֆ, կուռս ծակեց, փափախս վեր ընկաւ, կորաւ. էս սրտեղ ընկաւ էս անտէրը և այլն: Բայց, ինչպէս երևում էր, երբեմն էլ պատատուկ կոչուած բոյսերը փաթաթուելով խեղճի ոտներին, վեր էին գցում նրան և քիթ ու պոռնգը գետնին խփում:

Վայ գիլանը ձեզ ուտեն, ա՛ եզնի՛ք. էս դո՛րը կորան: Վայ թէ՛ տարան. հը՞.— ահաւոր ձայնով ինքն իրեն հարց էր տալիս աղքատ գիւղացին:

Պետին սովորականից շատ ուշացաւ, որով Ռաքէլի սիրտն էլ ահ ընկաւ:

— Ո՞նց անեմ, սէլը թողամ զնամ. — ասում էր նա:

Ե՛հէ, Պետի՛, Պետի՛:

— Հէյ:

— Ս, էտ խի՛ եղացար, ընտի չէ՛ն. — բարձր ձայնով հարցնում էր Ռաքէլը:

— Չէ, սրգեան են ըստի. կտորւածնին հեռացել են, կան ո՛չ:

— Տէս, տէս, ընտիէք՝ ժախոուտները՞մը նստոտած կլեն:

— Աբուաշ ջան, հօհօհօ... բիժի ջան. — Պե-

տին սկսեց աղաչելով կանչել եզներին, որպէս զի բառանչեն, բայց...

Այդպէս Պետին հետզհետէ սայլից հեռացաւ և բաւական ժամանակից յետոյ, երբ արդէն լուսացել էր, երևաց հեռու բլրակի վրայ: Նա այնտեղից կանչեց Ռաքէլին, իմաց տուեց, որ եզներից մինը գտել է և ահա այն բլրի լանջի վրայ արածում է, իսկ միւսը չկայ ու ինքը շուտափոյթ՝ չուխէն ուսովը ձգած, թաշկինակը գլխին հուկ տուած, քրտնքամխած բլրի քամակն անցկացաւ:

Ռաքէլը մի աչքը սէլին գցած միւսը եզանը կթած, վազեց դէպի նա, պոչից բռնեց, քշեց, բերեց սայլի մօտ կապեց և շատ երկար սպասեց ընկերոջը, բայց նա մինչև երեկոյ չ'երևաց:

— Վայշ, քու տունը չբանգուի, Պետի, եզը կորաւ, հմի ինքն էլ անօթի ծարաւ մեռաւ. — ինքն իրեն խօսում էր Ռաքէլը և յուսահատ, աչքը սարերին ու բլուրներին ձգած՝ անհամբեր սպասում էր:

Ռաքէլը Ղազախի յայտնի Չինարքու տակ կենսամաշ մտքերի ալեկոծութեան մէջ էր ընկել: Ինչէ՛ր ասես, որ այդ քեասիբի տանջուող մտքովն անցնելիս չլինէին:

— Նրան մի բան պատահեց, որ էսղաղար եղացաւ. — ասաց Ռաքէլն ու բարձրանալով մօտիկ թմբի գլուխը, սկսեց բարձր ձայնով կանչել:

— Ե՛հէ, հէհէ Պետի, Ե՛հէ՛՛յ... — նա որքան ոյժ ունէր գողաց, բայց պատասխան չտացաւ.

ուզում էր ինքն էլ գնալ, սալն ու եզն անտէր  
 թողնել չէր կարողանում: Ելի սպասեց: Վերջին  
 անգամ բարձրացաւ նոյն թմբի գլուխը, աչքը  
 բարձրացրեց՝ նայեց դաշտին և երևեցող մարդկանց  
 հարց ու փորձ արաւ Պետինի մասին: — Մէկից ի-  
 մացաւ, որ Պետին Գաղ-Քասամանի վրայ գլխվերեց,  
 միւսից, թէ՛ Պետին Սոմբայլուի վրայ անց կացաւ,  
 երրորդից հազիւ իմացաւ, որ նա այն բլրի ետե-  
 ւովն ահա գալիս է: Ռաքէլն ուրախացաւ, իսկոյն  
 թմբից իջաւ սալի մօտ և սկսեց լուծն ու չուան-  
 ները, սամի-սմետէններն ուղղել, պատրաստել, չի-  
 մանալով, թէ Պետին ինչ գրութեան մէջ է վե-  
 րադառնում...: Վերջապէս եկաւ Պետին, բայց դառն  
 ու դատարկ և այնպէս տխուր, որ եթէ դանակ  
 տայիր, արիւն չէր կաթիլ:

— Ա՛, Պէտ. էտղադար խի՞ եղացար, եզը գը-  
 տար ո՞չ:

— Մէջքս կոտրեցին՝ եզս տարան, տունս քան-  
 դեցին... վայշշ. — Լքացած պատասխանեց քրտնա-  
 քամ եղած աղքատ Պետին:

— Ա՛, ո՞նց թէ տարան. բա հետը կտուր չա-  
 րէր, իզը (հետք) չ'երևանց:

Գէնա որ ըրևար, կը բերի էլի. — յուսահատ  
 պատասխանեց նա և սկսեց ինքն իրեն խրատել,  
 մեղադրել:

— Եզս մի թայեանի մնաց էլի՛: Վայ Մեծ քու-  
 նը վրէժ ընկնի Պետի: Ա՛, ասա տօ գեւորդանդ  
 ու մէջքդ կոտրի, քնիլ մի էլի: Վայ ունդատդ

կտրի երրի՛ — բերի ո՞չ թէ սէլիցս կապեմ, ժախտ  
 ու ժանգեառից քաղեմ աղաքնին ածեմ, ուտեն,  
 թող արի, արխէի՛ն դէնն արի՛ տուի տունս քան-  
 դեցի՛՝ էրկու բալակ-մալակի հըմար տասը թում-  
 նանոց եզս տանիլ տուի...: Թի՛ւ. վայ հայի եզի  
 խելքն ինձ հա՛. վայ օտալ խելքի տէր Պետի...:

Այդպէս դառնաղետ կերպով Պետին ինքն ի-  
 րեն նախատելուց յետոյ՝ դարձաւ ընկերին.

— Ռաքէլ, էս ա եզս հու կորաւ, ես էլ դա՛ր-  
 դակ կարալ չեմ մեր գեղըցոց իրեսը գնալ, դու  
 բսպարի գեղիցը մի թայ ուլախ բերեն, սէլը տար  
 տեղ հսցրու...: Ես գնըմ եմ. տեսնենք Աստօծ  
 ի՞նչ կ'աջողայ... — շտաց ու կրկին այն կողմը գը-  
 նաց, որտեղից նոր վերադարձել էր:

— Պետի ջան, էտ զոյերբը հու ման ես եկել,  
 էլ ո՛ւր ես դետը գնըմ:

— Ման գալու չեմ գնըմ, դու սէլը տուն  
 հըսցրու...

— Բա ընչի՞ ես գնըմ, որ ման գալու չես  
 գնըմ:

Պետին պատասխան չը տուեց. նրա միտքն ու-  
 ըրիչ էր և միայն իրեն էր յայտնի: Տեսնենք ո՛ւր  
 է գնում:

— Ա՛յ տղայ, դու արի քարը փեշիցդ վեր ա-  
 ծա՛ դետը գնալ մի, ետ արի, ըտիէք չիմ արնկեր  
 թուրքեր են, մութն էլ էս ա վրայ ա հըսնըմ...  
 Վայ քու տունը չքանդուի. գնալ գի ըռխնին էլ  
 ընկնիլ սպանեն մի տուն քիւլփաթը մնայ տուն

արած, դուռն իրեններին փակած...: Ռաքէլը մինչև անգամ աղաչեց նրան, որ մնայ՝ գոնէ լոյսով գնայ, բայց նա իւր մտքինը աւելի լաւ էր համարում մթնով կատարել: Պետին ընկերին չլսեց, յետ անգամ չը նայեց: Իսկ Ռաքէլը խճուղով գնացող ճանապարհորդներին խնդրեց, Լալի գիւղացի Պետինի կնոջն իմաց տան, որ հարևանից մի եզն ուզի և իրեն հասցնի:

Բ.

Պետին ու Ռաքէլն արդէն հինգ օր էր, որ տանից դուրս էին եկել: Նրանք երկուսն էլ աղքատ մարդիկ էին: Օգոստոսի կիսին վերջացնելով իրենց սակաւ կալ ու կուտը, մի քանի վառիկ կալան ածեցին քթոցի մէջ, մի քանի խան գարի էլ ջվալներն ածեցին ու եզնասելով ճանապարհ ընկան, գնացին Սալահլուի թուրքերից մի սալ սոխ, սեխ ու ձմերուկ գնեցին՝ (փոխեցին իրենց տարածների հետ) և երկար ճանապարհ կտրելով, գիշերուայ դառնաժամ քնոցին՝ սալն իջեցրին Ռիտեւանի ճալում, խճուղու վրայ՝ ղազախեցիներին և ճանապարհորդներին ծանօթ երեքբնեան հսկալական չինարի ծառի տակ, որ հանգստանան և հանդստացնեն, արածեցնեն իրենց եղբայր եզներին:

Պետինի կարողութիւնն երկու եզն էր, մինն էլ կորցրեց. դա միւսնոյն էր թէ՛ Պետինի աջ կուռը կտրուեց:—Նա այդ երկու եզնովն էր կառա-

վարում իւր տունը. նրանցով էր վարում, տափանում, կրում իւր խուրձը, բերում իւր այրելու փայտը և վերջապէս նրանցով էր վճարում հարկը, քաշում տաժանակիր կոռ ու բէգիաուր: Նրա գերդաստունը բաղկացած էր տասներկու հոգուց— կինը, մանր երեխայքը, եղբօր այրին ու որբերը և պառաւ մայրը. այդ բոլորը ապրում էին միայն Պետինի արիւն քրտինք վաստակով: Այդ ամենի հագուստն և ուտելիքը խեղճ աղքատը հագիւ էր կարողանում իրար գցել, թէև պատահում էր, որ շատ անգամ նրանք օրերով քաղցած էին մնում: Պետինի համար աւելի դժուար էր նրանց հագուստի հոգար, նրանց բոլորի մերկութիւնը ծածկել չէր կարողանում. նրանցից մի քանիսն առանց շապկի էին, միւսները ոտաբոբիկ, գլխաբաց:

Գիւղացի էին, բայց կթի կով, գոմէշ, ոչխար չունէին, որ ուտելիքները՝ չոր ու ցամաք, գարնական կորկի հացը մաճնով կամ կաթնով ուտէին. նրանք տարին տասներկու ամիս բանջարեղէնով էին կերակրում, եթէ միայն նրանց բաղդիցը տարին երաշտ և բոյսերը տոչորուած չը լինէին...: Այդ էր պատճառը, որ խեղճ Պետին հաւ ու ճիւ առած ձմերկի կամ բոստանի էր գնացել սալով:

Ամենի աչքը ճամպի էր, թէ ահա կը գայ նա. բայց ուշացաւ, նշանակեալ օրը չերևաց:

Տնեցիք անհանգիստ էին. նրանք գիտէին, որ Ղազախի գաւառի ամեն մի քիւնջ ու պուճախն աւազակներով լիքն է և...: Մանր երեխայք, որ

ուրտխանում, թռչկոտում էին՝ թէ Պետի ապին սեխ ու ձմերուկ է բերելու իրենց համար, երկար սպասելուց համբերութիւնները հատաւ. վերջին օրերում նրանք սկսեցին անդադար լալ, ձմերուկ ուզել: Պետինի կին Խանիկ աքիբը երեսաներին հաղիւ գուրգուրելով կարողանում էր հանգստացնել:

— Էսա ապին որտեղ որա, դո՛ւս կը գայ սէլ՝ հարքմը, լաց միք լիլ, բալէք ջան, լաց միք լիլ նանը ձեր ջանին մատաղ լի, նանը ձեր գլխին ու արևին սադաղ լի: Սուս կանց, Մակի ջան, նանը սիրսուն-սիրսուն աչքերիդ ղուրբան լի. սո՛ւս, չարիդ փոխ լեմ, Հանէս ջան, սո՛ւս, սո՛ւս քե մատաղ... Բայց նրանք սէլհարքի դատարկ ճանապարհին նայում էին ու սկսում կրկին զու քաշել, ժանգուժէն անել. իսկ Խանիկն ու իր տէգրակինը և Պետինի պառաւ մայրը, աչքները դարձրած սէլհարքի ճանապարհին, յուսակտուր սպասում էին, թէ այն է՝ Պետին ճոճուան սայլով ձմերուկ կբերի և իրենց թխուած, ցամաքած քիմքերը կը քաղցրացնի: Երեսանցը լռեցնել չէր լինում. նրանք պռօշները կախ գցած շարունակ լաց էին լինում— «Ը՛ր՛ը՛ր՛... Ը՛հի՛ւ՛ի՛ւ՛... ձմե՛րուկ եմ ուզըմ...»:

— Խանիկ, աղջի, էտ լակոտներին անխօս արա, դրանք իրանց գլո՛ւխն ուտեն, էնդադար բայդու՛շի ճուտերի պէս ժանգուժէն արին, օռնացին, որ սիրտս ահ ընկաւ, անտէր ագուան ու չարթն էլ հաչի վրնիցը հեռանըմ չեն՝ կըչհակըջը սարքել

են...\*): Բեխես՝ Պետիս եղացաւ. նրա մօր աչքերը տրաքւի. չը լի՛ թէ նրա մօրը մի փորձանք ճըհէց (պատահէց): Խանիկ, աղջի, այ՛ աղջի, Խանիկ...

— Հէյ. — մեղմ ձայնով պատասխանեց հարսը:

— Աղջի, արի՛ մի լակոտդ ա՛ռ, ես դէնը թմբի վրայ գնամ տենամ, բալի սէլն ըրեալ... նրա մօր աչքերը դուս գայ, բեխես էսդար խի՛ եղացաւ...

Պառաւը երեսան մօրը յանձնեց, իսկ ինքը, որ սաստիկ պառաւելուց հաղիւ էր կանգնում ոտքի վրայ, ձեռքը մի կարճ փայտ առաւ ու լքլքալով, տնդորալով — քիւթքիւթալով՝ ոտաբոբիկ, մետակ հալաւ, ետխամախէն պատուտորած, առանց գլխակապի, դինգը մի կողմի վրայ ծռուած, մի փշուտ և տատասկուտով՝ տեղ-տեղ կուանալով՝ բոների մսի մէջ խրուած փուշ ու սրհարները դուրս քաշելով և մէջքը հաղիւ դրստելով, չոր ու աննիւթ դարձած մարմնին միակ ապահովող հալաւը ճանկուտող ցաքիների բերանին թողնելով՝ բարձրացաւ թմբի գլուխը, նայեց ներքև՝ հեռուից եկող երկայն ճանապարհին, աջ, ձախ, ետ, առաջ, բայց ոչ Պետին երևաց և ոչ սայլը: Խեղճ պառաւը կրկին յուսահատ, անցօր ծնկները թակելով իջաւ թմբից, հանդիպեց մի տղայի, կանգ առաւ մօտը,

\*) Գիւղերում շունը երբ օռնում է, երեսայքը լաց են լինում, կամ ագուանելը կոկոացնում են, դրանով գուշակում են, թէ տանը մեռնող է լինելու կամ մի որ և է չարիք է պատահելու:

կոր մէջքը դրստեց, բայց յանկարծ լքացականչեց ծնկներին խփելով

— Վայ, էրագս կատարւեց... — ասաց ու շնչասպառ հազիւ տուն հասաւ և հեռահանած վայր ընկաւ շէմքում:

— Վայ, Աբուաշ եզս գողանալ են տուել, սէլը մնացել ա ճանալին, Պետին էլ արնկեր թուրքերի հանդերըն ա գնացել, վայ. — Տանեցիք ևս իմացան թէ չէ՝ բոլորն իրար խառնուեցին — սուգ ու շիւանը տուն ընկաւ:

Խանիկը հեկեկալով գնաց հարևանից մի եղն ուղեց և Կարապետին աղաչեց, որ Ռաքէլին հասցնի: Իսկ պառաւը սրահի առաջից մի քանի կանաչ խոտ պուկեց և սկսեց գիլկապ ու գող կապ անել աշխարհը:

— Ի՛նչը կապեմ էրկու բթով...

Գողի ճամպէն հազար թոկով... Տէր վերնէին, թագաւոր Աստօծ, դ՛ու լես Պետինիս տէրը, դ՛ու լես անարժանիս աղօթքը...

— Հնփիյ է:

— Խէր, Տէր-Աստօծ, դ՛ու չարը խրփանես, բարին առաջես. — երեխայի սաբրին շտապով պատասխանեց պառաւը:

— Հնփիյ է, հնփիյ է, հնփիյ է, — երեխան երեք անգամ կրկին և կրկին փռշտաց. իսկ պառաւը յուսալից բացականչեց.

— Փնռք քու զարգեահիդ (դարաւոր գահիդ), Աստօծ ջան. ըեխիս քիթը փորձել եմ՝ ջուխտը խէր ա, կէնտը շառ: Է՛յ, Տէր Աստօծ, է՛յ վերնէին թագա-

ւոր. դ՛ու չարը խրփանես, բարին առաջես...

Պառաւը երեխայի սաբրից քաջալերուելով, անասման կերպով հաւատում էր սաբրի նախապաշարմունքին:

Ռաքէլն ամայի չինարքու տակ՝ չոր քարին նստած ննջում և մտածում էր իւր անթիւ գարդ ու ցաւերի հետ և կորած ընկերի մասին:

— Բարի օր քե, Ռաքէլ ապի. — յանկարծ խօսեց գիւղից եզր բերող Կարապետը:

— Ասճու բարին, Կարապետ ջան, բերէր: Վայ ես քու արևին մատաղ լեմ, օր ու գշեր, ա, անքուն աչքերս ջուր կտրուեց հլեջուել դէս ու դէն մտիկ տուի: Ի՛նչն արա լծենք, Պետին էս ա եկաւ ոչ:

Նրանք սէլը լծեցին և ճանապարհ ընկան դէպի Լալի գիւղը:

Գ.

Պետին երկրորդ անգամ հեռանալով սայլից, ճանապարհ ընկաւ դէպի Սոմբալուի կողմերը: Եզր գտնելու յոյսը կտրած Պետին ճանապարհին այսպէս մտածեց.

— Սի տուն քիւլիաթս ընչով պըհեմ, բա գընամ Աբուաշի հըմար էլ պարտք անեմ, ըսկի արած պարտքս տուել չեմ, մնէլ որ անեմ, ո՛նց տամ, ո՛նց ազատւեմ... թէ գալիս եմ մի բան անեմ, փեշակս չի, թէ չէ, հինգ թուճման պարտքի տակ դեմ ընկնիլ, որ էլի մի թայ եզն առնեմ, ընէլ՝ մնչի մահս

կըլացուք չեմ պարտքի տակից դուս գամ... Տը՞, անեմ, վա՛յ թէ...

Ինքն իրեն աքալիսի հարցմունքներ տալով, Պետին արդէն մթուփեան մէջ բաւական ճանապարհ էր կտրել: Նա աչքը հեռուին կթեց, տեսաւ, որ այնտեղ մշմեղած կրակներ են երևում և շները կէնտ-կէնտ հաջում ու կլանչում են...

— Ե՛հ, ի՛նչ կլի, կլի, գլխիցս ձեռը դեմ վեր ունիլ՝ մտքինս անիլ, էլ ճար չը կայ: Աբառ էգս էլ ետ չի գալ. — ասաց, վճռեց մտքինն ու ճանապարհը շարունակեց, մօտեցաւ երևցող կրակներին, կուչ ու կուչ, շունչն իրեն քաշած, մտաւ անասունների փարախը և թուրքի դալից մի լաւ եզը դուրս ձգեց, պոչից պինդ բռնեց, սուսուփում՝ ձայնը փորը գցած, երկիւղից լքլքալով, եզան փորին ճիւղտի ծայրով բզտի տալով, քշեց դէպի Նիտեան: Գիշերն արդէն կէս էր:

— Լեղով քշեմ, թէ չէ կհասնեն փառչալամիշ կանեն. — ասում էր ինքն իրեն և եզն շտապով քշում ամալի դաշտերի միջով: — Պետին ամեն կերպ աշխատում էր եզն այնպիսի տեղերով տանել, որ միւս օրը հետքը չգտնեն:

Այն ժամանակ Ղազախի գաւառում դեռ ոչոն էր թագաւորում — ով ուժով էր, նա ապրում էր, պատիւ ունէր, ով չէ՛ր տի տակ կորչում էր:

Ղազախում գողութիւնն ու աւազակութիւնը մի այնպիսի արհեստ էր դարձել թուրքերի համար (այժմ էլ պակաս չէ), որ ոչ մի թուրքի տղայ, մի

օր անգամ, առանց գողացած անասունի միս ուտելու չէր մնում. աւելի լաւ որ ասենք՝ թուրքն առանց գողութեան, աւազակութեան, արիւնհեղութեան նամազ չէր անում: Թուրքերն այն ժամանակ աւելի ուժով էին, քան հայերը, որովհետև վերջիններս նախ շատ էին հալածուած և երկրորդ քիչ էին, բայց յետոյ շատացան Ղազախում և բացի դրանից, թուրքերն ուստի գլխարկ տեսնելուց յետոյ, համեմատաբար զսպեցին իրենց անսանձութիւնը և կատաղի աղաները համարեա մի աստիճան նուազեցին...: Հայերը շատ թույլ և վախկոտ էին, որովհետև դեռ նախնական համբերող դրութեան մէջ էին, մէջները՝ բառիս բուն նշանակութեամբ մարդ չկար...: Խեղճերը հալածանքներ շատ էին կրել. մանաւանդ պարսկական թուրքերի հալածանքներից, բարբառոսութիւններից ճնշուած իրենց ետը կորցնելով, նոյն իսկ իրենց սեփական տան դրան առաջ անգամ, թուրքի որևէ «գետազ» (հասարակ տղայ), եթէ իրենց կնոջը հայհոյէր... էլ, ոչինչ չէին կարողանում պատասխանել. գիտէին, որ իսկոյն սրախողիող կամ գնդակահար կը ընկնեն գետին: Թուրքերը միշտ գողանում կամ հէնց օրը ճաշին ուժով խլում էին դաշտից երկրագործի արօրը քաշող եզները և ընդդիմացողին անխնայ ծեծում, մորթում և ունեցածը կողպտում, տանում էին: Կային կէնտ ու հատիկ քաջ հայեր, որոնք որսկանի դարանից գնդակներով խրատում էին

բազմաթիւ թուրքերի, բայց այնպիսիների թիւք  
գեռ քիչ էր...

Ահա այնպիսի մի վայրենի ժամանակ: Պետին  
գիշերը թուրքի եզն է փախցնում, որովհետև նա  
շատ հալածուելուց, համբերելուց և գողացած եզ-  
ների պարտքը վճարելուց՝ բեզարել էր, համբերու-  
թիւնն արգէն հասել էր կատկին: Եւ ճշմարիտ, երբ  
պղնձի տակը շատ կրակ ես անում, այն ժամա-  
նակ միայն ջուրը թափուում է. հային ևս հարկա-  
ւոր է շատ հալածել, որ նա մի բան անի...:

Պետին ուղիղ լուսածէգին հէնց հասաւ այժ-  
մեան Ղազախ քաղաքի մօտ, յանկարծ իւր ետևից՝  
բլրի քամակից անյայտ անձերի սպառնացող ձայ-  
ներ լսեց թուրքերէն լեզուով՝

—Ս: Էրմանի, ա՛ էրմանի:

—Վայ, բռնեցին. — երկիւղով շշնջաց Պետին,  
բայց եզան պոչը բաց չը թողեց, շարունակեց քը-  
շել, որովհետև նա վաղուց ասել էր գողի խօսքը,  
թէ «գողութեան գնացողն էլ չպիտի մտածէ, թէ  
իր գլուխը սաղ կարո՞ղ է ետ բերել»:

—Ս: Էրմանի, էօքիւզըմ համնա ափարեր սան,  
ա՛աղա, գա՛ջմա, գա՛ջմա, վուրդում, վուրդում. —  
հրացանաձգութեամբ սպառնում էին ձայները:

—Ես ասել եմ թէկուզ գիւլլատուր, գիւլլա-  
խորով էլ անեն, մտքինս անիլ դեմ, բո՛լ էր ինչ-  
զադար պարտք տրւի. — իրեն բռնի համարձակու-  
թիւն տարով ասում էր Պետին և արագ քշում,  
որպէս զի կարողանայ իրենց հանդին մօտեցնել՝

հարայ տալ գիւղացիներին օգնութեան հասնելու:  
Նա եզան հետ գլխապատառ ձորն ընկաւ:

Լոյսն արգէն ընկել էր: Բափ ու քրտինքում  
մտել էր Պետին, այնպէս որ կարծես հեղեղի տակ  
ընկած լինէր: Նրա տրեխներն ու պաճիճները վա-  
ղուց արգէն քրքրուել, ոտներից ընկել՝ կորել էին  
և աղքատի պճեղներից ու կոճերից քարի փայտի  
ու տատասկի ճղած, չանկուտած տեղերից արիւն  
էր հոսում: Առատ քրտինքն աչքերը կալել էր,  
բայց նա սրբելու ժամանակ չունէր, քշում էր  
հայ-հարա:

Բայց, մէկ էլ յանկարծ սարսափահար եզան  
պոչը ձեռից բաց թողեց ու արձանացած մնաց.  
Նա տեսաւ, թէ ինչպէս թուրքերը թմբի քամա-  
կով՝ ուղիղ գծով վազելով եկան իր առաջը փակե-  
ցին:

—Ս: գող էրմանի, ո՛ւր ես տանըմ մեր եզը,  
խու չես ուզըմ էս սհաթին գիւլլախորով անենք  
քե. — ահարկու ձայնով գոռացին նրանք և տիրա-  
պետեցին եզանը: Պետին կարծես ցնորուած էր  
ձեւացնում իրեն, այնպէս էր շփոթուել:

Վախկոտ Պետին զարմանալի էր, թէ յանկարծ  
որտեղից համարձակութիւն ստացաւ, որ վրըն-  
կաւ եզան պոչից կրկին բռնեց և սկսեց պնդել  
թէ եզը չի գողացել, այլ իր սեփական կովի հորթն  
է: Երևի նա թուրքերին ճանաչեց, որ եզան տէ-  
րերը չեն...

Թուրքերն էլ երկար չը խօսեցին. նրանցից

մինը վրանհալ հրացանին, բայց յանկարծ, կարծես մի ելէքտրական զօրութեամբ կաշկանդուեց՝ անշարժ մնաց իւր տեղում: Միւս թիւրքերն էլ նոյն դրութեան մէջ ընկան: Պետին, որքան ոյժը կը ներէր, գուռաց՝ երկու անգամ հարայ կանչեց...

Յանկարծ թուրքերի աչքը պէլացած մնաց մի անակնկալ և երկիւղահայեաց ձիաւորի վրայ, որը կարծես Պետինի ձայնից, և կամ գետնից բուսուս նրանց առաջ:

Ձիաւորը Լալի գիւղացի Տէր-Սարգիս քահանան էր, որից աւաղակ թուրքերն անգամ սարսափում էին...

Տէր-տէրը սևաթուր ձին նստած, կէս թուրը փարաջի տակ կապած, փշտովը գօտիկը խրած, առաւօտեան ծէգին Դիւանբէգի զիւանատունն էր գնում բողոքելու և արդարութիւն պահանջելու մի անիրաւութեան դէմ...: Նա Պետինի լքեալ ընկալին վրահասու և իւր խոժոռադէմ ահարկու հայեացքով նայեց թուրքերին, որոնք խսկոյն ճանաչեցին «Իլանին»: Այդպէս էին անուանում Տէր-Սարգսին իւր սոսկալի, սրտոտ բնաւորութեան համար:

—Ս! Պետ, ադա ըռանգ-մռանգդ խի՞ ես թըռցրել, քնչ կայ, հը՞. — աչք-ունքով անելով, քամակը թուրքերին շրջելով և ձեռքերն աջ ու ձախ տատանելով հարցրեց քահանան. — էս քնչ եզն ա, քնչ թուրքեր են, ո՞րտեղից, ո՞րտեղ...

Դեռ խօսքերը չաւարտած՝ Պետին աղաղակեց.

—Վայ ես քու կարգիդ մատաղ տէր-տէր ջան,

էտ ո՞րտեղան ո՞րտեղ դուս եկար անօրէնի թորփաղըմ մնացածիս կշտին, մգեար դու իմ պահապան հրեշտակն ի՞ր...:

— Հը՞, քնչ կայ, ասա տե՛նանք:

— Տէր-տէր ջան. — ասաց նա կամացուկ. — հայերէն խօսա, էս շները չ'իմանան, բանս ուրիշ թաւուր ա՛՛ եզն իմը չի, եզս էրէկ գշեր տարան, էս եզը գողացել եմ նրա փոխարէն տանըմ, էս շներն էլ, դու լաւ գիտաս, գողեր են, եզն իրանցը չի, ուզըմ են տէր կաղնիլ, քնչ ճար ու հնար գիղաս ինձ սըվրցըու...:

— Ա՛դա, դրա հըմար ես քե կորցրել, վախել մի, քշի, քշի եզը հետներս տանենք Դիւանբէգի մօտ, ընդի եմ գնըմ, մի հնար կանեմ, եզը քու՛նն ա...

Թուրքերն ակնածութեամբ մօտեցան Տէր-Սարգսին և կեղծ գանգատուեցին նրան, թէ եզն իրենցն է, հայը գողացել տանում է:

— Զուր տեղը ղալմաղալ միք անիլ, եզը ձերն ա, թէ ձերը չի, քշեցէք տանենք զիւանի մօտ, նա ինչպէս կը վճռի էնպէս էլ կանէք:

— Ս! Պետ, քշի, եզը քու՛նն ա. — վստահ կերպով ասաց Տէր-Սարգիսը:

— Վայ ես քու պաշտըմ-պատարագին մատաղ, տէր-տէր ջան, քնչ բղէր լիլ իմ հալը, թէ որ քե Աստօծ չճըհըցնէր (չպատահեցնէր) ինձ...

Խօսելով և մեղմ վիճելով նրանք ամենքը գնացին Դիւանբէգ ու զիւանատունը, ուր թուրքերն էլ գանգատուեցին, Պետին էլ:

Այդ այն ժամանակն էր, երբ Ղազախի և այլ գաւառների այժմեան դատաստանական-վարչական կազմակերպութիւնը չկար, այլ ամեն տեսակ վէճ ու գործ դատում կամ առանց դատողութեան իսկ, վճռում էր միայն Ռիւանբէգին, բայց վնչ ժողովրդին, եթէ Ռիւանբէգին մանաւանդ թուրք ազգից էր: — Հէնց նա ինքը գողերի ընկերն էր...

Պ.

Ռիւանբէգու դատարանը շատ անգամ փոփոխական էր. գտնւում էր թրքաբնակ գիւղում: Նա միւս տներից ոչնչով չէր զանազանւում, մի հասարակ, կեղտոտ և հոտած թուրքի տուն էր: Սրահի ու սենեակի մէջ՝ երկու կողմից ձգած էին երկայն ու նեղ թախտեր, որոնց գլխին նստում էր ինքը Ռիւանբէգին, իսկ մնացած տեղերում գանգատաւոր ամբօխը: Այդտեղ հազալ, թքել, ղալեան ու չիբուխ քաշել, պպգել, պառկել... մինչև անգամ լաշը քորել... և փափախը քթուել... մի խօսքով ամեն անքաղաքավարութիւն կարելի էր անել: Սրահի սիւններից գանգատաւորների շատ ձիեր կային կապոտած: Տանից մի քիչ հեռու, խոտերի մէջ հաւաքուել էին մորուսներն ու եղունգները կարմիր հինայ կամ, ինչպէս գիւղացին է ասում՝ «խինայ» դրած և մորուսները հաջատեղում կարմրացրած թուրքեր: Նրանցից ոմանք պորտների վրայ, խմբից հեռու՝ թափուել էին դաշտում. միւս-

ները Ռիւանբէգու հետ՝ եասոււնների հսկողութեան տակ մի շրջան էին կազմել նստոտել այնտեղ. Ռիւանբէգու կողքին նստոտած էին աւելի ծերերը, աղալարները կամ պարզն ասել՝ նրա կաշառատու, գող, գործակատար մարդիկը, որոնք ղալեաներն ու չիբուխները բռնած, պտուկները բերանները դրած՝ մորուսները փայփայելով, ծուխ արտաշնչելով, զլղզլղացնում էին: Միքանիսն էլ չիբուխները քաշելով, անկարգ և լայնաբաց կլտափներով յորանջում էին...

Իսկ Ռիւանբէգին, որն իւր մաւի, ափերքը կարմիր ու թանկագին կապալով զանազանւում էր միւսներից, կողքի վրայ հպարտութեամբ պառկած, բեխերը սրելով—սղալելով խորհուրդ էր անում այն քաւթաւ թուրքերի հետ և հէնց թինկը տուած էլ վճիռ կայացնում: Գործի, բողոքի վճիռ տալն այդ ժամանակուայ տգէտ դատաւորի համար շատ հեշտ էր: Նա առանց հարց ու փորձի, առանց քննութեան, շատ անգամ բողոքող կողմերին ուղղակի առաջարկում էր երգուել և ո՛վ ախորժակով երգւում էր, նա արդար էր և ազատ ամենաանիրաւ գործի մէջ անգամ...

Այդտեղ գողացուած եզը ո՛չ թուրքերինն էր և ո՛չ Պետինինը. ոյժ, լեզու էր հարկաւոր միայն, իսկ Տէր-Սարգիսն այնտեղ էր և իր հնարագիտութեան հրաշքը ցոյց էր տալու թուրքերին:

Թուրքերն աւազակներ էին. նրանք հեռուից նկատելով, որ մենակ հայը՝ Պետին երկիւղով եզը

քշում է, ուզում էին խորամանկութեամբ տիրա-  
պետել և նրան ահ տալով՝ ձեռքիցը խլել— գողից  
գողանալ: Շատ բողոքողներ կային Դիւանբէգու ա-  
ռաջ կանգնած բացի Պետինից:

Բողոքատուների գործերի վճիռները հետզհետէ  
վերջանում էին և հերթը հասնում էր եզան մա-  
զալու գողութեան գործին:

Վերջապէս հասաւ գործի քննութեան ըոպէն:  
Այդտեղ իբրև երգմնեցուցիչ արդէն կանգնած էին  
հայ և մահմետական դաւանութեան ներկայացու-  
ցիչները՝ Տէր-Սարգիսն ու գլուխը սպիտակ չալմայով  
փաթաթած մոլլէն:

Դիւանբէգին մօտ կանչեց թուրքերին և առա-  
ջարկեց երգուել:

— Դիւանբէգին սաղ լի, թող հայը երգուի,  
մենք ձեռք կքաշենք եզնից:

Թուրքերը հաւատացած լինելով, որ քրիստո-  
նեան սուտ երգում չի ուտիլ, Պետինին երգում  
առաջարկեցին: Պետին տատանուում, դժուարանում  
էր երգուել:

— Տէր-տէր ջան, տէր-տէր, մի ղրաղ քաշուի,  
բան եմ ասում.— կամացուկ ձայնով Տէր-Սարգսին  
ղրաղ կանչեց և առանձին ասաց նրան:

— Կարգիդ մատաղ...

— Ասա՛, որդի, ասա:

— Տէր-տէր ջան, քե էլա այեան (յայտնի),  
Ասծուն էլ, որ էս եզն իմը չի, համա ի՛նչ արած,  
բան ա, ընկել եմ, պէտք ա դուս գամ. հմի թէ

որդըմ եմ ուտըմ, Ասծուց վախըմ եմ, թէ չեմ  
ուտըմ, ա՛հ եմ անըմ, որ թուրքերը եզը տանեն,  
անըմս գող վեր անեն (հրատարակեն) ու վրես ծը-  
ծաղեն էլ թէ՛ «հայիցը եզը խլեցինք. ո՞նց անեմ,  
հը՞. Ասծուց վախըմ եմ, մեղք խու չի. աւետա-  
րանըմն ի՛նչ ա գրած...

— Ադա եզն ումնից ես գողացել:

— Սկանդարի տղերանցից, էն գող աւազակ-  
ներից:

— Դէ էլ խօսալ մի, երդըմ կե:

— Տէր-տէր ջան, գեանի աւետարանը խու վնաս  
չի տալ ինձ:

Չէ, չէ, աւետարանըմը գրած ա, թէ «գողից,  
աւազակից գողանալը մեղք չի». — ասաց քահանան:

— Տէր-տէր ջան, դէ էտ ա, որ անըմ ես՝ որ-  
դըմ դեմ ուտիլ, ամա Ասծու ահը սրտըմս ա...

— Ա՛յ տղայ, գիժ մի լիլ, քե խու խաչ ու  
աւետարանով չեմ երդըմ տալու, որ Աստօժ պատըժի:

— Բա ընչո՞վ, տէր-տէր ջան:

— Ջրըմս (գրպանումս) մի հին օրացոյց կայ,  
ընդով դեմ երգուացնիլ. դու քանի ջանըմդ ջան  
կայ, պի՛նդ երդըմ կե, վախես ոչ:

— Հա՛, հա՛, կարգիդ մատաղ, հէնց արա մեղ-  
քի տակ չընկնեմ:

— Ա՛դա, էս եաբանի դիւզըմը մեղքն ի՛նչ ա  
շինըմ, մեղքը գեղըմն ա լըմ: Արի՛, վախես ոչ,  
դօշդ՝ կուրծքդ դէմ արա, տա՛ի ճեպուի, քե կրա-  
կը գցի, ասա որ եզը քու կովիցն ա ծընուել. ամա

աշխատի մին վախելով չ'երգուես, մ'նէլ՝ երոր  
օրացուցը հաննեմ, չը ծըծաղես. քե լաւ պըհի. գե-  
ղենաս, որ ըսկի մեղք չկայ:

— Այէ, տէր-տէր ջան. դու ինձ ասա, թէ  
մեղք չկայ, հէնց որդըմ ուտեմ, որ երկինքն ու  
գետինքը տեղըհան լեն, ժաժ գան:

Պետին հագիւ համոզուեց, սրտապնդեց ու Տէր-  
Սարգսի հետ գնաց վստահութեամբ Դիւանբէգու  
առաջ կանգնեց:

— Անուեդ թնչ ա. — հարցրեց Դիւանբէգին:

— Աղէն սաղ լի, անըմս, հեռի քու սուրբ  
յարգեցը, Պետի ա:

— Եզը, դրուստն ասա, քուենն ան, թէ սրանցը:

— Պան, աղէն սաղ լի, էտ թնչ ես ասըմ. եզը  
իմ կովիցն ա ծընւել, անց կլի դրանցը:

— Որդըմ կուտես:

— Որդըմ էլ կուտեմ, հլա քարեր կը խտտեմ...

— Աւաբուլ էք, որ հայը երգուի, եզնից դուք  
ձեռը քաշէք. — Պետինի հակառակորդներին կրկին  
անգամ հարցրեց Դիւանբէգին:

— Աւաբուլ ենք, հրաման քե, աղայ. — ասա-  
ցին գողերը:

— Ա՛ քեշիշ, դէ երդըմ տուր:

— Մուլան ղուրանը ձեռքին մնաց կանգնած  
Պետինի աջ կողմը: Տէր-Սարգիսը մորուսը փայլալացեց,  
ձեռը խորը գրպանը տարաւ, հանեց օրացուցը,  
թաշկինակի մէջ փաթթեց, գրեց կանաչ խոտի վրայ:

— Էս թնչ պատիկ աւետարան ա. — մուլէն ծա-  
ծուկ փնթփնթաց իւր մոնթերից մէկի հետ:

— Դրանց աւետարանը ես էլ եմ տեսել, ամա  
դա շատ փոքր ա. — պատասխանեց մոնթը...

Կասկածող մուլէն դարձաւ Տէր-Սարգսին.

— Ա՛ քեշիշ, դա աւետարան ան:

— Հան,

— Ես ձեր աւետարանը մեծ եմ տեսել, ինչի՞  
ա տհենց պատիկացել:

— Ա՛ մուլա, դրուստ ես ասըմ, մեր աւետա-  
րանը մեծ ա, ամա պէտք ա գիտենաս, որ քու տե-  
հածը մարդի աւետարան ա լել, իսկ սա՛ եզան ա-  
ւետարան ա:

— Հան... — պատասխանեց մուլէն:

— Ա՛ դա, մօտ արի, Պետի. — ազգու կերպով  
դարձաւ հային:

— Դրո՛ւստ կաղնի, ձեռք օրացուցի վրայ դիր.

Ասան — էս օրացուցի անըմով որդըմ եմ ուտըմ.  
սրա զօրութիւնն իմ տունը քանդի, իմ որդիքը կո-  
տորի, սա իմ գլխին երկնքիցը կրակ թափի... թէ-  
որ՝ էս եզն իմը լի:

— Ասան ամմէն:

Պետին Ասան ահա սրտիցը հանած, ձեռքը  
դրեց եզան աւետարանի վրայ և սկսեց արագ-արագ  
կրկնել տէր-հօր ասածը:

Թուրքերից մինը տեսնելով հայի եռանդուն  
և խիստ երգուիլը, մօտեցաւ, ձեռքով հրեց նրա  
կրծքին և ասաց.

—Ա՛յ տղայ, ա՛ հայ, բոլ ա բոլ, ի սէր Ալ-  
լահի, մեղք ես, մի եզան հըմար էղղադար պինդ-  
պինդ մի երդուիլ...

Պետին այդ հրաշքով կրկին եզան տէր դար-  
ձաւ: Նա կենդանու պոչից բռնեց ու քշեց դէպի  
Լալի գիւղը:

## Թ Ե Լ Լ Ո Ւ Ն Ա Ր Ս Ը

Ա.

Համզի սարի գլխին, մի հարթ և կանաչ տեղ  
Ղազարի Խաչթառակ գիւղացիք եայլաղ էին դրել:  
Յերեկով տեսարանն զմայլելի և աներկիւղ էր եայ-  
լաղցիների համար. գիշերով մանաւանդ, երբ լու-  
սին չէր լինում, սառն երկիւղի մէջ էր ամեն բան:  
Ղազարի սարերում և անտառներում թուրք գո-  
ղերն ու աւազակներն ազատ շրջում էին...

Ամարային մի խաւար ու գէշ գիշեր եայլաղ-  
ցիները կովուկիթը վերջացրել՝ դառը քնոց էին մը-  
տել և ննջում էին խաղաղ: Բոլոր կրակներն ան-  
թէղուած էին վրաններում, միայն այս և այն փա-  
րախի կիսանթէղ կրակի շեղջի հուրքը լաճախ վեր-  
ցոյելով, մշմեղած, մեղմ և թուլագոյն լուսաւո-  
րում էր օջախի չորս բոլորը, ուր հեռուից հագիւ-  
նկատում էին մի-մի հասարակ քէչայով կամ կար-  
պետով ծածկուած հովիւները և նրանց շուրջը՝ որո-  
ճող հօտը: Օբի վրայ գիշերային խաղաղութիւն էր  
տիրում առժամանակ: Երկինքը մուլլ, սասող բո-  
լորովին չէր նշմարւում: Մոլորակ լուսինը միայն,

սևակն ամպերի տակից յաճախակի, կարծես շփոթուած, դուրս էր նայում, պլէքում, ծկրակում, թոյլ և աղօտ շողալոյս էր գցում երկիրի վրայ, փոքր ինչ տեսանելի էր անում մեծամեծ առարկաները՝ տախտերն ու անտառը և սրագագաթ լեռներն ու խորունկ ձորերը ու անյայտանում, կրրկին երևում, թաղնում և մերթ ստուար ամպերի տակ կորչելով՝ մթութեան խաւարով ծածկում և անհետացնում էր բնութեան գեղեցիկ և ազատաբնակ տեսարանները: Այդպէս լուսինն էր կրրկնակի մոլորուել երկնքի և երկրի զատարկ տարածութեան մէջ, իսկ հեռու հիւսիսում, եայլաղի խաւար հորիզոնի ետև՝ կարմրախառն ամպերի միջից փշրող կայծակների արագաթռիչ լոյսը՝ հուրհրատին տալով, առաջնորդում էր շառաչնաձայն հեղեղ անձրևի ողողող հոսանքին գէպի հարաւ արևմուտք և նրա սառը քամու շօրշօփը, կայծական զօրութիւնից կարծես, եայլաղ էր հասել, ուր սառսուռ կերպով շոյում էր թեթև առարկաներին և լռած բոյսերի տերևներին: Արանների արանքներում փշշալով նիստ տուած՝ քուն էին մտել՝ տաւար, գոմէշ, հորթ ու ձագ և մի քիչ հեռու նրանցից՝ ջուկն ու երամակը փարախներում որոճում, շնչում էին հանդարտ: Հովուական սրինգն ու պրկուն, երգը, խաղն ու սփրը վաղուց էր գաղարել: Օբից մի քիչ հեռու՝ Գիւռ-քարի ականջում, Ծլլանի վտանգաւոր ձորի բերանում թողած էր Խաչթառակ գիւղի երբեմն հարուստ, ինչպէս ասում

են, «դովլաթի տէր» Քամալանց վրանը կէնտ ու առանձնացած հարևաններից, որտեղ գիշերուայ այդ պահուն մի անանթէղ, և մշմեղած օջախ վառուում-մարում էր շարունակ:

Առակայծող կրակի լոյսի դիմաց՝ վրանի շէմքում ձողից բռնած, արձանացած կանգնել էր մի ջահիլ հարսը, որի գեղեցիկ կազմուածքն ու տեսքը, նոյն իսկ կայծակի րոպէական լոյսի միջոցին, գմայլեցնում էր տեսնողին: Նա իւր արձանացած դրութեան մէջ կարծես դիւթական ազդեցութիւնից կախարդուել էր: Այդ արթուն կինը, Ղազախի Լաւլի գիւղացի Տէր-Սարգիս քահանայի քոյր Թէլլուն էր և Խաչթառակ գիւղի Քամալանց օջախի հարըստութիւնը պահպանող, ղեկավարող և գիշերային այդ պահուն արթուն հսկողն էր եայլաղում: Գեղջկուհին յենուած վրանի սիւնի վրայ, սառնհայեացքով, շունչն իրեն քաշած, ականջ էր դրել մի բանի: Նրա հայեացքը տեսնողի վրայ սառը ձիւն էր մաղում. վախ, սարսափ էր տիրում թուլասիրտ ոգիներին, բայց գեղջկուհին յայտնի չէ՝ վախենում էր մի բանից, թէ՛ արհամարհում էր նրան, որովհետև երբեմն շշնջում և երբեմն արհամարհանք էր արտայայտում նրա աներկիւղ ու գեղեցիկ դէմքը: Այն միջոցին, խոր ձորի կողմը, հօտապահ հաւատարիմ շները չարագուշակ կէնտահայներով, գայլանման ոռնոցներով ջահիլ հարսի սիրտը հետզհետէ մի ներքին տանջող յուզմունքի ու կռուի մէջ էին դնում: Թէլլուն վաղուց արդէն սարսափահար ե-

րազներ էր տեսել, բայց ահաւոր մտածման մէջ մոռացել էր զարթեցնել իւր ամուսնուն և ու վտանգը, երկիւղը կրկնապատկուում, մօտենում էր...

Մի խումբ շներ էլ յանկարծ ձորը թափուեցին և աղեկտուր, խոնուած ձայներով հաջոց սկսեցին, այնպէս, որ կարծես նրանք ուզում էին կոտորուել, բայց վտանգը ձորից դուրս չը թողնել: Մարդու վրայ աննկարագրելի սարսափ էր ազդում, մանաւանդ, երբ շները ձայները մեղմացնում և երբեմն յանկարծակի կտրում, ապա կէնտահաջ տալով, ձորին մօտենալով, անյայտ անձերից հարուած էին ստանում, կլանչում, ետ փախչում ու ծմրում... Եները ձայնի այդ տեսակ արտայայտութիւններով կարծես ուզում էին իրենց քնած տիրոջն արթնացնել, յայտնել մօտեցող վտանգը:

— Ը, սրանք գողեր են. — շնչաց գեղջիւհին և կամաց-կամաց դարձաւ, ձեռքով շարժեց քնած ամուսնուն և կասկածախառն ձայնով սկսեց զարթեցնել նրան:

— Մարդիրոս, Մարդիրոս, էհէյ, սօ մանրմ չէս, էհէյ...

— Ը. — անկողնի մէջ շուռ ու մուռ գալով պատասխանեց Մարտիրոսը, բայց, կարծես երազի մէջ լինէր:

Թէլլուն կրկին ականջ դրեց դէպի ձորի կողմը. շները հաջոցը շարունակում էին ահուելի ձայներով:

— Եհէյ, սօ, վի՛ի, ա, մանրմ չէս...

— Հը... վայի՛է. — ասաց նա և կրկին խորմփացրեց:

Թէլլուն մարդու ծուլութեան մասին սաստիկ նեղանում էր. նրա բնաւորութիւնն անսահման կերպով կրակուող, բորբոքուող էր, այն ինչ Մարտիրոսինը դանդաղ և թույլ: Կինը սաստիկ նեղանում էր, որ նա միայն «հը» է անում ու քնում:

— Մարդիրոս, Մարդիրոս... էհէյ... վի՛ի, ձեզ մտաղ եմ, էս տունը չքանդուածին որ մորթես էլ, մանալ չի: Ա, մի օյեաղացիր է: Վի՛ի... Մարդիրոս... — բարկացկոտութեամբ ձայնը զօրեղացրեց Թէլլուն:

— Հը, հը. թնչ ա. — կնոջ տարօրինակ և խորհրդաւոր ձայնից երկիւղած, սարսափահար վեր թռաւ քնաթաթախ Մարտիրոսը և շփոթուեց: Նրա աչքերը մնացին մի քիչ յառած. նա կարծում էր, թէ երազ է այն, բայց շների մօտալուտ ձայնն իմանալով, սթափուեց, միայն ոչինչ չխօսեց:

— Ա. քու տունը չքանդուի, բա տղամարդ ես, ապրանքի, դովաթի տէր ես, տհենց խորը ոնց ես քնել, բալի թէ ես-էլ եմ քե պէս քնած, չոլի, եաբանի տեղ ա. վայ թէ բէյլափիլ (յանկարծ) վրայ տուին փախցրին ինձ, թնչ կասեն խալիւր. պէտք ա ասեն թէ՛ կնիկը Մարդիրոսի ծոցիցը հանել են. բա նամուսը՞դ: Վայ իմ գլխին, վայ. ես էլ գշերը հանդարդ պէտք ա քնեմ, թէ էս ա կողքիս տղամարդ կայ էլի. — Թէլլուն կոկորդային ձայնով շարունակում էր նախատել մարդուն, բայց ուշքը

ձորի կողմն էր միշտ: Մարտիրոսն արգարացի գրտնելով կնոջ բողոքն այն դէպքում, պատասխանեց նրան իւր բնաւորութեան յատուկ ձայնով ու եղանակով.

— Թէլլու ջան, դու գիշըմ չես, որ ես օյեանդ եմ լըմ (արթուն եմ). էս դոնըմ տկարութիւնս քնով ա գցել... — ուզում էր արդարանալ:

— Մի զո՛րս էլ որ թրատած լեն, էս թաւուր վախտը կը կենդանանամ... ախ, թնչ անեմ, որ գլխինս փափախ չի, լսչակ ա. թնչ անեմ, որ Աստօծ ինձ տղամարդ չի ստեղծել... ճքճքորիկ գալով ասաց նեղսիրտ գեղջկուհին և կրկին գնաց վըրանի շէմքը:

— Ա', մի սոսա տենանք, թնչ ա լել քե. բալի բան ես բրաւուրդ արել:

— Ի՞նչ ասեմ, թնչ ասեմ, որ հլա քնըկոլու, փշեշիկ նստած աչքերդ հղաղըմ ես ըեխի պէս: Սիրտս պատուըմ ա. վե՛ կաց, ըրիտվդ ջուր տու, լե՞ղ արա, շորերդ կեց, ինձ ջին-ջին մի անիլ...

— Ա', թնչ կայ, սոսա տենամ էլի. — վախկոտ ձայնով ասաց Մարտիրոսը, թէև արդէն գլխի էր ընկել: Թէլլուն տեսնելով որ մարդուն քունը թըմբեցրել է և նա միայն անկողնի մէջ նստած տեղից է պատասխանում, առաւ ջուրն և իւր ձեռով նրա երեսին ձօփ տուեց: Մարտիրոսը շորերը հագաւ:

— Պրծա՛ր:

— Հա՛ն:

— Ծները կալանչ-կալանչ գալով Ծլանի ձորի վրայ գլխվերեցին, ձորի բերանը պուկըմ են, մի ձէն տու տենանք թնչ կայ, թնչ լան. հաջոցը խելի վախտ ա կտրել ա, հըւատա ըռինին գատ գըցեցին. ոնցօր ըրե՛րմ ա՛ գո՞ղեր են, ամա անօրէնին խաբնութենով բէյղափիլ վրայ են տալու դագի վրայ: Լե՞ղ արա. ըրիւղանց մի դուս գալ, չուխէդ ուսդ գցի. — ասաց Թէլլուն աւելի կամաց ձայնով քան առաջ, որովհետև այժմ աւելի երկիւղալի էր դրութիւնը: Ծները հեռացել ձայները կը տրել էին, բայց ետ չէին եկել դեռ: Մարտիրոսն ահից պապանձուած, տեղից մի քայլ առաջ գալով, ձորի կողմում մի շուոց լսեց և մնաց սառած: Նա այնքան վտանգից չէր վախենում, որքան իր կնոջ վստահութիւնից և անձը տուր չտալու կրակոտ բնաւորութիւնից: Նա վախենում էր, որ կինն ընդդիմանայ աւազակներին, իսկ նրանք հակառակ դէպքում մտնեն վրանը և քնած բազմաթիւ մանուկներին կոտորեն: Մարտիրոսի սիրան արդէն թուլացել էր և փոխանակ իրեն զօրացնելու, իրեն անձին խաբելու, հազիւ լսելի ձայնով սկըսեց անահի զաւակ գեղջկուհուն մեղմացնել, խաբել...

— Թէլլու, ջահիլ ես, սիրտդ ա՛հ ա ընկել, շներն իրանց շնութիւնն անըմ են, հաջում են, վախիլ մի, ոնչիչ չկայ. էրազով ընկած վեր ես կացել շների ձէնն իմացել, հէնց գիշըմ ես թէ ձորերն աւազակներով լցուել են:

— Այ՛ մարդ, բա շներն ինչք՞ վրայ են տհենց թիւնդ հաջրմ:

— Կուզը (ոզնի), գազան, զատ գտած կընեն:

— Վե՛ր... ա՛, ես խոտ ըրածող չեմ, կնիկ եմ... Հէնց այդ խօսքն ասելուն պէս շները խմբով աւելի մօտիկից մի լալօշ սկսեցին:

— Ե՛՛հէյ, լաւ անկաճ դի, տես կզնահաջ ա՛, տես ջահիլ եմ, էր՛ագով եմ ընկել:

— Թէլլու, կամաց խօսայ. — շուտ-շուտ կրկնում էր Մարտիրոսն ու կամաց, շունչն իրեն քաշած ականջ դնում...

Մարտիրոսը քսան տարուայ նախրջի ու հովու-թիւն արած մարդ էր, նա շատ լաւ ճանաչում էր շների մարդու վրայ հաջելու եղանակն էլ, գազանի վրայ հաջելունն էլ, բայց ուզում էր կնոջ անհանգստութիւնը մեղմացնել:

— Թէլլու, գազանահաջ ա. — բայց դրանով ընդհակառակը նրան աւելի էր բորբոքում:

— Այ՛ մարդ, թէ գազանահաջ ա, բա էլ խի՞ ես ձէնդ փորդ գցած խօսըմ... ա՛ մարդ, դու արի ինձ ըբիս տեղ մի դնիլ, էրկու սըհաթ ա անկաճ եմ դրել, ձորըմը մի բան կայ, ձորըմը մարդիկ դեն լիլ. նրանք ըրե՛րմ ա ծովիանը շիս տալիս ինձ բըւուրդ արին դագի շէմքումը, ըրե՛րմ ա խորհուրդ ես անըմ, թէ ո՛նց, ո՞ր ղօլից վրայտան մեզ...

Վրանների միւս կողմը մի խումբ շներ էլ սկսեցին աղեկտուր հաջել. այնտեղից մի ձիաւոր

ձին ետ թեքեց և շների առաջ թմփթըմփալէ փախցրեց դէպի ձորը:

— Տեհա՛ր. դա եկաւ աչքն ածեց (դիտեց), թէ ո՞ր ղօլից վրատան, որ լաւ լի:

Ձորի բերանում մի շուն շատ բարձր կլանչեց, և, ինչպէս լսուեց, ընկաւ գետին:

— Վա՛շ, տուին, սպանեցին շանս, դաչաղնի են, — ասաց Մարտիրոսը և վերջապէս կնոջ հետ համաձայնեց:

— Գէ հմի դո՛ւս արի, ձէն տու՛ չոբաններին կանչի, շներին հը՛սհըս արա, որ սիրտ առնեն, սուս մի՛ կենալ, սիրտս ճաքեց քու անգեալութենից:

— Թէլլու ջան, ձէնդ քե՛ քաշի, բցրացնիլ մի՛, կամաց...

— Ել խրատի վախտ չի, ձորըմը ետղի կայ, ապրանքնիս քշիլ դեն, տղամարդ ես՝ նամուս, ղայրաթ, սիրտ ունեցի. կնիկ մի՛ դառնալ...

Մարտիրոսի ոտները գող էր ընկել երկիւղից. նա լաւ գիտէր, որ եկողները, եթէ աւագակներ լինեն, առանց արիւնի յետ չեն գնալու. գիտէր, որ Թէլլուն նրանց դէմ համարձակ կուուի է դուրս գալու: Ուստի չէր ուզում վրանից դուրս գալ: Նա աշխատում էր կնոջը մի կերպ մեղմացնել, որ վրանից դուրս չգնայ, բայց այդ չեղաւ և մարդը խղճալի ասաց.

— Հա՛, ո՛նց անեմ Թէլլու, շատ էլ տղամարդ եմ. տրաքիչ որ չունեմ. առանց եարաղ-ասպաբի թնչ անեմ էս կէս գիշերին, դու ուզըմ ես ինձ

սպանել տաս, ես գիշամ.—ասաց Մարտիրոսն և վախկոտութեամբ հազիւ գլուխը վրանի շեմքից հանեց ու երկու անգամ բարձրաձայն աղաղակեց, սուլեց թէ չէ՝ օրի հարիւրաւոր շները բոլորը միասին լալօշ արին:

—Սո՛ւս, անգաճ դի:

Մարդ ու կին շունչներն իրենց քաշած լուցին:

—Թէլլու, Ալաբաշի ձէնը ճնանչեցի, իստակ ղաչաղնի դեն լիլ. կրակը հանգեցնո՛ւ, լուսին-հետ թըւանքով կտան.—շնչախօս ձայնով ասաց նա և ԼԵԼԸՔալով չոքեց դագի շեմքում:

—Վ.խցա՛ր, ա՛ թուլասիրտ:

—Թէլլու, վախն ա՛մօթ չի էս կէս դշերին...

—Վ.այ, վ.այ. ա՛ տնաքանդ ոչ, տղամարդի սիրտ չես ունեցել. ափսո՛ւս փափախ, որ գլխիդ ա. էս լնչակը պէտքա քո՛ւ գլխին լի, ամա ի՛նչ աւնեմ, որ Աստօճ ինձ էգ ա ստեղծել. . . վի՛, ա՛ հայ, սիրտդ խի՛ ես ահ գցել, մնացել մոլորուած, Աստօճ հեռու տանի, որ ղաչաղնի լեն, հու աչքս բաց դովլաթս նրանց չեմ տալու... մարդի դովլաթ որ ձեռիցը խլեն, ինքը սող մերմա ի՛նչ անի...

— Բու հրօղպէր Խաչաւորն էլ չէր տալի կովը, տեհար ինչ արի՛ն. գերեզմանն ի՛նչ տարաւ, լաւն էն ա, որ տանիցը դո՛ւս չըգաս...

Հիմա էլ այդ կերպ սկսեց համոզել կնոջը, որ թշնամու յարձակուած ժամանակ վրանից դուրս չգայ, բայց նա պատասխանեց.

—Խաչաւորը գերեզմանը զատ չը տարաւ, ամա ըշխարիս մէջ մի անըմ թողեց.—ասաց Թէլլուն և սրտոտ ու հպարտութեամբ դուրս եկաւ վրանից:

—Թէլլու, կաց, կաց, դո՛ւս մի լիլ...: Կինը ականջ չը դնելով նրան, հեռացաւ դէպի ձորի կողմը, մթութեան մէջ ականջ դրեց և մի քանի անգամ շներին շվացրեց: Շներից մինը, երեխնկատելով տիրոջը, ձորի կողմից յանկարծ կլանչեց և արագաթռիչ ոստիւնով ցատկեց դէպի նա, ծըմբալով ոտներովն ու փեշերովը փաթաթուեց և կրկին կլանչեց, ընկաւ մութ ձորը:

Հաւատարիմ կենդանին իւր ձայնի զանազան տեսակ արտայայտութիւններով, շարժմունքներով կարծես հասկացնում էր Թէլլուին, թէ պատրաստուիր կուռելու թշնամու դէմ, որ շուտով յարձակուելու է վրադ: Թէլլու հարսն էլի արձանացած ականջ էր դնում, շունը կրկին հեծկտալով, ծմբալով դիպաւ նրան: Թէլլուի ականջին հասնող ձայններն իրար ասում էին.

—Ի՞նչ անենք, ետ դառնանք:

—Ի՞նչպէս ետ դառնանք, բա որ ետևներիցն հասնեն:

—Բա ի՛նչպէս անենք:

—Մտնենք օրէն:

—Ետո՛յ:

—Զին դո՛ւս քաշենք էլի, աս ցոցցիպա՛Մ

—Վ.այ թէ ճնանչեն մե՛զ: մյոթի մ զգմնիպց յայտնի քննի ա քնքեկիպք բնամալ մա10յաճ

— Է՛հ, էս մթնըմն աչքնին աղաքները տենըմ  
ս, ոնց դեն ճնանչիլ:

— Տղէք, ես ասըմ եմ ձին Մարդիրոսից բա-  
րեկամութենով ուզենք, թնչ կասէք:

— Իրա վախտն անց կացաւ, էտ վաղ գինք  
անիլ, իրեք սհաթ կլի, մեզ քրաւուրդ են արել,  
խաթրով ուզենք թէ բարեկամութենով, կնիկը աղ-  
պօրը՝ «Իլան» տէր Սարգսին Խաբար ա տալու՝ թէ  
մենք գող ենք եկել նրանց վրայ...

— Ի՞նչ կլի, կլի, վրատանք, մութն ա, մեզ  
տենալ, ճնանչիլ չեն:

— Դէ որ տհենց ա, խօսաք ոչ, ձէններս կը  
ճնանչեն. դոստ մարդիկ են...

Գեղջկուհին զարձաւ իր ամուսնուն և կամաց  
ասաց.

— Հմի մացար, որ հաստատ զաչաղնին են, ամա  
մեզ ճնանչ են, մըլորուել են, չեն գիշըմ թնչ  
անեն: Զէններս լսել՝ դուրիշ են տուել (կանգ են  
առել), որ քնենք թէ չէ՝ բէյզափիլ վրատան.  
ըրևըմ ա, մնին զրկել են օբի վրայ ծկրակիլու, որ  
շները ճօթուուել են (բաժանուել են եկու խմբի):  
Մուրին ու Չովուրը Թուլենոնց հետ Գիւռ-Քարիցը  
հեռանըմ չեն... Դու վագ տու չոբաններին իմաց  
արա, մի թւանք ճարի, ես համ աչքով պըհեմ ձո-  
րը, համ օբաւորին զարթնացնեմ, դէ հա, լեղ արա:

Մարտիրոսը սարսափահար վագեց դէպի փա-  
րախները և իսկոյն ետ դարձաւ, իսկ Թէլլուն իր  
հարևան կանանց զարթեցրեց ու սկսեց խրախու-

սել, քաջալերել նրանց, որ կուռի Ժամանակ չը  
փախչեն:

— Ա՛ կնանիք, մեզ վրայ զաչաղնի են գայու,  
չը լեմ չիմանամ, թէ փախչէք՝ էլ ձեռիցս պըծնիլ  
չէք. դժարն էն ա, որ մեզ հասնեն, կուռը որ  
սկսի, ես նրանցից վախողը չեմ, ձեռքներդ մի մի  
դըգնակ առէք՝ քամակս պըհեցէք, վախէք ոչ...

— Վայ, վայ-վայ, Թէլլու ջան, մենք թուր-  
քերի զաքին կաղնոդ ենք որ..., — ասացին լքեալ  
ոգիները:

— Ա՛ քաւթառ կնանիք, թանրսպանն ուտե-  
լիս օխտը մատերնիդ էլ բերաննիդ էք կոխըմ. ձեզ  
թնչ դեն անիլ, ձեզ հըմար հու չեն գալի նրանք.  
ասլրանք տանիլու են գալի...

Օբաւորները միանուագ երագահար վեր կա-  
ցան անկողիններից. ահ, երկիւղ, տատամսութիւն,  
լքեալ յուսահատութիւնը տիրեց ամենին: Շատերը  
մերկ, բոբիկ, շապկանց, երեխանց կուռը բռնած,  
ծնկները թուլացած, սկսեցին փախուստ տալ դէպի  
փոս ու եառանգները, միւսներն անասունների ա-  
րանքներում թագնուեցան...: Աննկարագրելի եր-  
կիւղը ու լքութիւնն աւելանում էր մանաւանդ,  
երբ շները ոռնում ու թաթաջհար\*) էին գալիս:

\*) Ծեծուելով և ոտներով գետինը ճանկատելով  
հաջում էին:

Բ.

Եկողները Ղազախի գեօվջալլուեցի ոտից ցրգլուէս ասիական զէնքերով զինուած աւազակներ էին, որոնց ընկերներէց մինը սիրահարուելով մի հարուստ և գող ազալարի աղջկայ վրայ, նրա ծնողներէ կամքին հակառակ, աւազակ ընկերներէ օգնութեամբ աղջկանը ջրէ ճանապարհից փախցրել էր: Աղջկայ հայր աւազակապետ ազալարը՝ նոյնպէս զինելով իւր կտրիճ աւազակախումբը, փախցնողներէ ետեից էր ձգել: Նրանք, կատաղաբար փրնառում էին փախցնողներին և վաճ նրանց, եթէ հասնէին, սրախողխող պիտի անէին: Առևանգողները հալածողներէց ազատուելու համար, այս և այն օրում միքանի մարդկանց վիզ հատելով, լաւ լաւ ձիեր էին դուրս քաշել. մի ձի էր պակաս միայն, այն էլ Խաչթառակ գիւղի Քամալանց իլխից՝ ջոկից պիտի տանէին:

Փախստականները Քամալանց ձին տանելուց յետոյ՝ մի նոր թշնամի էլ էին ստեղծում իրենց համար: Վերջին հալածողը Թէլլու հարսի եղբայր քաջ տէր-Սարգիսն էր, որն այն ժամանակ իւր շրջակայ գիւղերի հայ ժողովրդի պաշտպանն էր ամենավտանգաւոր տեղերում անգամ: Նա ունէր և՛ Ֆիզիքական և՛ խօսքի ոյժ. ամեն մի աւազակապետ ո՛չ միայն ճանաչում էր «Իլանին» և դողում նրա անունից, այլ և՛ ճանաչում և՛ յարգում էր նրան:

Այդպէս և այն ձի դուրս քաշելու մտադրուած աւազակները, որոնք յայտնի կերպով յարձակում գործել չէին համարձակում, աշխատում էին ծպտի կերպով առանց ճանաչուելու և արիւնհեղութեան, հասնել մտադրուած նպատակին: Բայց գիշերուայ արթուն հսկող գեղջիուհի Թէլլուն չէր քնում: Նա իւր կամ մարդու մահը ոչինչ էր համարում, միայն թէ աւազակներին տէր-Սարգսի ձեռքը մատնէր՝ պատժել տալ կարողանար: Աւազակներն էլ էին երկիւղի մէջ, երկար սպասել չէին կարող, հալածողները կը հասնէին: Վերջապէս նրանք համոզուեցին, որ թէ այսպէս, թէ այնպէս, վերջն անկասկած իրենց մահ, տանջանք և կորուստ պիտի լինի փնտռող աւազակապետ ազալարի և կամ տէր-Սարգսի կողմից, վճռեցին հետևանքի մասին չմտածել, Ալլահի կամքին թողնել այն և յարձակուել անշուշտ:

Գ.

Հարաւային քամին դեռ փչում էր:

Ամպերը նոսրացել և երամ-երամ ցրուել էին երկնքի ճակատին: Լուսինը եայլաղի ընդարձակ և ամբողջ հորիզոնափակ ամպերի տակ կատարել էր իւր գիշերային շրջանը և Համդի սարի հորիզոնի արևմտեան սահմանի վրայ պռունդ արած՝ թոյլ, շեղաշող լուսով, հազիւ թէ կերպարանափոխել էր խաւար տեսարանը, այնպէս, որ վրանների, անա-

սուճների, շրջապատող անտառների և ձորերի ըստուկներնորը նկատելի էր դարձել:

— Ե՛կան, եկան... — լսուեց Թէլլոււի զօրեղ ձայնը:

Յանկարծահաս ձիերի ոտների թմփթմփոցից հօտն ու երամակը, նախիրն ու ջուկը «գը՛ռռ» արին, խրտնեցին, ոտի տակ տուէին թէ իրար և թէ թագնուած կանանց ու երեխանց...

— Վայ, վայ...

— Ո՛ւ՛՛՛՛՛՛...

— Վայ մեռայ, վայ... — ահաբեկ ձայներն րուպէպպէս իրար խառնուեցին. բայց երբ աւազակների տսիական հրացանները մթուճեան մէջ հուրհրատին տալով ճայթեցին մէկը միւսի քամակից, թուլասիրտները լքացան և բոլորը ձայները միանգամից կտրեցին. աւազակները շներին թրատելով շրջապատեցին Քամալանց Ղալին\*), ուր գտնուում էին Քամալանց ձիերը: Թէլլոււի ու Մարտիրոսի ձայնն էր լսուում միայն, մնացածներից ոչոք չկար: Երկիւղն այնքան էր ազդել փախչողների վրայ, որ նրանք խրտնած հարիւրաւոր անասունների ոտների տակ տրօրուէլուց, փոսի, ձորի մէջ կամ քար ու փետով ընկնելիս, ամենևին ձայն չէին հանում:

\*) Ղալը գերաններով ու ձողերով շրջապատած մի տեղ է: Ղալա կամ գալա թուրքերէն խօսք է, որ բերդ կնշանակէ, իսկ մեղանում ղալ կամ աղալ սահմանափակած փարախ է կենդանիների համար:

ճիշտ այն դրուճեան մէջ էին խեղճերը, ինչ դրուճեան մէջ լինում են թխսի ձագերը՝ բազէն կամ գէօրան գլխներին պտտուելու ժամանակ. նրանցից ամեն մէկը քարի, փայտի կամ թմբի ու ճուճի ետև էր մտել, որպէս զի պտտապարուի...: Հրացանների ճայթիւնից շները հեծկտում, կալանչկալանչ էին գալիս. ոչ ոք օգնութեան հասնել չէր կարողանում Թէլլոււին, որն իւր հաւատարիմ շների հետ միասին պիտի մարտնչէր վտանգի հետ: Թէլլոււն յոյսը միայն իւր սրտի ու ոյժի վրայ էր դրել. մարդը տկար, բոպէն նեղ էր և վտանգն ահեղ ու տաքնապալի...:

— Ե՛՛հ, էլ ի՛նչ ժամանակ կորցնեմ. — ասաց նա, առիւծի պէս նետուեց դէպի վրանը, քանդեց խրնոցու չաթմաները, մինը տուեց մարդուն, միւսն ինքն առնելով՝ կայծակի նման խիզախեց դէպի աւազակները՝ գէնքի դէմ փայտերով կռուելու: Թէլլոււն միևնոյն ժամանակ քաջալերում էր իւր ամուսնուն.

— Մարդիրոս, աղուէսները փախան. — ասում էր նա ականարկելով վախկոտ հարևաններին. — Մենք ենք մեր յոյսը, կաղնի, մեռի, փախչես ո՛չ, զո՛չաղ կաց, աշխատի մէջքիցս չհեռանալ. էս շները թլանքնին դարգակեցին, էլ լցնելու ժամանակ չեմ տալու, քե տո՛ւր չտաս, դրգանակդ քանի ջան ունես պտտի...: որ թիքա-թիքա կտրտեն էլ՝ փախչես ո՛չ. գիտենաս, որ թուրքերը կը ծըծադեն՝ կասեն, թէ «Հայը կնիկը ետղու բերանին թո-

դեց ու փախաւ: Նամուսդ էս շներին չտաս, աշխատի ճնանչել, նշան դնել վրներին (վիրաւորել):

Այ շուն, մնին ճնանչեցի, ազուհացներս անքերը կալած Շահնազարն ա: Այ շուն, դու տէր Սարգսի անըմը մտիցդ գցել էս. — բարկութեամբ լցուած նա ասաց աւազակներից մէկին և բարձրաձայն կանչեց փախչողներին:

— Միտներդ պահեցէք, մեզ որ սպանեն, տէր Սրգսին ասեցէք, որ աւազակներից մինը Շահնազարն էր... Մարդիրոս, դէ, հմիկանց եդն էլ ասես ոչ, թէ սրանք մեզ սպանիլ դեն ու փախչիլ. տէր Սրգսը հաշիւ կուզի Շահնազարից. էս շները օձի ծակըմն էլ որ լեն՝ գտնիլու ա նա, դո՛չաղ կագ, մէջքս պըհի...

Այդպէս քաջալերում էր գեղջիւհուհին իւր ամուսնուն և սպառնալիք տալով թշնամիներին, իւր ուժեղ ձեռներով խնոցու չաթմաները պտտում շփոթեցնում էր նրանց:

— Այ Սարգիրոս, կնիկդ ջահիլ ա, քե սպանիլ կտայ. ասա սուս կենսոյ, մեզ մի ձի ա հարկաւոր, ուրիշ բանի ձեռք չենք տալ. — ասաց ձիաւորներից մի ծանօթ ձայն թուրքերէն լեզուով:

— Ձեզ պէս շներին, անաղուհաց շներին, ես ձի չեմ տալ. — վստահութեամբ թուրքերին իրենց լեզուով պատասխանեց Թէլլուն:

Լոյսը բացուելու վրայ էր. աւազակները տեսնելով, որ ճանաչուեցին և թէ իրենց նպատակին հասնեն-չհասնեն, միևնոյն է, առանց պատփի չեն

ազատուելու Սարգիս քահանայից, յանկարծ երկու ամուսինների արանքը կտրեցին, միմեանցից բաժանեցին: Մարտիրոսը մնաց զալի դրանը՝ գլուխը չորս հսկայ աւազակների թրերի տակ, որոնք ուզում էին հատել, եթէ փոքր ինչ ընդդիմանար, իսկ հինգերորդը Թէլլուի առաջը դատարկ հրացանով փակել էր:

— Եթէ ձայն հանես, զիւլլախորով կանեմ. — սուտ տեղից սպառնաց աւազակը:

— Այ անաղուհաց, ան ձեռիս հաց ու կերակուրն աչքերդ ունի (բռնի), թուանքով ես շնորհակալութիւն անըմ. ինձ սպանելուց ետն էլ պէտք ա ասես, թէ ղոչաղութիւն եմ արել՝ կնիկ եմ սպանել. — Թէլլու հարսը արհամարհանքով նսխատեց ծանօթ աւազակին և արագութեամբ դարձաւ Մարտիրոսին.

— Այ, էս անաղուհացն առաջս կտրել ա, ամա էս ա վեր եմ գցըմ ու քե հասնեմ. զալի դուռը պըհի, բաց չանես. թրերից չը վախես, ղարաղորխու են տալի քե, նամուսդ չտաս... — ասաց ու նորից դարձաւ աւազակին.

— Աղաքս կտրիլ մի, թուանքդ քե քաշի, գըլխինս լնչակ ա, անօթ ունեցիր...

Թուրքն ականջ չդրեց, «գոյմանամ» — չեմ թողնիլ. — սպառ ասաց:

Աւազակներն ամեն կերպ աշխատում էին վախեցնել. նրանք սրերը հանած սպառնում էին շարունակ: Նրանցից մինը մի քանի անգամ կրկնեց հետևեալ խօսքերը.

—Այ՛ Մարգրոս, կնիկարմատի թար ու թոհ-  
մաթին անգաճ մի դնիլ, դուռը բաց արա:

Այդ խօսքերը Թէլլուն ականջ գրգռեցին:

—Բաց չանես.— ուժգին ծղրտաց համբերու-  
թիւնը հատած գեղջկուհին և շարժուեց դէպի իւր  
այրը: Թուրքը դատարկ հրացանը ետ քաշեց և  
հէնց ուզում էր պատեանից դուրս հանել իւր  
պարսկական կէռտիկ թուրը, որ կտրի կնոջ բազու-  
կը, բայց Թէլլուն ձեռին թքեց, պտտեց ահագին  
չաթման և ժամանակ չտալով նրան՝ մին շեպեց  
թուրքի սուրընկալ թեւին, երկրորդ անգամ ձիու  
կողախառը՝ ազգրի մօտ՝ փորի թոյլ տեղին թէ չէ,  
ձին խրխնջաց, գետնովը դիպաւ՝ տիրոջն տակովն  
արաւ, որի թուրը ճքաց, կտորուեց կիսից և պա-  
տեանի հետ միասին խրուեց գետնի մէջ: Թէլլուն  
ընկածին այլ ևս չհարուածեց՝ սխալ գործեց. նա  
անհամբեր թուաւ դէպի Մարտիրոսը, որ օգնէ նը-  
րան, սակայն ուշ էր, գլորուող թուրքի հետ նա  
ևս ընկել էր. թրերի մի քանի հարուածներից գը-  
լուխը ճեղքուած՝ փռուած էր գետնին և առիւնն  
առատ հոսում, բլբլբլում էր նրա վերքերից...:  
Աւազակները դալի դուռը քանդելով, ձիերի ջոկն ա-  
ռաջ արին, քշեցին դէպի քարափը, իսկ Թէլլուն շփո-  
թուել էր, ուզում էր հետեւել նրանց, որ տեսնէ,  
թէ ո՞ր կողմն են տանում, որպէս զի միւս օրը հետ-  
խազ անել տայ, բայց յանկարծ, տապալուած թուր-  
քըն ուշքի գալով, անակնկալ կերպով դատարկ հրա-  
ցանով ուժգին հարուածեց, նրա աջ բազուկը թը-

լացրեց, մտրակեց ձիուն և հասաւ ընկերներին, թրի  
կտորուածքը Թէլլուն յաղթութեան նշան թող-  
նելով: Թէլլուն ընկաւ գետին, աչքերը անուշքի  
պէս յառեց նրանց ետեւից մինչև որ անյայտացան  
մթութեան մէջ: Գեղջկուհին ուշքի գալով, տեսաւ,  
որ Մարտիրոսն արեան ծովի մէջ պտոյտ է գալիս  
և գետնից խոտեր պոճոկում:

—Այ՛. վշտահար աղաղակեց նա, դրկեց ամուս-  
նուն, տարաւ վրանում դարման անելու, բայց ի  
զո՛ւր, կենդանացնելու յոյս չր կար:

ՊԵ.

Լոյսը բացուեցաւ. օրի տեսարանը տխուր էր:  
Առաւօտեան արեգակը խաւար հորիզոնի սահմա-  
նագծի վրայ ականջի ձևով պոռնոգ էր արել՝  
առանց շող ու ճառագայթի, մուգ արեան գոյնով:  
Արևելեան զովախառն քամին մեղմօրէն շոյում էր  
թեթեւասուն տերևներն ու խոտերը. երկինքը կըր-  
կին մռայլոտել, լուսինը վաղուց գնացել թագ էր  
կացել Գեօլբուլաղ սարի ետևում: Թէլլու հարսը  
վշտահար, դալկացած դէմքով նստած էր արիւն-  
քամ եղած մահամերձ վերաւորի փեղքուած գլխի  
մօտ. նա արիւն արտասուք էր կաթկաթեցնում  
թուխ-թուխ աչքերից. միւս սարեցի կանայք նոյն-  
պէս շարուած Մարտիրոսի շնչասպառ մարմնի  
շուրջը, միմեանց ձայնակցելով՝ պարսկական մեղմ  
և տխուր եղանակով ողբում, կոծում էին և պո-

կոտուժ մագնները: Վերաւորի գլխից և մարմնի մի-  
քանի տեղերից հոսող տրիւնը դադարել էր արգէն,  
և նա ծանր տրըփում, հեւռում էր շարունակ,  
որով աւելի ևս կրակ էր զցում սգուորնների ջիգարն  
ու թոքը, գուշակելով՝ որ Թէլլուն շուտով այրիա-  
նալու էր ազրայիլ հասակում: Գոյժը կայծական  
արագութեամբ հասաւ Խաչթառակ գիւղը՝ Մարտի-  
րոսի եղբայրներին և Լալի գիւղը՝ տէր-Սարգսին.  
նրանք գիւղացիների հետ միասին վշտաւէտ սարը  
բարձրացան: Ամբողջ օրէն վայ էր տալիս: Վայոցի  
ձայներն աւելի շատացան եկողների կողմից. նրանք  
արգէն անշնչացած դիակը նշափայտի\*) վրայ կա-  
պեցին և սգուորնների բազմութեան հետ գիւղն  
իջեցրին անտառի միջով, ուր լացի ձայները ներ-  
դաշնակ արձագանքներով կարծես ամբողջ անտա-  
ռը սգի մէջ էին դրել...

Գիւղն իջեցնելուն պէս՝ տէր-Սարգսի կարգադ-  
րութեամբ, անմիջապէս ամփոփեցին սպանուածի  
մարմինը՝ Թէլլուն անցքը նկարագրեց տէր-Սարգսին  
և ասաց.

— Ս. դպէր ջան, ինձ էն վախտը մխիթարած  
կլնես, եբոր աւազակներին ձեռքները ետևները

\*) Երկու հասարակ ձողեր են, որոնք հին ժամա-  
նակ ննջեցեալին հանգստարան տանելու համար էին  
ծառայում: Աւանդութիւնն ասում է, որ դրանք Արա-  
մի ժամանակից են մնացած. այժմ թուրքերն են գոր-  
ծածում:

կապոտած շհանց կտաս ինձ: Մինը Շահնազարն  
էր, մինը Մհամազը:

- Մէկէլներին ճնաչեցիր ո՛չ:
- ձնաչեցի, նրանք էլ Ղազինի տղեքն ին...
- Լ. աւ. — ասաց քահանան, զէնքերը կապեց  
ու հեծաւ իւր ձին...

Ե.

Տէր Սարգիսը Լալի գիւղացի մի քաջ տղամարդ  
էր և կտրիճ քահանայ\*): Նա կարճ հասակով, լիքը  
բնով, լայն կրծքով ու թիկունքով, գոյնը սև, քի-  
թը մեծ և բուլթ, աչքերը խոշոր, յօնքերը խիտ  
և մազ ու մորուսը թուխ մազերով էր ծածկուած,  
ձայնն ահարկու էր իր հօրեղբայր Խաչաւորի նման,  
բայց աւելի ազդու և սպառնալի, իսկ դէմքը խո-  
ժոռուած, հայեացքը սոսկալի... Նա որ թնդեց-  
նում էր իւր ձայնը և բարկութեան հայեացք ձգում,  
հարիւրաւոր մարդիկ ահաւոր վիշապի ճիրաննե-  
րի մէջ էին զգում իրենց: Տէր-Սարգիսը իւր փեսի  
մահէն ու թաղումից անմիջապէս յետոյ, միքանի  
ընտրովի քաջ երիտասարդներ զինեց, բուն Ղազա-  
խի և Ղազախ-Շամշազնի ահաւորի և աւազակաբնակ  
անտառներն ընկաւ, որ գտնի իւր քրոջն անբախ-  
տացնող աւազակներին: Կտրիճ քահանան Խաչաւորի

\*) Նրան 1864 թուին Մակար Սրբազանն էր ձեռ-  
նադրել Թիֆլիսում:

աջ կուռն էր և նրա հօր տան անսասան սիւնը: Երկուսը միասին նշանաւոր և յայտնի յարգանք վայելող քաջեր էին Ղազախի գաւառում, թուրք ու հայի մէջ. ամենքը նրանց խորհրդով գործ էին սկսում և անունով սպառնում իրենց հակառակորդին: Ղազախի յատնի աւազակներն անգամ վախենում էին նրանցից. ամեն ոք աշխատում էր այդ երկու հերոսների հետ բարեկամանալ, որովհետև, հակառակ դէպքում, անսլայման, առանց կասկածի, յաղթւում և սլատվում էին: Նրանք հին Եգանանց \*) ազգիցն էին: «Դիւրբողլուի, իգիթների ջինս են», այդպէս էին անւանում նրանց զիւղացիները: Բայց նրանք գրւում էին՝ «Աղաբովեանց Վարդան, Սարգիս»: Տէր-Սարգիսը, զեռ նորընծայ ժամանակ, Մատթէոս կաթողիկոսից Խաչ ու խառափիլօնով էր պարգևատրուել, իսկ Խաչաւորը, Դաղստանի պատերազմում իւր քաջութեան համար կուրծքը զարդարել էր քաջամարտիկ հերոսներին տրուող Գէորգեան երրորդ աստիճան շքանշանով ու խաչով, որի պատճառով էլ Խաչաւոր էր կոչւում: Զոյգ հերոսները միասին լծուած՝ մինը երիտասարդ, երկրորդն այրական հասակում, Բէհբուդեանի պատերազմների ժամանակ, թուրքաց, սլարսից և ... ձեռքից հալածուած հայերի պաշտպան և հովանաւոր էին հանդիսանում: Այս այն ժամանակն էր,

\*) Գիւղացիք ասում են, որ «Մեղիք-Եգանի ցեղից էին» նրանք:

երբ Ղազախի գաւառում զեռ Ֆիգիքական ուժն էր թագաւորում, եւրոպական զէնքի փոխանակ ստիական կոմբալագլուխ զագանակներն էին գործ տեսնում. այս այն ժամանակն էր, երբ ռուսաց Արծիւը իւր թևերի տակ զեռ նոր էր հովանաւորում անբախտ հայերին. Ղազախում զեռ այժմեան կառավարչական կազմակերպութիւնը՝ գաւառապետ, պըրիստաւներ, հաշտարար դատաւորներ, զիւղական այժմեան տանուտէրներ և այլն զեռ հաստատուած չէին, այլ միայն մի գաւառական ընդհանուր դատաւոր կար, որ տեղական ժողովրդից «Դիւանաբէգի» էր կոչւում: Դիւանաբէգու ժամանակ Ղազախն աւազականոց էր դարձել: Դիւանաբէգին շարունակ աւազակներ էր դատաքննում, բայց քչերին էր աքսորում. սա էլ իւր պատճառն ունէր, կաշառքը մութը տեղը լուսաւորում էր, նայելով թէ բողոքատուներն ու մեղադրուողները ինչ խելքի ու ուժի տէր էին...

Զ.

— Տղէք, էստեղ իրարից պէտք ա բաժանուենք. — ասաց տէր-Սարգիսն իւր ընկերներին մի ահուելի խիտ անտառի խորքում, որտեղից արիւնի հոտ էր փչում:

— Տէր-տէր, որ էրկու-էրկու գնանք լաւ կլի. մսուել չի՝ բէյրափիլ գուս կլթափուեն վնաս կտան...

— Զէ, էրկու-էրկու լաւ չի, զաչաղին պէտք ա

ամեն կողմից վրատանք, որ կրենանք շըշկլացնել. դէ՛հ, էլ խօսալու վախտ չի, ոնց որ ասըմ եմ, լսեցէք: Անգաճներդ ծինու պահեցէք, շվացնեմ թէ չէ իմացէք, որ գտել եմ նրանց:

— Որ գտնենք, մենք էլ շվացնենք:

— Անպատճառ:

— Շը՛շու. — մի քանի ըոպէից յետոյ մի խոււ շվոցի ձայն լսուեցաւ. երիտասարդները ժողովուեցան տէր-Սարգսի մօտ:

— Տղէք, թրւանքներիդ աղզօթի տուէք, գիւլլէքդ հազիր պահեցէք:

— Խո՛չ ա, տէր-տէր, ըրեացել են:

— Հա՛:

— Ո՞րտեղ են:

— Հրէ՛ հա՛, էն ծառի տակ քնոտած են:

— Աշխատենք հենց անել, որ չզարթնեն. — ասաց ընկերներից մէկը:

— Դէ՛հ, էլ ժամանակ մի կորցնէք, չորս ղուերնին կտրեցէք, թողաք ոչ գէնք առնեն:

Զինաթափ աւազակները սչքները բաց, լեզուները կապ մնացին յանկարծ: կտրիճները թո՛ւլ չը տուին նրանց, որ տեղներից շարժուեն:

— Ի՛նչմաղըմ քի «Իլան» բզա վուրաջաղ գը՛ր — (չասացի թէ օձը մեզ պիտի տա՛յ). — դողդողալով ասաց աւազակներից մէկը...

Տէր-Սարգսին յաջողուեց աւազակներին բռնել նոյն իսկ իրենց փախցրած գէօզալ սիրեկանի աչքի առաջ: Առաւօտ էր արդէն: Տէր-Սարգիսը ձեռ-

ները քամակներին թոկերով կապտեց և կորկում լծած անասունների պէս առաջ արաւ, քչեց Խաչ-թառակի մօտով, տարաւ. Լազախի թուրքաբնակ Սալահլու գիւղը, որտեղ նստում էր գաւառական ընդհանուր գատաւոր Իլւանբէգին, նրան յանձնեց որ բանտարկի և անյապաղ քննի գործը, իսկ ինքը վերադարձաւ գիւղը:

Է.

Բանտարկեալների լուրը տարածուեց ամբողջ Սալահլուի շրջանում: Ամեն կողմից թուրք աղալարներ ու տւազակապետներ ժողովուեցին Սալահլու: Ամբօխը կիտուեց Իլւանխանի առաջ. նրանք մանաւանդ նորեկները, հարց ու փորձ էին անում միմեանց՝ ո՞վքեր են բռնուածները:

— Շահնազարը, Մհամմադը... և այլն:

— Ս'հ, օհ, օհ, ափսոս իգիթներ. — ասում էին նրանք:

— Բռնուցն ո՞վ ա:

— Լալաքեանդցի Իլանը. — պատասխանում էին նրանց:

— Հա՛ սա՛:

— Հա՛:

— Հայը կարացել ա էտ իգիթներին բռնել:

— Էտ հայն ուրիշ հայ ա, քու տեհածներից չի:

— Ինքը բերեց:

— Հա՛:

— Քանի մարդով:

— Հինգ ռաշիդ տղերանցով:

— Ի՞նչպէս:

— Ձեռքներն ետևները կապտած...

— Բա ի՞նչ էք ասում էտ մասին:

— Սարմ ենք Ռիւանբէգուն տեսնենք:

— Հայերն ըստեղ էն:

— Ձէ, գնացին. — միքանիսն այդ հարցմունքներն էին տալիս իրար, իսկ միւս կողմում ազդեցութիւն ունեցող աղալարներն իրենց շրջապատել էին ամբոխով և մտածում էին, թէ ի՞նչպէս անեն, որ Ելանի ձեռից ազատեն բանտարկեալներին:

Այ ջամհաթ, մեզ պատիւ չի, որ մի հայ հինգ մարդ կորցնի, մենք էտ մասին պէտք ա հնարքներ գտնենք, ո՞վ ինչ կասի:

— Ոչ մի հնարքով Ելանի ձեռից մենք մեր հաւատակիցներին ազատել չենք կարող, միայն, մի հնարք կայ, էնա, որ Ռիւանբէգուն կաշառենք ու... մեզ հարկաւոր ա, որ միքանի աղսաղկալու մարդիկ ջոկենք՝ Ռիւանբէգու կուշտը զրկենք...

Թուրք աղալարները ականայտնի տեսնում էին բանտարկուած զիւցազունների սպազայ վտանգը... Նրանք ճանաչում էին Իլանին և շատ անգամ փորձել էին նրա ոյժը: Տէր-Սարգսին նրանք «Իլան» խածող անուան էին տուել և նախապաշարուած էին Նոյնպէս Խաչաւորի անունով... բայց այնուամենայնիւ ազգային նախանձը՝ մոլեռանդութիւնը, չէր թողնում նրանց անդարբեր գտնուել դէպի

իրենց բանտարկուած զիւցազունները:

Աղալարներն ամեն ջանք ու ճիգ թափում էին կաշառել Ռիւանբէգուն, որպէս զի ազատեն աւազակներին:

— Ես ձեզ շատ եմ սիրում, քան թէ հային. — ասում էր թուրք Ռիւանբէգին. — բայց նա, այս հինգ հոգու պատճառով, ձեզ, մինչև անգամ ինձ էլ, մեծ վնաս կտայ...

— Այ, վայ. — նախապաշարուելով զարմանում էին թուրքերը և իրենց մէջ ասում, «Ռիւանբէգին էլ ա վախենում հայիցը...»: Նրանք միքանի անգամ գնացին Ռիւանբէգու մօտ, խնդրեցին, մեծ-մեծ խոստումներ արին..., բայց Ռիւանբէգու վերջին խօսքն այս եղաւ «Տեսնենք, կը փորձենք»...

— Պէտք է ազատենք մերեղբայրներին. — ասում էին նրանք:

Այս թուրքերի սուրբ սովորութիւններից և գովելի յատկութիւններից մինն է, որ ինչ կուզէ լինի նեղն ընկած արիւնարբու թշնամուն անգամ օգնութեան կհասնեն, եթէ միայն նա թուրք է, իրենց ազգից, հաւատակից է, եթէ Իսլամի կրօնն է դաւանում: Այդպիսի դէպքում թուրքերի մէջ սէր ու միաբանութիւն է նկատում:

Ը.

Տէր-Սարգսի բողոքի և խիստ պահանջի համաձայն, Ռիւանբէգին գործի քննութիւնը շուտ նը-

շանակեց. նա ետստուլ ուղարկեց՝ հրաւիրեց Թէլլուին  
իւր եղբոր հետ միասին: Քոյր ու եղբայր ձի հե-  
ծան կէս գիշերին և մի թուրք չափարի հետ Խաչ-  
թառակ գիւղից ճանապարհ ընկան դէպի Սալահլու:

— Տէր-տէրն ու Թէլլուն Սալահլու գնացին,  
ձիաներդ թամբեցէք, ետրաղնիդ սարքեցէք ետե-  
ներից գնանք. — ասաց Խաչաւորը և երեք ժամ  
չանցած, վեց հայ ձիաւորներ ճանապարհ ընկան  
նոյնպէս դէպի Սալահլու:

— Տղեք, բան ա, ասուիլ չի, եթէ ընտեղ  
թուրքերը մի անպատիւ խօսք ասեն տէր-Սարգսին,  
էլ մտիկ չանէք, հայուլթիներդ շհանց տուէք,  
ամա երկար չսպասէք, թուրքերը սիրտ կառնեն  
ձեր թուլուլթեանից, թուր ու թւանք քաշեցէք...,  
ասաց Խաչաւորը:

Թ.

Տէր-Սարգսիսը ճանապարհին քրոջ հետ զբոյց էր  
անում, որի նիւթն էր յայտնի գործը: Նա Թէլլուին  
ճանօթացնում էր տեղական օրէնքների, դատաս-  
տանական գործերի, դատաւորի գեղճումների՝ ար-  
դարութեան, անարդարութեան և կաշառակերու-  
թեան հետ. սովորեցնում, զգուշացնում էր Թէլ-  
լուին, թէ ինչպէս և ինչ ձևով պէտք է պատաս-  
խանէ Գիւանբէգու չարանպատակ և մոլորամիտ  
հարց ու փորձերին, ցոյց տալով, որ ինքը անմիտ  
հայ կանանցից չէ: Քոյրը յանձն էր առնում կատա-

րել եղբոր ասածները և շարժուել նրա խոհեմ  
խորհուրդներով: Նրանք այդպէս խօսելով, խոր-  
հելով ու մտրակելով ձիերին, Գիտեանի և այժմեան  
Ղազախ քաղաքի մեծ հարթավայրով անցան դէպի  
վայր, մօտեցան Սալահլու թրքաբնակ գիւղին:

Պաւլօտեան արեգակը նոր էր ծագել և արեգ-  
նային թէք ճառագայթներով արդէն լուսաւորել  
էր Սալահլուի ճալի մեծ հարթավայրը. մեղմ դե-  
փիւռ էր փչում: Թուրք հովիւներն ու նախրչիներ-  
ը սարերից, եայլաղներից նոր «արան» էին քօչել,  
հօտ ու նախիրը սփռուած՝ արածում էին արօտ-  
ներում: Գիւղերից հեռու, խառնիխուռն կերպով  
վեր էին թողել քօչուր սայլերը, որոնց արանքնե-  
րում սարեցիները կրակներ էին վառել. այս և այն  
սայլի ու կրակների շուրջը, խմբուել էին բազմա-  
թիւ գամփուներ, որոնք դեռ առաւօտեան լակը  
չէին լափել բարկացած ժանգուժէն էին անում և  
հեռուից անցնող օտարին նկատելուն պէս՝ ահագին  
խմբերով իսկոյն հասնում և ուզում էին պատառո-  
տել: Թուրքերը քուրքներն ուսներին էին ձգել,  
«իբրուխները»\*) ջրով լցրել և այս ու այն փոսում  
պպզած իրենց ծէսն էին կատարում: Շատերն  
այդ ծէսը վերջացրած, քուրքները գետնի վրայ  
փռած «նամազ» էին անում: Նամազը մահմետա-

\*) Իբրուխը պղնձէ կամ չուգունի չայնիկի նման  
աման է, որ իւրաքանչիւր մահմետական լուացուելու  
համար է գործ ածում:

կանները սրտեռանդն աղօթքն է: Նրանք փռած շորի վրայ նախ կանգնում էին, ապա չոքում գետնին, վեր կենում, ձեռքները խորհրդաւոր հայեացքներով յետևներին, ականջներին ու գլխներին դրնում, «Ե՛ս Մըհամմադ» մըմնջում էին, կրկին ընկնում գետնին, երկրպագում, գլուխները գետնին տնկում, տտուզները ցից դնում, վրաբալիս, ձեռքի սփերը բաց տարածում դէպի վեր, ապա կանգնում մորուսները փայփայում «Սաֆրալլա՛հ» գոչում, երեսները դէպի արևմուտք, ձեռքները դէպի երկինք մեկնում և սաստիկ դողդողացնելով և մեծ երկիւղածութեամբ Մահմեդի անունով Ալլահից ողորմութիւն էին խնդրում ու շնորհակալութիւն անում: Իսկ կանայք այդ վաղուց վերջացրած, Աղստե գետի կողմից ջրով լի կուժներն ու սափորները շալակած, ջուր էին բերում լուացքի, կերակուրների և շների լափի հոգսը տեսնելու համար: Սալերից փոքր ինչ հեռու, միքանի թուրք երիտասարդներ մորթած ոչխարներն ուռենի ծառերից կախած՝ սուր դանակները ձեռներին, թեքները ետքաշած մինչև արմուճակները, մաշկում էին: Սարգիսն ու Թէլլու հարսը այդ ամենի միջով անցան համարձակ. ո՛չ մի շուն չը հաջեց նրանց վրայ, քոչուորները նոյնպէս ճանաչում էին Իլանին, ոտքի կանգնեցին և շներին չթողին, որ ձայն հանեն:

Ժ.

Սալահլու գիւղում, մի նահապետական սրահի առաջ, կիտուած էր թուրք ամբօխը: Նրա ուշադրութիւնը դարձաւ երկու ձիաւորների կողմը, որոնք ազատ ու համարձակ վարում էին իրենց ձիերը դէպի դատարան:

— Ո՛վքեր են էս եկողները. — ասացին թուրքերը: Ամենքը լուռ նայեցին եկողների կողմը:

— Մինն էն հայ քէշիշն ա, միւսն էլ իր քերը:

— Ի՞նչ ղոչաղ կինարմատ ա, կարծես թէ ըսկի հայի կնիկ չլի. — ասաց մէկը:

— Էնղա՛ղի աղբօր քերն էլ տհենց կլի էլի. — ասաց մի ուրիշը:

Ձիաւորները եկան և իսկոյն, միանուազ իջան ձիերից. ամենքը փափախները վերցնելով գըլուխ տուին քէշիշին, որը թուր ու դաբանչէն ֆարաջի տակից կախած, հպարտութեամբ սկսեց քայլել մի աղալար թուրքի հետ, իսկ Թէլլուն կանաչ-կարմիր քաթիպէն պատատելով նստեց մի թախտի վրայ: Իլանբէգու խանըմը դուրս եկաւ, բարևեց հայ գեղջիկուհուն, նստեց նրա կողքին ու սկսեց թուրքերէն լեզուով զրոյց անել նրա հետ: Թէլլուն թուրքերէն խօսում էր շատ ճարտար: Թուրքերը զարմացած, ականջ էին դնում հայ կնոջ թուրքերէն բարբառին և գովաբանում նրան: Տա-

նից դուրս եկաւ և Դիւանբէգին ու շտապով ողջունեց քէշիշ աղին:

Նրանք երեքով սկսեցին քայլել սրահի երկաթութեամբ: Այդ բանը մեծ ազդեցութիւն էր գործում թուրք ամբոխի վրայ. նրանք զարմանում էին, որ մի հայ կին և մարդ այնպէս համարձակ ասում, խօսում ու շրջում են Դիւանբէգու և նրա խանութի պէս բարձր անձնաւորութիւնների հետ, որոնց մասին տգէտները նախապաշարուած էին: Տէր-Սարգսի հետ շրջող աղալարն ու Դիւանբէգին, ըստ երևոյթին, ցոյց էին տալիս, թէ իրենք համաձայն են աւագակների պատժուելուն, բայց միւսնոյն ժամանակ, կամենում էին գումար առաջարկել Իլանին և հաշտութիւն կայացնել: Երևի նրանք այդ մասին խօսք մէջ բերին, որ տէր-Սարգսիսը յանկարծ կանգ առաւ, ձեռքը թրի դաստի վրայ դրեց, խոժոռած հայեացքով նայեց նրանց երեսին և ահարկու ձայնով արտասանեց. «օլմանգ» — «անկարելի է» բացասականը:

Տէր-Սարգսիսը ծանօթանալով գործի դրութեան հետ, նկատեց, որ Դիւանբէգին փափկել է մամոնայի ազդեցութեամբ և հակուել է աւելի դէպի իւր հաւատակից աղալարները, որոնք մտադիր էին մինչև անգամ Ղուրանի և Մահմեդի պատուէրի հակառակ սուտ երդուել, միայն թէ ազատէին աւագակ դիւցազուններին մի հայի ճանկերից: Վերջապէս դատարան մտաւ Դիւանբէգին, որին հետևեց թուրք ամբոխը: Իլանը մօտեցաւ քրոջը,

նրա ականջում մի քանի խօսք ասաց, մտան դատարան և նստեցին դատաւորի մօտ:

Ատեանը բացուեցաւ մի ցեխապատ, կիսադեանափոր, նեղ ու կեղտոտ սենեակում, ուր ներկայ էին գաւառի բոլոր թուրք աղալարները: Դատաւորն ու աղալարները մահմեդականի խորդախութեամբ բանտարկեալներին զանազան ձևի ըզզեստներ էին հազցրել և Թէլլուից ծածուկ կանչել դատարան և խուռն բազմութեան մէջ թագցրել էին, որպէս զի Թէլլուն չը ճանաչի նրանց: Սակայն, այդ խորամանկութեան մէջ նրանք յաջողութիւն չունեցան. Թէլլուն վաղուց ճանաչում էր նրանց:

Նեղ սենեակի երկարութեամբ դրուած երկու թախտերի վրայ ծալապատիկ նստոտել էին հանդիսատեսները, որոնցից կարմրամորուս հաջինները ղալեանների և չիբուխների պտուկները բերանները կոխած, ժանգոտած ալուքներով ամուր հուպ էին տուել և ղնջուելով անդադար քաշում, սենեակը ծխով լցնում էին: Այդտեղ ամեն տեսակ անքաղաքավարի բան նկատուում էր բացի լաւից: Մի քանիսը փափախները քթուում էին, միւսները կողքները քորում. մէկն անկարգ պպզած էր, միւսը ոտը ոտովը ձգած յենուած էր սիւնի կամ թախտի վրայ և այլն: Այդ միջոցին, գլուխը սպիտակ կտաւով փաթաթած մի մօլլա իւր մի քանի մօնթերի հետ ղուրանը ձեռքին ներս մտաւ թէ չէ,

Մահմեդի բոլոր հլու հպատակները ոտքի կանգնեցին:

Իլևանբէգին, որ թախտի գլխին՝ ամենապատուաւոր տեղն էր գրաւում, նախ Թէլլուին կանչեց խօսեցնելու: Մուլլան կրկին դուրս գնաց:

— Ա՛քիր, պատմիր գանգատդ. — ասաց Իլևանբէգին: Թէլլուն թուրքերէն լեզուով պատմեց ամենը:

— Հրմի դու էս ջամհաթի մէջ քու դիւշմաններիդ կճնանչես:

— Ո՞նց չեմ ճնանչիլ նրանց, որոնց ես իմ ձեռովս կերակրել եմ:

— Կերակրել ես:

— Հա՛, կերակրել եմ:

— Աւագակներին ես կերակրել. — ասաց Իլևանբէգին, օգտուել կամենալով գեղջկուհու ասածին:

— Չէ, ես աւագակներ չեմ կերակրել. երոր քաղցած եկել են մեր տուն՝ հաց եմ տուել, ուղորմացել եմ նրանց:

— Ուրեմն նամարդները, ձեր դոստն են լել, աղուհաց են կերել տանդ և յետոյ մարդուդ սպանել: Լա՛ւ. դէ էն աւագակները, որոնց դու մեղադրում ես, էս ջամհաթի մէջ են, թէ կարաս, ճրնանչիր, դո՛ւս քաշիր նրանց:

— Մինը սա՛ ա, անրմն էլ Շահնազար ա, տեհէք, էս թուրը սրա վրայ կոտրեցի, ամա ափսո՛ս, որ իրան սաղ թողեցի. — հպարտութեամբ ա-

սաց Թէլլուն և քեաթիպու տակից հանեց աւագակ Շահնազարի կոտրուած սուրը, ցոյց տուեց ամբօխին, դրեց Իլևանբէգու առաջ, բռնեց թշնամու օձիքից և դուրս քաշեց նրան: Նա կրկին, հպարտ հայեացքով, նայեց դէս ու դէն և յանկարծ առիւծի պէս զրարնկնելով, մէկի և միւսի ձեռքից քաշելով՝ գոչեց.

— Ա՛յ վրատրկուսն ու իրեքը. սրանք ին, որ առաջի անգամ թուր բացրացրին Մարգիրոսի գլխին: Ի՞նչ ես աղուհսի պէս կուչ եկել ու մարդկերանց քամակը պրծել, դո՛ւս արի էստեղ. — քաշեց և չորրորդին, հինգերորդին և սկսեց արհամարհել, նախատել ու ասել.

— Ամօթ էլ չէք քաշում, այսօրու շորեր էք կեցել. թնչ է, ուզում էք Թէլլուին խաբել: Կէս գիշերին եարաղըմբ բազամիշ լած՝ ամեն մինդ մի քածի խաթրու մի մի ազրէիլ իք դառել, տանս աղուհաց կերաք ու մարդիս սպանեցիք, թնչ էք մկան ծակի ման գալի, որ նի՛ մտնէք. գորտեր, սուս միք անիլ, պատասխան տուէք:

Թուրքերը լուութեամբ լսում էին հայ կնոջը: Իսկ տէր-Սարգիսը թուխ բեխերի տակ ուրախութունից ծիծաղում, ժպտում էր. աչք ու ունքով անելով սիրտ էր տալիս, որ որքան կարող է համարձակ խօսի:

— Դո՛ւք էք էտ գէօզալի (գեղեցկի) աղուհացակեր թշնամիքը. — կանգնած աւագակներին հարցրեց Իլևանբէգին:

— Ամենևին մենք չենք, մեր տեղը ամենքը կերգուեն, որ անմեղ ենք էտ սպանութեան մէջ.  
— կմկմալով պատասխանեցին աւազակները:

Թէլլուն լուռ նստած ժպտում էր ուրացողների վրայ և խիստ արհամարհանք տածում զէպի նրանց:

— Ուրեմն դուք մարդասպաններ էք:

— Ամենևին, մեր տեղը զամուսններ (երաշխաւորներ) ունենք:

— Այ ջամհադ, ձեզանից ո՞վ կ'երդուի սրանց տեղ. — ասաց Դիւանբէգին, զառնալով ամբոխին:

— Մենք կ'երդուենք. — քսանից աւելի աղաներ առաջ կանգնեցին, որոնք շարունակ աչքով էին անում Դիւանբէգուն: Դիւանբէգին քննութիւնն առ ժամանակ ընդհատեց, մի խումբ աղալարների հետ դուրս գնաց բազը, և սկսեց խորհրդաւոր կերպով խօսել նրանց հետ: Իսկ տէր-Սարգիսը վրէժխնդրութեան հայեացքով նայեց նրանց կողմը և դառնալով ասաց քրոջը:

— Թէլլու, ճամպին մոռացել եմ քե մի բան պահ տալու. դու խու լսում, տենըմ ես էտ քչիւր-չոցը, աղալարնին Դիւանբէգու ըռէխը ոսկր են գցել, նա կրծիլու ա տանըմ... իմացար, թէ բանն ընչըմն ա. ուզըմ են սուտ որդըմ ուտել. ամա հէնց որ մոլլէն դատարան մտնի ու զուրանն իր փաթաթանով սեղանի վրայ դնի. դու մօտացիր, բէյրափիլ վե կալ և դուս շարտի ու ասա, ես աւազակ մարդկանց որդըմին չեմ հըւատըմ... Թէլլու

ջան, ես գիդամ, որ դու զո՞չաղ ես, ամա էս ա քե պահ եմ տալի վախես ոչ, շարտի, եթէ դու էտ քաջութիւնը աղալորդ աչքի զաքին չանես, տես, էս թուրը, ջիգարդանիդ մէջ մի անգամ կը պտտեմ, տեղդ ու տեղդ կթողեմ ու մենակ տուն կը դառնամ...

— Այքի լիս աղպէր ջան, դու որ ինձ ասես թէ՛ գնա քարնըվեր դվեր ընկի, գնա ջուրն ընկի խեղտուի, գիդենաս, որ Թէլլուդ իրեսը ետ չի թէքիլ, ուր մնաց, թէ դիւշմանների զաքին զուրանը դուս շարտելուց վախենայ՝ քե պէս ազրէլիլ աղպէրը քամակիս կաղնած վախտը... ումնից դեմ վախենալ. պատրաստ եմ հրամանդ կատարելու... Թէլլուն պարծենալով պատասխանեց եղբօրը, իսկ նա ուրախանալով բրոջ խօսքերի վրայ, քաջալերեց կրկին:

— Հն, քիրս, զո՞չաղ կաց, թուրք կնանիքը կաղնած մտիկ են տալու, ցոյց տու նրանց, որ դու վախլուկ հայ կնանոնցից չես: Ինձ էլ էստեղ շատերն են ձնանչըմ թո՞ղ իմանան, որ դու իմ քիւրն ես, գիլուբողլուի ջինա ես... Դէհ, Թէլլու ջան, պատրաստ, հնգիր կաց. Դիւանբէգին տուն մտաւ, հրէ մոլլէն էլ մոնթերը հըւաքած գալիս ա: Հէնց Մհամեդի անըմը տայ թէ չէ, առ ու շարտի:

— Անպատճառ, տհենց կանեմ, ոնց որ դու հրամայեցիր, ասաց Թէլլուն իւր վերջին հաւատարիմ խօսքը և միասին մտան դատարան, ուր մօտ քսան մարդ առաջ կանգնած, երեսները դէպի արևմուտք շրջած՝ պատրաստուում էին երգուելու:

— Եւ Մհաճմաղ, փէյղամբար. — սկսեց մուլ-  
լէն, բայց Թէլլուն ընդհատեց նրան:

— Ե՛ս աւազակների որդւմին հրւատրմ չեմ.  
— ասաց ու առիւծի պէս ղուրանը յափշտակեց սե-  
ղանի վրայից և դուրս շարտեց:


— Վրէժ, վրէժխնդրութիւն յանուն Իսլամի.  
— գոռաց մուլլէն. ամբոխը շփոթուեց, չէր իմանում  
ինչ անի: Նրանք ճանաչում, գիտէին Իլանին և  
նրա թիկնապահ քաջ Խաչաւորին, Ղահրամանին,  
Սարհատի տղին, Վանէսին, որոնք Տէր-Սարգսի կրու-  
ներն էին Ղազախի հայ գիւղերում: Նրանք՝ թուր-  
քերը, գիտէին, որ եթէ տէր-Սարգսին համարձա-  
կուեն մի կծու խօսք անգամ ասել, նրա քաջերն  
իրենց գիւղերը պիտի կրակեն, ուստի լուռ մնացին  
շուարուած:

Մուլլէն շարունակ վրէժխնդրութիւն էր գո-  
ռում, բայց Իլանը իր ահարկու գոռոցով որոտաց  
ուժգին և լռեցրեց մուլլին: Խանգարեց նրանց բոլոր  
մտադրութիւնները, բռնեց անարդար Դիւանբէգու  
օձիքից, թափ-թափ արաւ ու ասաց՝ «արդարու-  
թիւն» եւ պահանջում և ո՛չ «կաշառակերութիւն»:

Եթէ գու աւազակներին շուտով չես աքսորիլ,  
դու ինքդ կ'աքսորուես նրանց տեղ. — սպառնալի  
կերպով ասաց Իլանն և իսկոյն ձի հեծան քոյր ու  
եղբայր և մեկնեցին այնտեղից: Այդ դէպքը մեծ ազ-  
դեցութիւն գործեց ամենքի վրայ, որոնցից շատերը  
գովաբանում էին հայի արու և իգի չտեսնուած  
քաջութիւնն ու վստահութիւնը:

Տէր-Սարգիսը Դիւանբէգից անհապաղ բողոքեց  
ուր հարկն էր և նա խիստ հրաման ստանալով,  
սարսափած կանչեց աղալարներին և յետ տալով  
ստացած կաշառքները, խնդրեց, որ քննութեան  
ժամանակ իրեն պաշտպանեն. ապա երկու մարդ  
պատրաստեց և ուղարկեց Իլանի մօտ, որ ներողու-  
թիւն խնդրեն նրան:

Անմիջապէս սկսուեց գործի քննութիւնը և  
աւազակները 12 տարով սիբիր աքսորուեցին: Դիւան-  
բէգին նոր ճանանչեց թէ ո՞վ է Իլանը, սկսեց  
խաթրն առնել, բարեկամանալ, բայց Իլանն իր ա-  
սածի տէրն էր, նրան վռնդել տուեց շուտով:  
Ղազախի ժողովրդի դիւցազն քահանան սրանից 28  
տարի առաջ կնքեց իւր մահկանացուն և ամփոփուեց  
Լալի գիւղի հանդի ձորակի գլխին գտնուող հայոց  
հանգստարանում: Այն օրից մինչև այսօր շատ թուրք  
ուհայ զեռ յիշում են տէր-Սարգսին, իսկ Թէլլուն  
68 տարեկան հասակում զեռ կենդանի է, թէև  
պառաւ, բայց նոյն հոգու յատկութիւնը պահել է  
մինչև օրս. նա այժմ էլ աշխատում է ընտանեկան  
գործերի մէջ. նա Համզի ու բուզխանի եալաղներ-  
րում էլի սիրտ է տալիս հովիւներին, որ դիմադրեն  
գող աւազակներին — հայի թշնամիներին:



Handwritten text in a cursive script, likely a historical document or letter. The text is written in a dark ink and is somewhat faded and difficult to read due to the age of the paper and the style of the handwriting.

Handwritten text in a cursive script, continuing from the top section. The text is dense and covers most of the page's width. It appears to be a formal or official document, possibly a record or a report.



29 MAY 2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0552029

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

*և՛ մինչև փետրուարի վերջը այս կը տեսնի*

ՎՈՐԱՅՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԻ

Բ. ԳԻՐԳՐ



ԳԻՆՆ Է 60 ԿՈՊԵԿ

2948